ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ
ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիրն իրականացվել է ՀՀ Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության ֆինանսական աջակցությամբ

Ծրագրի աշխատակազմ՝

Զարուհի Լավչյան, Աննա Եղոյան

Խմբագրական խորհուրդ՝

Զարուհի Լավչյան
(Թրեյներների ազգային թիմ ՀԿ)

Անահիտ Մինասյան
(Թրեյներների ազգային թիմ ՀԿ)

Արման Ուղումյան
(Սոցիալական զարգացման և հանրային քաղաքականության կենտրոն ՀԿ)

Արթուր Նաջարյան
(Գյումրու Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ)

Աննա Եղոյան
(Գյումրու Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ)

Կարինե Ստեփանյան
(ԿԱԶԱ Շվեյցարական մարդասիրական հիմնադրամ)

Արեգ Թադեւոսյան
(Միջմշակութային ուսումնասիրությունների, ուսուցման եւ երկխոսության միջազգային կենտրոն ՀԿ)

Բովանդակություն

Օգտագործված հիմնական հապավումները 4
Ներածություն 5
Երիտասարդական աշխատանքը Հայաստանում այսօր 8
Երիտասարդական աշխատանքի սահմանումն ու նկարագրությունը միջազգային մակարդակում 12
Երիտասարդական աշխատող: գործառույթները և ունակությունները 19
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 23
Երիտասարդական աշխատանքի ոլորտի բաղկացուցիչ տարրերը 24
Երիտասարդական աշխատանքի ընդհանուր նկարագրություն 27
Երիտասարդական աշխատանքի հնարավոր նպատակները Հայաստանում 29
Երիտասարդական աշխատանքի սկզբունքներն ու արժեքները 30
Երիտասարդական աշխատանքի թիրախները 31
Երիտասարդական աշխատանքի հիմնական ձևաչափերը 34
Երիտասարդական աշխատողների գործառույթներն ու ունակությունները 36
Երիտասարդական աշխատողների պատրաստման համակարգեր 37
Երիտասարդական աշխատողը աշխատաշուկայում 44
ՀՀ-ում երիտասարդական աշխատանքի զարգացման խթանման համար անհրաժեշտ նախապայմանները և անհրաժեշտ գործողությունները 45
Օգտագործված աղբյուրները 48
ՀԱՎԵԼՎԱԾ 50
Երիտասարդական աշխատանքի միջազգային փորձը: Երկրների փորձի ներկայացում 50
Առաջին կլոր սեղանի հաշվետվություն 96
Երկրորդ կլոր սեղանի հաշվետվություն 109
Միջազգային փորձագետների այցելություններ 116

Օգտագործված հիմնական հապավումները

ԵԱ	Երիտասարդական աշխատանք
եա	Երիտասարդական աշխատող
ԵԽ	Եվրախորհուրդ
ԵՄ	Եվրամիություն
ՈՖԿ	Ոչ ֆորմալ կրթություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն

Ներածություն

Ծրագրի անհրաժեշտությունն ու ակտուալությունը

Վերջին 3 տասնամյակների ընթացքում աշխարհի տարբեր երկրներում հասարակական և համայնքային բարելավման հարցերում շատ մեծ խթան է հանդիսանում երիտասարդական աշխատանքը: Հայաստանի անկախացումից հետո հասարակական երիտասարդական մի շարք կազմակերպություններ սկսել են իրականացնել երիտասարդական աշխատանք: Այսօր ՀՀ-ում երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ կայացմանը խոչընդոտում են մի շարք խնդիրներ, ինչպիսիք են.

- Հասարակության շրջանում երիտասարդական աշխատանքի վերաբերյալ իրազեկության պակասը, ինչի արդյունքում թերագնահատվում է երիտասարդական աշխատանքի ողջ պոտենցիալը,
- Երիտասարդական աշխատանքի վերաբերյալ մեթոդաբանական և կրթական նյութերի ու ծրագրերի բացակայությունը և որպես հետևանք՝ երիտասարդական աշխատանքի ճանաչելիության բացակայությունը,
- Երիտասարդական աշխատանքի խթանման պետական հայեցակարգի կամ ոլորտի ուղորդված զարգացման որևէ ծրագրի բացակայությունը,
- Տեղեկատվություն պակաս – շատ երիտասարդներ այսօր ունեն մի շարք կարիքներ (որակյալ ժամանց, ուսուցողական հնարավորություններ, սոցիալական նշանակության խնդիրներ), որոնց շուրջ տարբեր տեսակի միջոցառումներ արդեն գոյություն ունեն, սակայն երիտասարդները հաճախ պարզապես պատկերացում չունեն դրանց մասնակցելու հնարավորությունների մասին, •
- Երիտասադական աշխատանքի հասանելիություն – երիատասարդական ոլորտում աշխատող կառույցների մեծ մասը չի աշխատում երիտասարդների խոցելի խմբերի հետ (գյուղական համայնքի երիտասարդություն, օրենքի հետ խնդիրներ ունեցող երիտասարդներ, հաշմանդամներ, փախստականներ):

Ոլորտը Հայաստանում այսօր բավականին խոցելի է, քանի որ պետական մակարդակում դեռ չկա հայեցակարգային զարգացման տեսլական, որը թույլ կտա ապահովել ոլորտի շարունակական զարգացումը և ուժեղացումը, որակի ապահովմանը, հաջորդ սերունդների համար երիտասարդական աշխատողների կրթությունը և վերապատրաստումը:

Երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալիզացիան Հայաստանում ենթադրում է ոլորտի երկարաժամկետ և համակարգված զարգացումը, նոր սերնդի մասնագետներ պատրաստելու համար կրթական ծրագրերի և երիտասարդական աշխատանքի որակի ապահովման մեխանիզմների ստեղծումը: Արդյունքում՝ գրագետ

երիտասարդական աշխատանքը կխթանի երիտասարդների անհատական և մասնագիտական զարգացումը, նրանց ակտիվ ներգրավվածությունը հասարակական հարցերում: Երիտասարդական աշխատանքի զարգացման վերաբերյալ պետական ծրագրի առկայությունը կմիավորի երիտասարդներին աջակցելու առանձին կազմակերպությունների ջանքերը, կխթանի երիտասարդների ակտիվ մասնակցությունը համայնքային հարցերում, նրանց անհատական զարգացումը, կնպաստի երիտասարդական աշխատանքի ճանաչելիությանը:

Ծրագրի նպատակը և խնդիրները

Երիտասարդական աշխատանքի ինստիտուտի կայացման և զարգացման նպատակով Թրեյներների ազգային թիմ ՀԿ-ը (ԹԱԹ), ԿԱԶԱ Շվեյցարական մարդասիրական հիմնադրամը, Միջմշակութային ուսումնասիրությունների, ուսուցման և երկխոսության միջազգային կենտրոնը, Գյումրու Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնը ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ իրականացվում է <<Երիտասարդական աշխատանքը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ>> ծրագիրը:

Ծրագրի հիմնական **նպատակն** էր խթանել Հայաստանում երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ զարգացումը, այս ոլորտում առկա գիտելիքների և կուտակված հմտությունների հիման վրա, հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը:

Ծրագրի կառուցվածքն ու բաղադրիչները

Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- **Մեթոդական կլոր սեղան**, որի ընթացքում ներկայացվեցին ոլորտի ձեռքբերումները, խոչընդոտներն ու մարտահրավերները, ինչպես նաև մշակվեց միջազգային փորձի ուսումնասիրության տիրույթը, օրակարգը և ծրագիրը: Կլոր սեղանի մասնակիցները ոլորտում տարիների փորձ ունեցող ակտիվ երիտասարդական աշխատառնողեր էին, հկ-ղեկավարներ, տարբեր թիրախային խմբեր ներկայացնող երիտասարդակն մասնագետներ:
- **Միջազգային փորձի ուսումնասիրություն** (Desk Research). Այս փուլում տեղի փորձագետները ուսումնասիրեցին երիտասարդական աշխատանքի ավանդույթները և զարգացման ծրագրերը տարբեր երկրներում: Նախածեռ կազմված հարցարանի հիման վրա, փորձագետները ուսումնասիրեցին ԵԱ եվրոպայի և ասիայի տարբեր երկրներում:
- **Միջազգային փորձագետների այցեր**. ուսումնասիրություններին տարբեր փուլերում /ուսումնասիրությունների ծրագրման, ընթացիկ, ափմփոփիչ/

մասնակցեցին միջազգային փորձագետներ Վրաստանից /Գիորգի Կակուլիա – ոլորտի փորձագետ, ուսուցանող, Վրաստանում ԵԱ և երիտասարդական քաղաքականության մշակման աշխատանքային խմբի անդամ/, Ռուսաստանի Դաշնությունից /Աննա Ֆելդման – ոլորտի փորձագետ, Օլիմպիական խաղերի և Ունիվեսիադայի կամավորականների նախապատրաստման ծրագրի համակարգող, ուսուցանող, ՌԴ ուսանողական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների ծրագրի համակարգող/, Ավստրիայից /Սաբինե Կլոքեր – ոլորտի փորձագետ, ուսուցանող, գյուղաբնակ երիտասարդության հարցերով զբաղվող կառույցների ղեկավար/:

- **Զեկույցի պատրաստում**: **Առաջարկությունների մշակում:** Ուսումնասիրությունների արդյունքների ամփոփման հիման վրա ստեղծվել է սույն զեկույցը, որում ներկայացված են Հայաստանում երիտասարդական աշխատանքի մարտահրավերները և ինստիտուցիոնալ զրագացման հեռանկարները:
- **Ամփոփիչ մեթոդական կլոր սեղան,** որի ընթացքում ծրագրում ներգրավված մասնակիցներին ներկայացվեցին իրականացված ուսումնասիրությունների արդյունքները զեկույցի տեսքով և քննարկվեցին երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ զարգացման հնարավոր հեռանկարները , առաջարկները, ոլորտի զարգացման հետագա քայլերը: Կլոր սեղանին մասնակցում էին միջազգային ուսումնասիրությունն իրականացնող մասնագետները, պետական և հասարակակակակ կառույցների փորձագետներ, հատուկ կարիքներով խմբերի հետ աշխատող հկ անդամները

Ամփոփիչ զեկույցը

Ծրագրի բոլոր բաղադրիչների համադրումը ու միայն նման բազմակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն տվեց ավարտական զեկույցում արտացոլել և՛ երիտասարդական աշխատանքի ոլորտում գործող մասնագետների կարծիքները, և՛ աշխարհի տարբեր երկրներում եղած ԵԱ հայեցակարգային փաստաթղթերը, օրենքները և օրենսդրական ակտերը, կրթական համակարգերը, տարբեր երկրների լավագույն փորձը,: Ուստի սույն զեկույցի մեջ արտացոլված առաջարկությունները այս համակողմանի ուսումնասիրությունների արդյունք են:

Զեկույցում ամենակարևորը, փորձ է արվել ամփոփել ՀՀ-ում ոլորտի իրավիճակի ընկալումը և բոլոր վերլուծությունեիրի վրա հիմնվելով՝ առաջկել հստակ հետագա քայլեր ոլորտի բարելավման համար:

Երիտասարդական աշխատանքը Հայաստանում այսօր

Երիտասարդների հետ աշխատանքի ավանդույթնը ՀՀ իրականության մեջ նոր չէ: Այն գործել է նաև խորհրդային Հայաստանի տարիներին, ծառայելով որոշակի հստակ նպատակի և երիտասարդներին դաստիարակելով ժամանակին հոգուն հարիր կերպով: Անկախությունից հետո հասարակական տարբեր այլ փոխակերպումների հետ միասին իր փոփոխությունններն է կրել և այսօր ունի իր յուրահատուկ նկարագրությունը: Երիտասարդների հետ տարվող աշխատանքը տարբեր ոլորտների խաչմերուկում է, և կան բազմաթիվ պետկան մարմիններ, պետական, մունիցիպալ և հասարակական կառույցներ, որոնք զբաղվում են երտասարդական հիմնահարցերով: Երիտասարդներով զբաղվում են նախարարություններ /սպորտի և երիտասարդության, կրթության և գիտության, սոցիալական ապահովության, սփյուռքի/, մարզպետարանների և քաղաքապետարանների համապատասխան բաժիններ, հասարակակական կազմակերպություններ: Հայաստանում հատկապես վերջին տարիներին հսարակակամ սեկտորի ակտիվացմանը զուգահռ ակտիվացան նաև երիտասարդական միավորումները, և փաստացի դարձան երիտասարդների հետ, երիտասարդենրի համար և երիտասարդների միջոցով միջոցառումների և աշխատաքնի կատարման հիմնական դերակատարները, ունենալ համապատասխան ֆինանսառեսուրսային բազա, ունակություններ, որոշակի փորձառություն և աշխատանքի ոգեշչվածություն: Ուստի, եթե խորհրդային տարիներին երիտասարդական աշխատանա իրականացնող կառույցները կենտրոնացված ու հանրային կառույցներն էին, հիմա այդ աշխատանքը մեծամասամբ հասարակական սեկտորին է պատկանում: Սա իհարկե ունի թե՛ դրական/ ոլորտի անկախություն, ազատություն քաղաքականացումներից, առավել ճկունություն, մասնակցակենտրոնություն, ներառում, և այլն/ , թե՛ բացասական հետևանքներ /ռազմավարական մտածողության պակաս, պետական աջակցության և համակարգման պակաս, որակի չափանիշների անկում, հստակ պետական շահերի և քաղաքական առաջնայնությունների հետ կապի բացակայություն, օտար երկրներից ֆինանսական աջակցության և ազդեցության մեծացում, մանիպուլացիաներ, սակավ հնարավորություններով երիտասարդների հետ թիրախված աշխատանքի թուլություն, և այլն/, սակայն բացել է նաև հետաքրքրիր ու բազմաթիվ հնարավորություններ՝ ուժերը առավելապես մեկտեղելու և մոբիլիզացնելու:

Մասնագետների և երիտասարդաների շարժունության ու հատկապես հատկապես դեպի եվրոպական երկրներ և ԱՄՆ ուսուցողական շարժունության մեծացման արդյունքում, երիտասարդական աշխատանքի առավել եվրոպական ու ամերիկյան դպրոցներն են ինտեգրվել հկ-ների աշխատանքի մեթոդաբանական հիմքերում և աշխատանքի մասին պատկերացումներում, ինչը արտացոլվում է նաև առկա

ծրագրերում: Հայաստանյան հասարակական դաշտում հաճախ կարելի է տեսնել հետևյալ սահմանումները՝

<<Երիտասարդների կարիքների վրա հիմնված, երիտասարդների հետ միասին և/կամ երիտասարդների համար ֆորմալ կրթության սահմաններից դուրս իրականացվող համակարգված գործընթաց, որն ուղղված է հասարակության մեջ անհատի սոցիալական ինտեգրմանը և նրա՝ որպես գիտակից ու ակտիվ քաղաքացի կայացմանը>>:

<<Երիտասարդական աշխատանքը տարբեր մակարդակներում երիտասարդների հետ աշխատելու միջոց է: Երիտասարդների համար եւ նրանց հետ իրականացվող հասարակական աշխատանքներն են, որոնք օգնում են նրանց ավելի լավ հասկանալու իրենց եւ իրենց շրջապատող աշխարհը, գտնելու իրենց իրական նպատակներն ու հասնելու դրանց իրագործմանը, ներդաշնակ կերոպով զարգացնելու իրենց ֆիզիկական, մտավոր, զգայական եւ հեգեւոր ներուժը եւ գտնելու դեպի ներդաշնակությունն ու երջանկությունը տանող իրենց ուղին>>:

<<Երիտասարդական աշխատանքը դա երիտասարդների սոցիալիզացմանը և ինքնության ձևավորմանն ուղղված աշխատանքների ամբողջությունն է՝ ի թիվս այլոց ներառելով ժամանցի կազմակերպումը, ուղղորդումը, խորհրդատվությունը, աջակցությունը հոբիների և նախասիրությունների հարցում և ոչ-ֆորմալ ուսուցման միջոցով՝ ֆորմալ կրթության և հանրային այլ ինստիտուտների բացերի ծածկումը, որն անհրաժեշտ է վերը նշված խնդիրներին հասնելու համար>>:

<<Երիտասարդների, երիտասարդական խմբերի հետ տարվող աշխատանք կամ աշխատանք, որն ուղղված է երիտասարդության հիմնախնդիրների լուծմանը: Կազմակերպված և համակարգված աշխատանք, ինչը (հավասար և հասանելի) պայմաններ և հնարավորություններ է ստեղծում երիտասարդների համար՝ իրենց ազատ ցանկությամբ, զբաղվել զարգացնող գործունեությամբ՝ ընտանիքից, աստիճանական կրթական համակարգից և աշխատանքից դուրս կամ դրանց զուգահեռ>>:

<<Երիտասարդական աշխատանքը կազմակերպված և պարբերականորեն իրականացվող երիտասարդներին ուղղված և/կամ երիտասարդների մասնակցությամբ գործողությունների և միջոցառումների համադրություն է, որն առաջնային կամ միջնորդավորված նպատակը երիտասարդների տարբեր մակարդակներում աճի և զարգացման համար համապատասխան միջավայրի ստեղծումն է, նրանց զարգացման տարբեր փուլերում խթանումն ու առկա արդյունքների ամրապնդումն է>>:

<<Երիտասարդական աշխատանքը դա բազմակողմանի, արդյունավետ աշխատանքն է առանձին երիտասարդների և երիտասարդական խմբերի հետ, երբ պրակտիկ աշխատանքնում մասնագետը կարողանում է միավորել իր գիտելիքներն ու հմտությունները և ստեղծում է անձի զարգացումը խթանող հետաքրքիր միջավայր>>:

<<Երիտասարդական աշխատանքը երիտասարդների կյանքի որակի, նրանց ֆորմալ և ոչ-ֆորմալ կրթությանը նպաստող գործունեություն է, որը նպատակ ունի նպաստել երիտասարդների բարեկեցիկ կյանքին, ինքնահաստատմանը և ինքնուսուցմանը>>:

Այս սահմանումներից յուրաքանչյուրը վալիդ սահմանումներ են: Դրանք հիմնված են ոլորտի մասին միջազգային փորձի, սեփականա գործնական աշխատանքի, առկա գրականության վրա և լավ հիմք են տալիս ԵԱ համապարփակ ու հայաստանյան իրականությանը հարիր սահմանման մշակման:

Հայաստանում ոլորտի կայացման և զարգացման մարտահրավերները

Ծրագրի շրջանակներում փորձ արվեց ի հայտ բերել և քննարկել այն դժվարությունները, որոնք ոլորտի զարգացումը դանդաղեցնում են: Փորձագետների հետ քննարկումների արդյունքում ի հայտ եկան հիմնական մի քանի պատճառներ, որոնք սակայն հետևողական աշխատանքի արդյունքում հնարավոր է փոփոխել:

- Երիտասարդական աշխատանքի վերաբերյալ պետական հայեցակարգի բացակայությունը, համապատասխան օրենսդրական դաշտի բացակայություն/անկատարություն
- Պետական մարմինների և ընդհանուր առմամբ հանրության մոտ ոլորտի մասին թույլ և թյուր պատկերացում, Երիտասարդական աշխատանքի ճանաչման ցածր աստիճանը
- ՏԻՄ-երի կողմից ոլորտի թերագնահատման առկայություն, ինչը հանգեցնում է իր ուժերի նկատմամբ ոչ վստահ ու համայնքի կյանքին անտարբեր կամ թույլ մասնակցայնություն հանդես բերող երիտասարդության առաջացման:
- Սահմանվածության ու կանոնակարգվածության պակաս (անգամ միասնական պատկերացում ձևակերպված չէ փորձագիտական շրջանակներում),ինչը ոլորտում հաճախ ոչ ցանկալի և քաոտիկ ինքնագործունեության տեղիք է տալիս, և/կամ ավելորդ ջանքերի ու ռեսուրսների անարդյունավետ ծախսման պատճառ դառնում:
- Երիտասարդական աշխատանքի ինստիտուտի բացակայությունը
- Համապատասխան ուսուցողական համակարգերի, ծրագրերի և ուսումնական նյութերի բացակայությունը

- Երիտասարդական աշխատանքի դաշտի հիմնական ռազամավարական նպատակների անորոշությունը
- Երիտասարդական աշխատանքի արդի ցածր որակը եւ դրա ապահովման մեխանիզմների բացակայությունը
- ԵԱ ենթակառուցվածքի/հարմարությունների բացակայություն/ խիստ անբավարարվածություն (երիտասարդական կենտրոններ/ակումբներ և այլն), Մարզային փոքր համայնքներում “ենթակառուցվածքների” (երիտասարդական ակումբների,…) բացակայություն
- Դոնորների համակարգման և շահակիցների միջև արդյունավետ համագործակցության պակաս
- Սահմանափակ թիրախների հետ աշխատանք
- որակյալ կադրերի բացակայություն/սղություն համայքնային մակարդակում:
- երիտասարդական աշխատանքի ոլորտում ներգարավածների համար մասնագիտական ընդհանուր տեղեկատվական դաշտի և տերմինաբանության բացակայություն,
- ՀԿ սեկտորի ոչ բավարար գիտելիքներ ու կարողություններ

Երիտասարդական աշխատանքի սահմանումն ու նկարագրությունը միջազգային մակարդակում

Այսօր երիտասարդական աշխատանքի ոլորտում, երիտասարդական քաղաքականության դաշտում շրջանառվում են երիտասարդական աշխատանքի բազմաթիվ ու բազմազան սահմանումներ և միակ բացարձակ սահմանում գտնելու փորձերը հաջողության չեն հասնում, քանի որ տարբեր երկրներում ոլորտը տարբեր դիմանկար ունի և դրանք ունիֆիկացնելու արժեքը մեծ չէ: Ուստի ընդհանուր մոտեցումն այն է, որ կարիք չկա մեկ սահմանում գտնել, բայց հնարավոր է առանձնացնել երիտասարդական աշխատանքի հիմնական նկարագիր, սկզբունքներ, և նպատակներ: Վերջին տարիներին փորձ է արվում որևէ ընդհանուր գշեր գտնել ու համատեղ ջանքերով մեծացնել ԵԱ ճանաչելիությունը հասարակական կայնքում և դրանով ապահովել դրա կայունությունը, շարունակելիությունը, սատարումը պետության կողմից:

Եվրախորհուրդ

ԵԽ մակարդակում ԵԱ սահմանում է ԵԱ պորտֆոլիյու

<<Երիտասարդական աշխատանքը երիտասարդների անձնային զարգացման, սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացիության ձևավորման գործիք է: Սա իր մեջ ներառում է երիտասարդների հետ, երիտասարդների համար և երիտասարդների կողմից իրականացվող սոցիալական, մշակութային, կրթական, քաղաքացիական, և քաղաքական տիպի միջոցառումներ: Սրանք հիմնականում դպրոցից դուրս իրականացվող միջոցառումներ են, որոնք կրում են հաճախ ոչ-ֆորմալ բնույթ: Երիտասարդական աշխատանքի հիմնական խնդիրն է երիտասարդների համար իրենց ապագան կերտելու հնարավորությունների ստեղծումը: Երիտասարդական աշխանտանքը տարբեր ձևաչափեր ու բովանդակություն կարող է ունենալ սկսած, ակումբային գործունեությունից, երիտասարդական կենտրոններից, փողոցում անմիջականորեն չկազմակերպված երիտասարդության հետ աշխատանքից սպորտային միջոցառումներից, մինչև, սոցիալական ձեռներեցություն, քաղաքացիական ակտիվիզմ, ժամանցի կազմակերպում և այլն>>:

Այս տարի սկսվել են Երիտասարդական աշխատքնաի վերաբերյալ ԵԽ ռեկոմենդացիայի մշակման աշխատանքները, դրա աշխատանքային խորհրդատվական հանդիպումը կայացավ սույն թվականի դեկտեմբերին Ստրասբուրգում: Սույն փաստաթուղը ԵԽ անդամ երկրների կառավարություններին հնարավորություն կտա ընդհանուր որոշակի ընդհանուր բազային սահմանում

կողմնացուցային նկարագրություն ունենալ և կօգնի ազգային մակարդակներում ոլորտի ճանաչմանը:

Եվրամիություն

ԵՄ մակարդակում ոլորտը կարգավորվում է ռեզոլուցիայով, որը սահմանում է ԵԱ, իր դերը, գործառույթները, դերը հասարակական կյանքում:

Եվրոպականխորհրդի ռեզոլուցիա, 2010 թ.

Երիտասարդական աշխատանքը տեղի է ունենում արտադպրոցական միջավայրում, ինչպես նաեւ հատուկ ժամանցի միջոցով, եւ հիմնված է ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման գործընթացների եւ կամավոր մասնակցության վրա: Այս միջոցառումները եւ գործընթացները ինքնուրույն են կազմակերպված, համաղեկավարման սկզբունքով, կամ համակարգվում են մանկավարժական ուղղորդմամբ պրոֆեսիոնալ կամ կամավոր երիտասարդ աշխատողների եւ երիտասարդ առաջնորդների կողմից, կարող է զարգանալ եւ ենթակա են փոփոխությունների, որոնք կարող են առաջանալ տարբեր դինամիկայով:

Եվրամիության մակարդակում երիտասարդական աշխատանքի հիմնական ոլորտային ուղղությունները

Եվրոպական և այլ երկրամասերի տարբեր երկրներում ԵԱ ավանդույթները, պատմությունը, առկա խնդիրները, իրավական կարգավորման մեխանիզմները հետաքրքիր հետազոտական և վերլուծական նյութ են տալիս և ուղենշում այն հիմնական կարևոր կետերը, որոնք պետք է հաշվի առնել ոլորտի ձևակերպման

ժամանակ: Ստորև ներկայացվում է ԵՄ անդամ երկրների ԵԱ համեմատական նկարագրությունը, առավել համակարգված պատկերացում կազմելու համար:

Երկիր՝ Ավստրիա

Սահմանում՝ Արտադպրոցական աշխատանք, հիմնական շեշտադրումը ժամանցի և կանխարգելիչ միջոցառումների վրա

Նպատակներ՝ Կանխարգելում, խնդիրների դեպքում միջամտություն, կրթություն և ձեռք բերումներ սոցիալական և քաղաքական դաշտերում, փորձառություն և ժամանցի ապահովում:

Թիրախ՝ Բոլոր երիտասարդները, սոցիալապես խոցելի խմբերը, տարիքը՝ 11-25

Ձևաչափ՝ Բաց ԵԱ, երիտասարդական հկ-ներ, ժամանցի վայրեր, հատուկ հաստատություններում իրականացվող ԵԱ, շարժական ԵԱ, սպորտ, կրթական և մշակութային միջոցառումներ, երիտասարդական խորհրդատվություն և տեղեկատվություն, միջազգային ԵԱ

Իրավական դաշտ՝ Երիտասարդների առաջ խաղացման դաշնային ակտ

Երկիր՝ Էստոնիա

Սահմանում՝ ԵԱ-ը զարգացմանը միտված միջոցառումների համար պայմանների ստեղծումն է, որոնք ունակ է դարձնում երիտասարդին գործել ընտանիքից դուրս, դպրոցական կամ իր ընտրության աշխատանքային միջավայրում:

Նպատակներ՝ Երիտասարդների համար համայնքում իրենց լիիրավ անդամ զգալու նախապայմանների ստեղծում և աջակցություն:

Թիրախ՝ Բոլոր երիտասարդները, սոցիալապես խոցելի խմբերը, տարիքը՝ 7-26

Ձևաչափ՝ Բաց ԵԱ/ կենտրոններ, հավասարը հավասարին ուսուցում, երիտասարդական խորհրդատվություն և տեղեկատվություն, միջազգային ԵԱ, կանխարգելիչ ԵԱ, սպորտ,

Իրավական դաշտ՝ Երիտասարդական աշխատանքի ակտ

Երկիր՝ Գերմանիա

Սահմանում՝ Միջոցառումներ, որոնք առաջարկում են երիտասարդներին աջակցություն՝ հիմնվելով իրենց հետաքրքրությունների վրա,զարգացնելով նպատակասլացությունն քաջալերելով սոցիալական պատասխանատվություն և մասնակցություն

Նպատակներ՝ Անձնային և սոցիալական զարգացում, կենտրոնացնելով ուշադրությունը մասնակցության, նվիրվածության և ինքնագիտակցության զարգացման վրա:
Թիրախ՝ Բոլոր երիտասարդները, սոցիալապես խոցելի խմբերը, տարիքը՝ 14-27
Ձևաչափ՝ Դպրոցական ծրագրից դուրս երիտասարդների կրթություն, բաց ԵԱ, սպորտ, թիրախավորված ԵԱ, երիտասարդական հկ-ներ, մասնակցություն, երիտասարդական սոցիալական աշխատանք, միջազգային ԵԱ, երիտասարդական խորհրդատվություն
Իրավական դաշտ՝ Երեխաների և երիտասարդների ծառայությունների ակտ

Երկիր՝ Հունաստան
Սահմանում՝ Կրթական և սոցիալական ուղղվածության ծառայություններ, ուղղված երիտասարդների առողջ և անվնաս անցմանը դեպի հասուն կյանք, ինչպես նաև ժամանցային միջոցառումներ
Նպատակներ՝ Երիտասարդենրի անձնային և սոցիալական զարգացում, ակտիվ քաղաքական մասնակցություն և սոցիալական ներառում
Թիրախ՝ Բոլոր երիտասարդները, սոցիալապես խոցելի խմբերը, տարիքը՝ մինչև 30
Ձևաչափ՝ Կարիերայի կենտրոններ, երիտասարդական խորհրդատվություն և տեղեկատվություն, միջազգային ԵԱ, Խոցելի խմբերի հետ կրթական աշխատանք, Բաց ԵԱ, մշակութային կրթություն, երիտ. հկ-ներ, սոցիալական հոգածություն, սպորտ, ժամանցային միջոցառումներ:
Իրավական դաշտ՝ կանոնակարգվում է տարբեր օրենքներում ներառված ակտերով

Երկիր՝ Իռլանդիա
Սահմանում՝ Կրթոության ծրագրավորված գործընթաց, որի նպատակն է աջակցել և օգնել երիտասարդներին իրենց սոցիալական և անձնային զարգացման մեջ, իրենց կամավորական մասնակության միջոցով, որը լրացնում է իրենց ֆորմալ կրթությունը: ԵԱ մեծամասամբ տրամադրվում է կամավորական հասարակական կազմակերպությունների միջոցով:
Նպատակներ՝ Երիտասարդական և անձնային զարգացում հիմնված կամավորական մասնակցության վրա
Թիրախ՝ Բոլոր երիտասարդները, սոցիալապես խոցելի խմբերը, տարիքը՝ 10-25
Ձևաչափ՝ Երիտասարդական հկ, երիտ. կենտրոններ, կրթություն, անձնական սոցիալական ծառայություններ
Իրավական դաշտ՝ ԵԱ ակտ



Երկիր Իտալիա՝

Սահմանում՝ Երիտասարդներին դեպի աշխատաշուկա ճանապարհ հարթող նախաձեռնություններ

Նպատակներ՝ Հասուն կյանքին բարեհաջող անցման հնարավորությունների ստեղծում /զբաղվածություն, տուն, մասնակցություն հասարակական կյանքին/

Թիրախ՝ Բոլոր երիտասարդները, սոցիալապես սոցիալապես և տարածքային առումով խոցելի խմբերը, տարիքը՝ 15-36

Զնաչափ՝ Կրթություն, սոցիո-մշակութային ԵԱ, սպորտ, սոցիալական աջակցություն

Իրավական դաշտ՝ կանոնակարգվում է տարբեր օրենքներում ներառված ակտերով

Երկիր՝ Նիդեռլանդներ

Սահմանում՝ Աջակցող և ռեակտիվ ծառայություններ, ինչպես նաև լայն սպեկտրի ժամանցի ապահովում

Նպատակներ՝ Սոցիալական մասնակցությոն և սոցիալական ներառում

Թիրախ՝ Բոլոր երիտասարդները, սոցիալապես խոցելի և հատուկ կարիքներով խմբերը, տարիքը՝ մինչև 23 years

Զնաչափ՝ Երիտասարդական մասնակցություն, տեղեկատվություն, կրթություն, սոցիալական աշխատանք, կենտրոններ, հկ-ներ, փողոցային ԵԱ, սպորտ

Իրավական դաշտ՝ Երիտասարդության հոգածության ակտ, սոցիալական աջակցության ակտ

Երկիր՝ Նորվեգիա

Սահմանում ԵԱ երիտասարդների համար մասնակցության եւ սոցիալական փոխազդեցության միջոցով հետաքրքիր եւ բովանդակալից ազատ ժամանցի եւ անձնային զարգացման հնարավորությունների ստեղծումն է:

Նպատակներ՝ Մասնակցության և ժողովրդավարության կրթություն, սոցիալական մարգինալացման և արտամդ,ամ կանխարգելում:

Թիրախ՝ Բոլոր երիտասարդները, սոցիալապես խոցելի խմբերը, տարիքը՝ մինչև 26

Զնաչափ՝ Երիտասարդական ակումբներ, խոցելի խմբերի համար հատուկ ծառայություններ, երիտ. հկ-ներ, մշակութային ԵԱ, սպորտ, ժամանցային միոցառումներ, մասնակցություն

Իրավական դաշտ՝ Երեխաների սոցիալական ախահովության ակտ

Երկիր՝ Ռումինիա

Սահմանում՝ Երիտասարդների կարիքներին և ցանկություններին համապատասխան սոցիալական և մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ պայմանների բարելավմանն ուղղված ցանկացած միջոցառում:

Նպատակներ՝ Երիտասարդների համար տեղեկատվության մատչելիություն, քաղաքացիական միջոցառումներին ներգրավում, համայքնային աջակցության միջոցառումնեին, մեկուսացման կանխարգելում, քաղաքական մասնակցություն, մասնակցություն և ներառում, կրթություն, ինքնազարգացում, ժամանցի հնարավորությունների ստեղծում:

Թիրախ՝ Բոլոր երիտասարդները, սոցիալապես խոցելի խմբերը, տարիքը՝ 15-35

Ձևաչափ՝ Ժամանցային միջոցառումեր, միջազգային ԵԱ, երիտ. տեղեկատվություն և խորհրդատվություն, երիտ, հկ-ներ, կամավորություն, մշակութային

Իրավական դաշտ՝ Երիտասարդության մասին օրենք

Երկիր՝ Իսպանիա

Սահմանում՝ Սոցիալական, մշակութային, կրթական, քաղաքական բնույթի միջոցառումներ բոլոր երիտասարդների հետ և նրանց համար

Նպատակներ՝ Երիտասարդության սոցիալական մեկուսացման և մարգինալացման չեզոքացում, մասնակցության և հասարակական կյանքին որպես լիիրավ իրավունքներով անդամներ ներգրավման ուժեղացում

Թիրախ՝ Բոլոր երիտասարդները, սոցիալապես խոցելի խմբերը, տարիքը՝ 15-29

Ձևաչափ՝ Կրթություն, մշակութային ԵԱ, ժամանց, երիտ. տեղեկատվություն

Իրավական դաշտ՝ Խնդիրն արծարծվում է տարբեր օրենսդրական ակտերում /հատկապես զբաղվածության մասին/

ԱՊՀ, ԵՄ, ասիական մի քանի երկրների /Լիտվա, Սինգապուր, Կանադա, Բելգիա, Դանիա, Ֆինլանդիա/ ԵԱ դաշտի այս և նաև առավել հանգամանալից ուսումնասիրությունն ու ակնարկը կարելի է գտնել սույն զեկույցի Հավելվածում: Ներկայացված են երկրների նկարագրություններ հետևյալ բլոկներով՝

- **Երիտասարդական աշխատանքի սահմանումը** (նպատակներ, արդյունք, հիմնարար արժեքային բազա և սկզբունքներ սոցիալ-փիլիսոփայական մեթոդաբանություն)

- **Երիտասարդական աշխատանքի թիրախներ** (օր. `տարիքային սահմաններ, երիտասարդներ հատուկ կարիքներով, բարդ սոցիալական իրավիճակում հայտնված, ծնողազուրկ, մեյնսթրիմ)

- **Երիտասարդական աշխատանքի իրականացման առաջնային/հիմնական ձևաչափեր** (օր. ակումբներ, երիասարդական կենտրոններ, փողոցում իրաանացվող աշխատանք, և այլն) **Երիտասարդական աշխատողի ինստիտուտը** (ֆունկցիաներ, իրավական ստատուս, կարգավորող իրավական հիմքեր)

- **Երիտասարդական աշխատողի պատրաստման համակարգեր** (ունակությունների շրջանակներ, պատրաստող կառույցներ, կրթական մոտեցումներ և ծրագրեր /ֆորմալ և ոչ ֆորմալ/)

- **Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի որակի ապահովման մեխանիզմներ** (աշխատողների, կառույցների լիցենզավորում, ատեստավորում, ինքնագնահատման գործիքներ և այլն)

Երիտասարդական աշխատող: գործառույթները և ունակությունները

Երիտասարդական աշխատողի նկարագրի ու գորշառույթների, նաև անհրաժեշտ ունակությունների հանդեմ մոտեցումները տարբեր երկրներում տարբեր են, ու հաճախ բխում են այն հիմնարար նպատակներից, որոնք դրվում են ԵԱ առջև: Ունակությունների սահմանումը կախված է նաև հաճախ ոլորտի ինստիտուցիոնալականացումից և այնմարմիններից, որոնք զբաղվում են եա ուսումնական համակարգերով և ծրագրերով: Հաճախ սույն գործառույթներն ու համապատասխանաբար ունակությունները սահմանվում են մասնագիտական ստանդարտներով/անձնագրերով /Ռուսաստան, Իռլդանիա, Ֆինլանդիա/ և ապահովվում հաճախ ֆորմալ կրթական համակարգերի միջոցով /սոցիոլոգիայի, սոցաշխատանքի, կրթության, հատուկ մանկավարժության, սոցիալական մանկավարժության, և այլ ֆակուլտետների ծրագրեր/:

Այս բաժնում ներկայացնում ենք ոչ թե կոնկրետ երկրների, այլ Եվրոպական մակարդակում գործող գորառույթների և ունակությունների մի փաթեթ/մոտեցում, որը որպես օրինակ վերցրել են նաև մի շարք եվրոպական երկրներ: Խոսքը Երիտասարդական աշխատեղի Պորտֆոլիոյի մասին է: Սա Եվրախորհրդի երիտասարդական դաշտի կողմից ու համար մշակված համակարգ է, որը հնարավորություն է տալիս երիտասարդական աշխատողներին գնահատել սեփական ունակությունները հիմնվելով աշխատանքային մի քանի ոլորտների և ունկաությունների դաշտերի նկարագրման վրա և պլանավորել սեփական ուսուցանումը: Պորտֆոլիոն ներկայացնում է ութ հիմնական գործառույթ և դրան համապատասխանող մի քանի ունակություններ, որոնք իրենց հերթին կարելիէ բաժանել գիտելիք-հմտություն-մոտեցում դաշտերի:

*Գործառույթ **1.** Աշխատանք երիտասարդների կարիքների և ակնկալիքների հետ*

<u>**ԵԱ ունակությունները**</u>

1.1 երիտասարդների հետ դրական, քննադատելուց զերծ հարաբերությունների կառուցման ունակություն
1.2 երիտասարդների կյանքի սոցիալական համատեքստի ընկալման ունակություն
1.3 երիտասարդական աշխատանքի պլանավորման, իրագործման և գնահատման մեջ համապատասխան մեթոդներով երիտասարդների մասնակցության ապահովման ունակություն
1.4 երիտասարդներին որպես հավասար ընկալելու ունակություն
1.5 երիտասարդական աշխատանքի համատեքստում երիտասարդների անձնային և հուզական խնդիրների քննարկման ունակություն

Գործառույթ 2. Երիտասարդներին ուսուցման հնարավորությունների ապահովում

ԵԱ ունակությունները

2.1 Ունակություն աջակցել երիտասարդների սեփական ուսուցողական կարիքների, ոճերի գիտակցման գործում, հաշվի առնելով ամեն մեկի յուրահատկությունները

2.2 Անհատների ու խմբերի համար ապահով, շահադրդող և ներառող ուսուցողական միջավայրի ստեղծում

2.3 Ուսուցման հանդեպ շահադրդման և ստեղծարարության զարգացման միտված կրթական մեթոդների օգտագործման ունակություն

2.4 Երիտասարդների համապատասխան և պատշաճ ուղղորդման և հետադարձ կապ տալու ունակություն

2.5 Երիտասարդների կրթական հնարավորությունների մասին իրազեկման և դրանցից օգտվելու համար աջակցման ունակություն

Գործառույթ 3. Աջակցություն երիտասարդների՝ իրենց սոցիալական միջավայրի առավել լավ պատկերացումներին և դրանում իրենց մասնակցության խթանում

ԵԱ ունակությունները

3.1 Ունակություն օգնելու երիտասարդներին հասկանալու և համայնքում իրենց դերի հետ կապված պատասխանատվություն վերցնելու կարևորությունը

3.2 Ունակություն աջակցել երիտասարդներին սահմանել սոցիալական փոփոխությունների բերող անհատական և խմբային նպատակներ, գործելու ռազմավարություններ և գործողություններ

3.3 Ունակություն աջակցել երիտասարդներին զարգացնել իրենց քննադատական մտածողությունը և հասարակության, ուժի, սոցիալական և քաղաքակաան համակարգերի աշխատանքի հետ կապված գիտելիքները, գտնել դրանց վրա ազդեցության հնարավորությունները

3.4 Երիտասարդների ինքնավստահության և ունակությունների զարգացման աջակցության ունակություն

Գործառույթ 4. Երիտասարդներին ակտիվորեն և կառուցողական ոճով միջմշակութային խնդիրներին արձագանքելու աջակցություն

ԵԱ ունակությունները

4.1 Երիտասարդների միջմշակութային ունակությունների զարգացման սատարման ունակություն

4.2 Երիտասարդների համար տարբեր մշակութային համատեքստերից եկած մարդկանց հետ շփումների, ուսուցման, մշակութային իրազեկության հնարավորությունների ստեղծման ունակություն
4.3 Կոնֆլիկտների հետ կառուցողական աշխատանքի և դրանց փոխակերպմանն ուղղված աշխատանքի ունակություն
4.4 Տարբեր մշակութային համատեքստերից երիտասարդների՝ երիտասարդական աշխատանքի տարբեր միջոցառումներում ակտիվ ներառման ունակություն

Գործառույթ 5. Իրականացրած երիտասարդական աշխատանքի որակի բարելավման նպատակով գնահատման գործիքների ակտիվ օգտագործում

ԵԱ ունակությունները
5.1 Գնահատման գործընթացի պլանավորման և իրականացման մեջ երիտասարդների մասնակցության ապահովման ունակություն
5.2 Մասնակցային գնահատման գործընթացների պլանավորման և իրականացման մեթոդների իմացություն և կիրառում
5.3 Սեփական աշխատանքի բարելավման մեջ գնահատման արդյունքների օգտագործման ունակություն
5.4 Երիտասարդների իրավիճակի և կարիքների վերաբերյալ ժամանակակից ուսումնասիրությունների իրազեկություն

Գործառույթ 6. Թիմային/կոլեկտիվ ուսուցման սատարում

ԵԱ ունակությունները
6.1 Թիմային աշխատանքի գնահատման և դրա արդյունքների օգտագործմամբ աշխատանքի բարելավման ունակություն
6.2 Թիմում հետադարձ տալու և ստանալու ւնակություն
6.3 Երիտասարդական աշխատանքի վերաբերյալ ակտուալ տեղեկատվության և օրինակների մասին թիմի իրազեկման ունակություն

Գործառույթ 7. Սեփական կազմակերպությունների զարգացման աջակցում և երիտասարդական ծրագրերի և քաղաքականության բարելավում

ԵԱ ունակությունները
7.1 Կազմակերպության ներքին կանոնակարգերի և ծրագրերի սահմանման մեջ երիտասարդների ակտիվ ներգրավման ունակություն
7.2 Երիտասարդական քաղաքականության մշակման մեջ այլ մարմինների հետ համագործակցության ունակություն

Գործառույթ 8. Ծրագրերի մշակում, իրականացում, գնահատում

<u>ԵԱ ունակությունները</u>

8.1 Ծրագրային կառավարման մոտեցումների օգտագործման ունակություն

8.2 Միջոցների հայթայթման ունակություն

8.3 Տարբեր թիրախային խմբերի համար ծրագրերի մասին նյութերի, հաշվետվությունների, ներկայացումների պատրաստման ունակություն

8.4 Կարիք եղած դեպքում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագորխման ունակություն

Ուսումնասիրելով սույն համակարգը, պարզ դարձավ, որ նման մոտեցումը կարող է շատ լավ հիմք դառնալ սեփական համակարգի ձևակերպման համար, սակայն չի կարող այն մաքուր ձևով ինտեգրվել մերիրականության մեջ: Կարիք կա թե գործառույթների, թե ունկաությունների մակարդակում այն տեղայնացնել: Օրինակ այս համակարգում պակասում են անձնային և հոգևոր աճի խթանման, հայրենասիրության զարգացման հետ կապված գործառույթները, որոնք Հայաստանի պարագայում հիմնարար ու կարևոր դեր ունեն երիտասարդների հետ աշխատանքի կազմակերպման մեջ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զեկույցի այս բաժնում ներկայացվում են ողջ ծրագրի տարբեր բաղադրիչների արդյունքում /փորձագիտական կլոր սեղաններ, միջազգային փորձի հետազոտություն, միջազգային փորձագետների այցելություններ/ արված եզրահանգումներն ու դրանցից բխող առաջարկությունները, որոնք ըստ ծրագրի աշխատանքային խմբի հնարավորություն կտան կայացնել, զարգացնել և ամրացնել ԵԱ համակարգը Հայաստանում:

Առաջարկությունները մշակվել են և քննարկվել ՀՀ-ում երիտասարդական դաշտում աշխատող փորձագետների կողմից, ելնելով ոլորտի վերաբերյալ միջազգային կառույցների և արտերկրում գործող համակագերի փորձից, տեղական երիտասարդական աշխատանքի առկա իրավիճակի վերլուծությունից և գլոբալ մակարդակում ոլորտի զարգացման մարտահրավերներից:

Առավել թիրախված և թեմատիկ առաջարկություններին անցնելուց առաջ, հարկ է նշել սկզբունքային մի քանի առաջարկներ, որոնք հիմնարար և կարևոր դեր ունեն ոլորտի կայացման մեջ: Դրանցից են՝

- ոլորտի զարգացման և սահմանման մեջ պետք է պարտադիր լինի /իրավականորեն նաև/ պետական մարմինների, ՏԻՄ և հասարակական սեկտորի սերտ համագործակցությունը՝ սոցիալական գործընկերության սկզբունքներով և ոգով
- ոլորտի զարգացման մեջ կարևորություն ունի միջգերատեսչական, բայց և միջոլորտային շփումներն ու փոխլրացումը, հարցերին համակողմանի լուծումներ տալու համար
- ոլորտի զարգացման ու սահմանման մեջ պետք է ներառված լինեն շահառուների խմբերը
- ոլորտի կայասցմանը զուգահեռ աշխառանք պետք է կատարվեն ԵԱ քաղաքական-իրավական ճանաչման, սոցիալական ընդունման և ճանաչման, ինքնաճանաչմանն ուղղված միջոցառումներ և աշխատանք
- պետք են շարունակական հետազոտություններ /երիտասարդության վիճակ, հիմնախնդիրներ, ակնկալիքներ, մարտահրավերներ, կարիքներ, և այլն/ ոլորտը առավելագույն կերպով երիտասարդներին մոտեցնելու և շարունակաբար ակտուալ պահելու համար:

Երիտասարդական աշխատանքի ոլորտի բաղկացուցիչ տարրերը

Փորձագիտական առաջին կլոր սեղամի ժամանակ փորձ կատարվեց ամփոփել երիտասարդական աշխատանքի դաշտի կառուցվածքային հիմնական և անհրաժեշտ տարրերը, որոնց առկայությունը կկարողանա ապահովել նման գործընթացի արդյունավետությունը, ստացված արդյունքի որակը: Ի մի բերվեցին տեղական և միջազգային փորձից վերցված հիմնական օրինակները, որոնք քննարկվեցին կլոր սեղանի ժամանակ: Ստորև ներկայացված սխեման ներկայացնում է երիտաասրդական աշխատանքի զարգացման հիմնական փուլերը եւ կառուցվածքային տարրերը:


Ուսումնասիրություններ
ՏԵՍԼԱԿԱՆ - ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴՅՈՒՆՔ
ՀԱՐԹԱԿ ԳՈՐԾԻՔԱՐԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Հանրային-մասանավոր, բազմաշահառու
Ազգային
Միջազգային
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ / ԾՐԱԳԻՐ
Նախաձեռնող փորձագետների թիմ
Մեթոդաբանություն, Գործիքակազմ
Ռեսուրսներ, Ենթակառուցված
ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ
Արդյունքների և աշխատանքի ճանաչում սոցիալ-քաղաքական
Մշտադիտարկման պլան
Տեսլականի վերանայում/զարգացում
Հանրային իրազեկման բարձրացում սոցիալ-քաղաքական
Նոր ձգտումներ
Նոր (...)
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ
Փորձագետների շարունակական զարգացում
Նոր իրողություններ
Նոր զարգացումներ
Շահերի պաշտպանություն
Իրավունքների պաշպանություն
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾՈԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ, (Ցանցեր, փոխադարձ աջակցություն, երկխոսություն)
Լոբբի

ԵԱ զարգացման ընդհանուր մոտեցումներ

Երիտասարդական աշխատողի ինստիտուտը պետք է կառուցվի համապատասխան այն արդյունքին, որը ակնկալվում է այս ինստիտուտի ախատանքից, եւ հիմնված պետք է լինի պետական քաղաքականությունում արտացոլված տեսլականի եւ ռազմավարական առաջնայնությունների վրա:

Երիտասարդական աշխատանքի ինստիտուտը պետք է կառուցվի եւ գործի բազմաշահառու համագործակցության սկզբունքով, որտեղ հասարակական, պետական եւ մասնավոր սեկտորները պետք է ներկայացված լինեն եւ հնարավորություն ստանան ներկայացնելու իրենց սպասումները այս ինստիտուտից: Անհարժեշտ կինի նաեւ բացի ազգային համագործակցության հարթությունից ներառել նաեւ միջազգային համագործակցության եւ փորձի ուսումնասիրման տարրեր:

Վերը նշված տեսլականի եւ ռազմավարության հիման վրա պետք է կառուցվի քաղաքականություն (հայեցակարգ) եւ գործողությունների ծրագիր, որը պետք է ներառի թե՛ մեթոդաբանական եւ գործիքարանի մշակման տարրեր, եւ թե՛ համապատասխան ռեսուրսների տրամադրում եւ ենթակառուցվածքների ստեղծում:

Ստեղծված ինստիտուտը իր առաջին արդյունները տալուց հետո պետք է անընհատ ենթարկվի մշատադիտարկման եւ վերանայման հաշվի առնելով բացահայտված խնդիրները եւ ներ մարատհրավերները, որոնք կարող են ի հայտ գալ ժամանակի ընթացքում:

Ցանակալի է նաև, որ երիատասրդական աշխատողները համախմբված լինեն որեւէ ազգային հովանոց կազմակերպության կամ լիգայի շրջանակներում, որը հնավարություն կտա ապահովել անընդհատ փորձի փոխանակում, հավասարը հավասարին սկզբունքով փոխադարձ ուսուցում, ինչպես նաեւ այդ կառույցը կկարողանա ապահովել որոշակի քարոզչական եւ լոբբինգային ախատանքեր:

Բոլոր վերը նշված գործընթացները պետք է հիմնված լինեն ազգային եւ միջազգային ուսումանասիրությունների վրա, եւ ընդհանուր առմամաբ հետազոտական եւ ուսումնասիրողական բլոկը պետք է ուղեկցի բոլոր այդ գործընթացները բոլոր փուլերում:

Երիտասարդական աշխատանքի ընդհանուր նկարագրություն

ԵԱ Տեսլականը Հայաստանում

Հետազոտությունների արդյունքում հնարավոր եղավ հանգել այն եզրակացությանը, որ ՀՀ-ում ԵԱ սահմանումը պետք է առկա սահմանումից /ձևակերպված 201թ. ընդունված ՀՀ երիտասարդական քաղաքականության նոր հայեցակարգի մեջ որպես <<…երիտասարդների, երիտասարդական խմբերի հետ տարվող աշխատանք կամ աշխատանք, որն ուղղված է երիտասարդության հիմնախնդիրների լուծմանը>> վերաձևակերպվի և բխի այն հիմնական տեսլականից, որը ԵԱ պետք է իր առջև որպես աշխատանքի նպատակ ու արդյունք ունենա: Հայաստանի պարագայում սա կարող է կապված լինել Հայաստանում տանը զգալու, տեր լինելու գաղափարախոսությաան հետ: Ուստի ընդհանուր տեսլական կարող է լինել երիտասարդների մոտ <<Հայաստանը ունակ է հնարավորություններ տրամադրել>>, <<Հայաստանում դա հնարավոր է>>, <<Ունակ Հայաստան>> ընկալումների զարգացումը, որը կբերի <<Ունակ հայաստան – ունակ հասարակություն – ունակ ԵՍ>> ընկալմանը երկիտասարդների մոտ: Ուստի, սահմանման մեջ հնարավոր է արտացոլել <<ունակ հայրենիքի>> ընկալման յուրահատուկ մոտեցում:

ԵԱ Սահմանումը

Երիտասարդական աշխատանքը չի կարող առանձին ու անջատ լինել երկրի առկա յուրահատուկ իրականությունից, պետական քաղաքականությունից պետական առաջնայնություններից, ազգաբնակչության կարիքներից ու ակնկալիքներից և սրա մասին է վկայում ԵԱ բազմազան ընկալումները և տարբեր երկրներում դրա յուրահատկությունը; Ուստի կարևոր է Հայաստանյան իրականության համար գտնել այն հիմնական նկարագիրը, որը ԵԱ ինտեգրված կներկայացնի հասարակակական այլ գործընթացների հետ հարմոնիկ միասնության և փոխլրացման սկզբունքով: Սա այդքան էլ հեշտ չի, քանի որ որոշելու համար ինչ հիմնական նկարագիր և սահմանումներ պետք է ունենա ԵԱ երկրում, պետք է հանգամանալից աշխատանք կատարել հասկանալու համար երկրի յուրահատկությունը, առկա հիմնապնդիրները, առկա կարիքները, գտնել այն փիլիսոփայական, մանկավարժական, սոցիալական գիտական հենքը, որը հնարավորինս հստակ կարող է սահմանել ԵԱ աշխատքնի մեթոդաբանական հենքը և ուստի նաև ամփոփել դա աշխատանքի սահմանման մեջ: Այնուամենայնիվ, հետազոտական աշխատանքի արդյունքում, և միջազգային ուսումնասիրություներիհիման վրա առաջարկվում է որպես սկզբնական հիմք օգտագործել Եվրախորհրդի սահմանումներից մեկը՝

> *<<Երիտասարդական աշխատանքը երիտասարդների անձնային զարգացման, սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացիության ձևավորման գործիք է: Սա*

իր մեջ ներառում է երիտասարդների հետ, երիտասարդների համար և երիտասարդների կողմից իրականացվող սոցիալական, մշակութային, կրթական, քաղաքացիական, և քաղաքական տիպի միջոցառումներ: Սրանք հիմնականում դպրոցից դուրս իրականացվող միջոցառումներ են, որոնք կրում են հաճախ ոչ-ֆորմալ բնույթ: Երիտասարդական աշխատանքի հիմնական խնդիրն է երիտասարդների համար իրենց ապագան կերտելու հնարավորությունների ստեղծումը: Երիտասարդական աշխանտանքը տարբեր ձևաչափեր ու բովանդակություն կարող է ունենալ սկսած, ակումբային գործունեությունից, երիտասարդական կենտրոններից, փողոցում անմիջականորեն չկազմակերպված երիտասարդության հետ աշխատանքից սպորտային միջոցառումներից, մինչև, սոցիալական ձեռներեցություն, քաղաքացիական ակտիվիզմ, ժամանցի կազմակերպում և այլն>>:

Ընդհանուր առմամբ վերջին զարգացումների ֆոնի վրա, հաճախ առաջարկվում է ԵԱ հիմնական երկու ընդհանրական սկզբունքային նպատակ, որը նաև արտացոլվում է ոլորտի բնութագրման մեջ: Դրանք են երիտասարդների անհատական կարողությունների զարգացման, ինքնավստահության, հասարակական կյանքում ակտիվության աջակցումը /facilitating youth agency/ և կյանքում կողմնորոշվելու ունակությունների զարգացումը /navigational capacities/. Այս եկու փոխլրացնող մոտեցումները առկա են ԵԱ նկարագրություններում մի շարք երկրներում և հավանաբար կարող են լինել նաև ՀՀ-ում ԵԱ նպատակների մեջ, ելնելով այն առկա իրավիճակից, որը տեսնում ենք երիտասարդների շրջանում այսօր:

Երիտասարդական աշխատանքի հնարավոր նպատակները Հայաստանում

ԵԱ տեսլականից, սահմանումներից, երիտասարդաների կարիքներից ելնելով, կարելի է առնաձնացնել հնարավոր նպատակների ու ակնկալիքների այն փաթեթը, որին կարող է միտված լինել ԵԱ երկրում, այդ հնարավոր նպատակների մեջ կարող են լինել, սակայն չսահմանափակվել հետևյալ կետերը՝

- Աջակցել երիտասարդենրին իրագործել իրենց գաղափարները
- Սատարել երիտասարդներին իրենց շրջապատում դրական փոփոխություններ իրականացնել
- Օգնել երիտասարդներին զարգանալ և ինքնուրույն դառնալ
- Օգնել երիտասարդներին ազդեցություն/ ձեռք բերել
- Հնարավորություններ ապահովել երիտասարդների որակյալ ժամանցի համար
- Ինքնագնահատականի և ինքնավստահության զարգացում ապահովել
- Անձնական և սոցիալական հարաբերությունների կարգավորման և կառավարման ունակություններ զարգացնել
- Նոր արժեքավոր փորձառությունների հնարավորություն ապահովել
- Նոր գիտելիք ստանալու ու հմտություն ձեռք բերելու հնարավորություններ ապահովել
- Սոցիալական գիտակցության և համերաշխության զգացումներ սերմանել և զարգացնել
- Երիտասարդների ձայնի իրավունքի ապահովել
- Պատասխանատվության, որոշումների մտածված և պատասխանատու կայացման ունակություններ զարգացնել
- Բարձրացնել որպես ակտիվ քաղաքացիներ երիտասարդների դերը
- Աջակցել երիտասարդակների անձնային և հոգևոր աճին

Նշված ու մեր իրականության համար ընտրված հատուկ նպատակներին հարիր պետք է նաև հաջորդ քայլով սահամել սոցիալ-փիլիսոփայական և մանկավարժական այն մոտեցումներն ու տեսությունները, որոնք աշխատանքի մեթոդաբանական հիմք կստեղծեն ոլորտի աշխատաքնային բովանդակության համար:

Երիտասարդական աշխատանքի սկզբունքներն ու արժեքները

ԵԱ հիմնական ամենաարժեքավոր և ուժեղ կողմերից մեկն այն է, որ այն ունի հստակ սկզբունքներ և մոտեցումներ, որոնք բացառիկ կարևորության են և ԵԱ ժամանակակից ընկալման հենքն են կազմում: Այս մոտեցումները կիսում են ոլորտի փորձագետներն ու մասնագետները, և դրանց առկայությունը ապահովում է ԵԱ ազդեցությունն ու ճկունությունը, փոփոխություններին ակտիվորեն արձագանքելու և սոցիալական փոխարկերպումների բերելու նրա հնարավորությունը:

Ստորև բերվում են ԵԱ այն հիմնական նախապայմաններն ու սկզբունքներն ու արժեքները, որոնք նաև պետք է հանդիսանան Հայատանում ոլորտի հիմք:

- Ներառական/հասանելի/բաց/մատչելի բոլոր երիտասարդների համար
- Ունենա պարբերական-շարունակական բնույթ
- Համայնքակենտրոն
- Ապաքաղաքական
- Հետաքրքիր/զվարճալի
- Աջակցող, ուղղորդող, շահադրդող
- Հայրենասիրական դաստիարակություն խթանող
- Սոցիալական ինտեգրվածությունն ու համակեցությունը ապահովող
- Ազատ մտածողություն ձևավորող
- Համագործակցային
- Նախաձեռնողականություն խթանող
- Համամարդկային արժեհամակարգ ու բարոյականություն տարածող
- Մասնակցային որոշումների ընդունման և համաղեկավարման սկզբունքով կառավարվող
- Որակի հստակ չափանիշների և ուղենիշների համապատասխան գործող
- Երիտասարդների սոցիալական եւ անձնական զարգացման գերակայություն
- Անկախություն և ինքնուրույնություն սերմանող
- Երիտասարդների և աշխատողների անվտանգություն
- Հավասարություն, հավասար ստարտային վիճակի բերող համակարգ

Երիտասարդական աշխատանքի թիրախները

ԵԱ թիրախային խմբերի մասին քննարկումները և դրանց մոտեցումները սերտորեն կապված են երկրում ընդհանուր առմամբ <<երիտասարդ>> և <<երեխա>> եզրույթների ձևակերպումներից, որը նաև պայմանավորում է, թե ով է այդ ոլորտի հիմնական պատասխանատու կառույցը կամ կառույցները: Ռարբեր երկրներում այդ եզրույթները տարբեր կերպ են սահմանված, և ծածկում են 0-35 տարեկան տիրույթը:

Ուսումնասիրելով ԵԱ փորձը, եզրահանգման ենք եկել, որ ՀՀ-ում ԵԱ պետք է սկսվի ավելի վաղ տարիքում, քան սահմանված է այսօր ոլորտը համաարգող փաստաթղթերում: տեսլականի, սահմանման և նպատակների ամբողջությունից ելնելով, պարզ է առնում որ 16 տարեկանը աշխատանքը սկսելու համար բավականին ուժ է, քանի որ հաճախ կյանքի կարևոր որոշումները ընդունվում են ավելի վաղ տարիքից սկսած: Անհրաժեշտություն կա հստակ դեմոգրաֆիական պատկերի ձեւակերպման (երիտասարդների տարիքային խմբի որոշումից հետո), ինչպես նաեւ կազմել կանխատեսումներ ըստ տարբեր սցենարների, որպեսզի հաշվի առնվի նաեւ դեմոգրաֆիական վիճակները 10, 20, 50 տարի հետո: Տարբերակ կարող է լինել ըստ տարիքի կլաստերիզացիան երեք խմբերի, եւ ըստ դրա կարող է լինել երիտասարդական աշխատանքի մեկ ընդհանուր նպատակ եւ երեք տարբեր շեշտադրումներ, իրենց համապատասխան մեթոդաբանական մոտեցումներով: Աքսելերացիոն գործընթացների հետ կապված, ինչպես նաեւ հաշվի առնելով ավագ դպրոցի վերջին տարիներին երիտասարդների մասնագիտական կողմնորոշման անձնական ձեւավորման հետ կապված լուրջ գործընթացները ցանկալի է վերանայել երիտասարդի եւ երիտասարդական աշխատանքի թիրախի տարիքային սահմանները: Ուստի հարկ է հաշվի առնել, որոլտի թիրախային խումբը սահմանելու ժամանակ, առավել ևս, որ հավանաբար կարիք կա Երիտասարդական քաղաքականության հայեցակարգում և այլ իրավական ակտերում երիտասարդ եզրույթի տարիքային սահմանումը լայնացնել:

Կլաստերներ և կլաստերավորման հնարավոր հիմքեր կարող են լինել՝

- Ըստ տարիքային խմբերի
- Ըստ երիտասարդի կարիքների՝ սոցիալապես անապահով երիտասարդներ, սահմանամերձ գյուղեր, հաշմանդամներ, փախստականներ, ծնողազուրկ երիտասարդներ, մանկատներ, խնամքի հաստատություններ, հատուկ հաստատություններ, կրթական կարիքներ, զբաղվածություն, ձեռնարկատիրություն, կուսակցական երիտասարդություն, փաբային ջազեր, թաղի տղերք, սպորտսմեններ, երաժիշտներ եւ այլ արվեստագետներ,

կրոնական խմբեր, առողջ ապրելակերպի շարժման անդամներ, հայորդյաց տների սաներ, ուսանողություն…

- Աշխարհագրական դիրքի՝ սահմանամերձ գյուղեր, գոյուղական երիտասարդություն ընդհանրապես, փոքր քաղաքներ, Երեւան, Մարզեր
- Բնակության վայրի՝ Անպայման պետք է հատուկ ուշադրություն դարձնել ԼՂՀ եւ սփյուռքի հայազգի երիտասարդներին, որոնք չնայած ապրում են այլ երկրներում, պետք է լինեն ՀՀ երիտասարդական աշխատանքի եւ երիտասարդական քաղաքականության սուբյեկտներ

Ոլորտի նման կլաստերիզացիան իհարկե իր արտացոլումն է գտնում այն հիմնական շեշտադրումների մեջ, որոնք պետք է արվեն հատուկ տարբեր խմբերի հետ իրականացվող աշխատանքում և դրա և նպատակներում: Սա պայմանավորվում է այն բանով, որ տարբեր տարիքում երիտասարդների և երեխաների կարիքները և հետաքրքրությունները, հիմնական նպատակները տարբերվում են, ուստի նրանց առավեագույնս աջակցելու համար պետք է ընտրվեն տարիքային և կյանքի առկա իրավիճակին հարիր ինտերվենցիայի ոլորներ, մեթոդներ ու անելիքներ:

Ստորև ներկայացված է կլաստերավորումը ըստ տարիքային խմբերի է: Երեք կլաստերավորված խմբերին համապատասխան ԵԱ հնարավոր նպատակներն ու խնդիրները, ևս ադապտացվում և համապատասխանեցվում են առկա հիմնական կարիքների:

Պատանի
7-14 տարեկան

Մասնագիտական կողմնորոշում
Տաղանդի զարգացում
Բնավորության զարգացում
Վստահություն
Ուսման շահադրդում
Հայրենասիրություն
…

Երիտասարդ
15-24 տարեկան

Աշխատանք
Մասնագիտական նույնականացում եւ վերակողմնորոշում
Կամավորություն
Սոց. կապեր
ժամանց
Ինքնավստահություն
…

Ավագ երիտասարդ
25-35 տարեկան

Ընտանիք
Ձեռնարկատիրություն
Աշխատանք
Մասնագիտական վերակողմնորոշում
Քաղաքական մասնակցություն
Վերորակավումներ
Բնակարան
…

Բացի տարիքային կան աշխարհագրական կլաստերիզացիայից, հնարավոր է նաև առանձնացնել երիտասարդների այն խմբերը, որոնք բաժանվում են ըստ տարբեր կարիքների, և ևս ԵԱ տիրությում են գտնվում:

Դրանց մեջ կարող են մտնել նաև տարբեր հատկանիշներով խոցելի համարվող խմբերը, սրանց մեջ են՝

- Գյուղական երիտասարդություն
- Հաշմանդամություն ունեցող
- Սահմանամերձ շրջանների երիատասարդներ
- Բանակային երիտասարդություն
- Տղաներ
- Իրավախախտ երիտասարդներ
- Վատ սովորություններ և կախվածություններ ունեցողներ (ալկոհոլիզմ, խաղամոլություն և այլն)
- Փախստականներ
- Տոտալիտար աղանդներ
- որևէ զբաղվածությունից, կրթական գործընթացներից դուրս մնացած երիտասարդներ /NEETs/
- ուսանողներ
- ակտիվ երիտասարդներ
- օտար երկրում կրթություն ստացած երիտասարդներ

Ակնհայտ է, որ այս խմբերի հետ աշխատանքն իր յուրահատկությունն ունի, և նրանց հետ աշխատող երիտասարդական աշխատողները սույն խմբերից շատերի հետ աշխատելու համար հատուկ պատրաստվածության և կրթության կարիք ունեն և ԵԱ ընդհանուր տիպի ունակությունները այստեղ բավար չեն լինի:

Երիտասարդական աշխատանքի հիմնական ձևաչափերը

ԵԱ բազմազան է, տարբեր միջոցառումներ ու ծրագրերի համար լայն դաշտ կարող է ստեղծել, ու ելնելով հասանելիության, ադեկվատության, համապատասխանության, բացության, հավասարության սկզբունքներից տարբեր ձևերով և ձևաչափերով կարող է կազմակերպվել և նույն երկրում կարող են գործել ԵԱ տարբեր ձևերը, և նման միախմբված բնույթը հենց հնարավորություն է տալիս առավելագույնս թվով երիտասարդներ ներգրավել աշխատանքում: Այդ հնարավոր ձևաչափերի մեջ կարելի է առանձնացնել հետևյալները՝

Երիտասարդական կենտրոնների հիմքի վրա գործող կառույցներ */երիտասարդների կամավորական մասնակցություն, նրանք են գալիս դեպի կենտրոն/*			
կենտրոններ	բաց երիտասարդական կենտորններ	բաց երիտասարդական տարածություններ	
ակումբեր	խորհրդատվական կենտրոններ	տեղեկատվական կենտրոններ	
Առցանց երիտասարդական աշխատանք			
Երիտասարդական հանդիպումներ,			
ճամբարներ,	հավաքներ	ֆորումներ,	
Գոյություն ունեցող հաստատությունների հիմքի վրա գործող ԵԱ			
մանկատուն	դպրոցներ, ֆորմալ կրթություն	բանակ	կալանավայր
եկեղեցի	Լրացուցիչ կրթական հաստատություններ /խմբակ, սպորտային խմբեր, հոբիներ/	Քաղ. կուսակցություն	մշակութային և հայորդաց տներ)
Դաշտային /Detached/ և Շարժական /mobile/ ԵԱ */ԵԱ գնում է, ուր երիտասարդներ են/*			
Փողոցում իրականացվող ԵԱ	Դեպի խոցելի ու դժվար հասանելի երիտասարդը գնացող /Outreach	Շարժական երիտասարդական կենտրոններ /օր. ավտոբուս,/	Երիտասարդների այցելավայրեր /ակումբ, սրճարան, առևտրի կենտրոն, փաբ, բակեր/
Երիտասարդական միավորումներ, շարժումներ, կազմակերպություններ, ոչ ֆորմալ խմբեր			

Քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ ՀՀ-ում պետք է և կարող են օգտագործվել երիտասարդական աշխատաքնի գրեթե բոլոր հայտնի ու տարածված ձևերը: Կարևոր է գտնել, թե հատկապես դրանցից որոնց կարիքն է առաջնային, ինչ

հստակ միջոցառումներ են հարկավոր նման ձևաչափով աշխատանքի կազմակերպման համար /օր. դրանք կարող են լինել կապված մասնագետների վերապատրստման, վայրերի համապատասխանեցման և գծագրմանը ներկայացվող պահանջների, անհրաժեշտ տեխնիկական զինվածության հետ/ և որ թիրախային խմբերի հետ և համար կոնկրետ ձևաչափն առավել արդյունավետ կլինի:

Երիտասարդական աշխատողների գործառույթներն ու ունակությունները

Երիտասարդական աշխատողի գործառույթներն ու համապատասխանաբար նրանց ներկայացվող մասնագիտական աշխատաքնի պահանջները մեծապես պայմանավորված են ԵԱ բովանդակությամ, և երկրից երկիր տարբերվում են: Այն երկրներում որտեղ ոլորտը կարգավորվում է իրավական ակտերով, և կա ԵԱ մասնագետի պաշտոն և հաստիք պետական կամ մունիցիպալ մակարդակում, հաճախ գործում են նաև ֆորմալ կրթական համակրագի կողմից առաջարկվող նրանց կրթական և վերապատրաստման ծրագրեր: Դրանց մի մասը սոցիառլոգիայի, սոցիալական աշխատանքի, հոգեբանության, փիլիսոփայության, մանկավարժության, ընդհանուր կրթության, սոցիալական ու հատուկ մանկավարժության, սոցիո-մշակութային աշխատանքի ֆակուլտետների բազայի վրա են գործում: Սա նաև նշանակում է,որ կա հստակ ձևակերպված ունակությունների փաթեթ, որին պիտի տիրապետեն այդ մասնագետները, և դրանց հիման վրա կա ուսուցման հստակ սահմանված ծրագիր:

Այլ է իրավիճակը այն երկրներում, օրինակ ՀՀ-ում, ուր երիտասարդական աշխատող մասնագիտությունը դեռևս առանձին գոյություն չունի:

Երբ խոսքը գնում է երիտասարդական աշխատողի ունակություններիմասին, այստեղ է հարկ է նշել, որ գոյություն ունեն երիտասարդական աշխատողի ունակությունների բազմաթիվ նկարագրություններ, գնահատման և ինքնագնահատման գործիքներ: Որպես կանոն դրանք հիմնված են ԵԱ հիմնական նպատակների ու գործառույթների վրա:

Մեր ոսումնասիրության արդյունքում գտնվել եմ մի քանի նման սանդղակներ, սակայն հստակ է այն փաստը, որ նման փաթեթ, ունակությունների սանդղակ պետք է ստեղծվի առանձնահատուկ ՀՀ իրականության համար: Դրա մեջ պետք է ներկայացված լինեն թե որոշակի մասնագիտական հիմնական ունակություններ, թե աշխատողի անձնային, բարոյահոգեբանական, արժեքային համակարգին առնչվող ունակություններ: ՀՀ-ում նման սանդղակ կարող է ստեղծվել Եվրախորհրդի երիտասարդական աշխատողի պորտֆոլիոյի հիմքի վրա , սակայն կարիք կա մի շարք լրացումների մեր իրականությանը համապատասխանելու համար:

Երիտասարդական աշխատողների պատրաստման համակարգեր

Երիտասարդական աշխատանքի մասնագետների պատրաստման հարցը բավականին բարդ հարց է, քանի որ կարևոր և առանցքային դեր են խաղում թե նման ուսուցման բովանդակային առանձնահատկությունները, ուսուցման տարբեր ծրագրերը, զարգացվող ունկաությունների հետ կապը, այլև ուսուցման և վերապատրաստման տեխնիկական կողմը՝ ով և ինչպես է ապահովում տվյալ մասնագետների ուսուցումն ու կարողությունների զարգացումը:

Մասնագետների պատրաստման հարցերին անդրադառնալու համար հարկ է դիտարկել դրա հետ կապված մի քանի հարցեր, որոնք ներկայացված են ստորև:

Մեթոդաբանություն

Երիտասարդական աշխատանքի մասնագետների պատրաստումը եւ վերապատրաստումը պետք է կազմակերպվեն երեք կրթական մեթոդների՝ ֆորմալ կրթական մոդուլների, ոչ-ֆորմալ կրթության եւ էլեկտրոնային ուսուցման համադրությամբ:

Քանի որ երիտասարդական աշխատանքը հիմնականում կիրառում է ոչ-ֆորմալ կրթության գործիքարանը, այս ոլորտի մասնագետների պատրաստումը եւս պետք է հիմնականում հիմնված լինի ոչ-ֆորմալ կրթության սկզբունքների եւ մեթոդական մոտեցումների կիրառման վրա:

Արդի հասարակությունում, տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաները դարձել են կարեւոր գործոն, ինչպես նաեւ երիտասարդական աշխատանքը նույնպես ներգարվում է ավելի ու ավելի մեծ ծավալների ՏՀՏ գործիքներ (գործընթացների կազմակերպման եւ վերահսկման օնլայն պլատֆորմաներ, էլ. կառավարում, էլ. մասնակցություն, բազմազան սոցիալական ցանցեր, առցանց գործիքներ եւ այլն): Համապատասխանաբար կարեւորվում է նաեւ երիտ. աշխատանքի մասնագետների պատրաստման եւ վերապատրաստամն գործընթացները նույնպես համալրել էլ. ուսուցման տարրերով, ինչպես նաեւ ներառել ՏՀՏ արդի գործիքարանի հետ ծանոթացման եւ դրա կիրառման մոդուլներ:

Առանձնահատուկ կաեւորություն պետք է տրվի նաեւ ուսուցողական եւ գործնական աշխատանքների համադրմանը, քանի որ ստացված գիտելիքները եւ մեթոդները հնարավոր է լիովին յուրացնել միայն դաշտում երիտասարդների տարբեր համայնքների հետ գործնական աշխատանքների իրականացման պարագայում:

Ուսուցանման հնարավոր ֆորմատները

Երիտասարդական աշխատանքի մասնագետների պատրաստումը պետք է կազմակերպվի երկարժամկետ բազմափուլ ուսուցման ֆորմատով (long-term training): Ծրագիրը պետք է բաղկացած լինի մի քանի առկա (face to face) դասընթացներից, որոնց միջեւ ընկած ժամանակահատվածում մասնակիցները պետք է աշխատեն իրենց գործնական առաջադրանքների վրա, ինչպես նաեւ անցնեն էլեկտրոնային հեռավար ուսուցում այս ծրագրի համար նախագծված եւ կառուցված համապատասխան էլ. ուսուցման հարթակում: Խիստ ցանկալի է նաեւ ողջ ուսուցանման ընթացքում կիրառել հավասարը հավասարին աջակցության մեխանիզմներ մասնակիցների միջեւ, ինչպես նաեւ համակարգված մենթորինգ եւ քոուչինգ:

Ընդհանուր կուրսից բացի պետք է նախագծվեն նաեւ թեմատիկ դասընթացներ երիտասարդական աշխատանքի տարբեր մասնագիտական ոլորտների, ինչպես նաեւ որոշակի յուրահատուկ թիրախ խմբերի (օրինակ՝ գյուղական երիտասարդություն, հաշմանդամություն ունեցող անձինք, փախստականներ) եւ համայնքների հետ աշխատանքի ոլորտներում: Այս թեմատիկ դասընթացները կարող են կիրառվել ոչ միայն երիտ. աշխատանքի մասնագետների պատրաստման, այնպես էլ վերապատրաստման նպատակներով:

Բոլոր մակարդակների դասընթացների համար առաջարկվում է այսպես կոչված 50/50 մոտեցումը, ինչը նշանակում է, որ ուսուցման մեջ ներառվում են և հկ դաշտի և ՏԻՄ և պետական մարմերնների երիտասարդական պատասխանատուները, ովքեր համատեղ ուսուցանում են անցնում, որը բացի գիտելիքներից հնարավորություն է տալիս նաև միմյանց ճանաչել և պրակտիկայում պետական սեկտորի և հկ սեկտորի համարգործակցային մոդելներ մշակել:

Յուրաքանչյուր մակարդակի համար պետք է մշակվեն ծրագրերի կոնցեպցիաներ, ներառելով՝ ունակությունների փաթեթ, ինքնագնահատման գործիք, համապատասխան ձեռնարկներ, հստակ ուուցման ծրագիր, արդյունքների և որակի չափման համակարգ:

Ի լրում, նշենք նաև, որ հետազոտության արդյունքում, հստակեցվեց այն մոտեցումը, որ ԵԱ մասին տեղեկացվածությունը և երիտասարդների հետ աշխպատող մարդկանց մոտ դրա շուրջ գոնե թե բազային գիտելիքներն ու ունակությունները միայն դրական դեր կարող են խաղալ ընդհանուր առմամբ նրանց աշխատանքի որակի բարելավման և ոլորտի պրոֆեսիոնալացման վրա: Ուստի առաջարկված ծրագիրը խնդիր ունի տարածելու ոլորտի ձեռքբերումները և ԵԱ նաև օգտագործելի դարձնելու այլ հարակից դաշտերում:

Ուսուցման առաջարկվող մակարդակները

Մակարդակ	Նկարագրություն	Թիրախ
Առաջին մակարդակ: Ներածական ընդհանուր կուրս	Կուրսը հիմնականում ներառում է Երիտասարդական աշխատանքի ներածություն, ոչ ֆորմալ կրթություն, երիտասարդական պետական քաղաքականություն, երիտասարդական աշխատանքի մոտեցումներ, թիրախներ, սահմանումներ, հիմնական գործառույթներ, նպատակներ, միջազգային փորձ, համայնքային, երտասարդական և ուսուցողական կարիքների վերհանում, ծրագրային կառավարում, համագործակցություն, և այլն:	երիտասարդաական աշխատանքով հետաքրքրված անձինք, սույն մասնագիտացմանը ձգտող անձիք, հասարակական սեկտորի ներկայացուցիչներ, ովքեր հատկապես զբաղվում են կամ ծրագրում են զբաղվել երիտասարդենրին առնչվող ծրագրերով երիտասարդների հետ կրթական կամ ժամանցային ծրագրեր իրականացնող մասնագետներ, սոցիալական աշխատողներ, ՏԻՄ և պետական ոլորտի ներկայացուցիչներ, սպորտային մարզիչներ, խմբակների ուսուցիչնեչ, դասղեկներ, դպրոցի կազմակերպիչներ, հայորդաց տների աշխատակիցներ, ճամբարավարներ, սոցիալական մանկավարժության ուսանողներ/շրջանավարտներ, բանակում, հատուկ հաստատություններում, մանկատներում աշխատող սոցաշխատողներ, և այլն:
Երկրորդ մակարդակ:	Մարդիկ ովքեր անցել են ներածական կուրսը, կարող են անցնել հաջորդ մակարդակի ուսուցման, կամ բավարարվել	Պրակտիկ գործունեություն իրականացնող երիտասարդական աշխատողներ

երիտասարդական աշխատողների խորացված կուրս	ներածական կուրսով: Սակայն եթե նրանք ուզում են աշխատել պետական ֆինանսավորմամբ և պետության մողմից իրականացվող ծրագրեում և կառույցներու, պարտադիր է նաև խորացված կուրս անցնել: այս դասընթացը հնարավորություն է տալիս խորացնել գիտելիքները և այն ներառում է պարտադիր գործնական աշխատանք ի առակյություն ծրագրի շրջանակներում: Գործնական աշխատանքը կարող է իրականացվել սեփական կառույցներում կամ երիտասարդական աշխատանքով զբաղվող այլ կառույցներում: Գործնական աշխատանքի շրջանակներում մասնակիցները աշխատում են նաև մենթորների կամ քոուչների հետ՝ ովքեև սատարում են, օգնում են, ուղղորդում են, միասին վերլուծում են անցած փորձառությունը: Այս փոլում բացառիկ կարևորություն է ստանում ինքնավերլուծության, ինքնագնահատականի և անձնային աճի և ուսուցման պլանների հետ աշխատանքը:	
Երրորդ մակարդակ: մասնագիտացված կուրս	Այս մակարդակում ուսուցողական ծրագրերը արդեն հստակ մասնագիտացում ունեն, ելնելով եաիտասարդական աշխատանքի թիրախներից /հաշմանդամություն ունեցող, ազգային փոքրամանսւոյթւոններ, փախստականներ, սոցիալապես անապահով ընտանիքների երիտասարդնեչ, և այլն/ ձևերից /փողոցում իրականացվող, ակումբային, հատուկ հաստատաություններու իրականավող, դպրոցական, և այլն երիտասարդական աշխատանք/, մեթոդաբանությունից:	Հատուկ թիրախային խ,ների հետ աշխատող, աշխատել ցանկացող երիտասարդական աշխատողներ, նեղ մասնագիտական ոլորտների պատասխանատուներ պետական և համայքնային կառույցներից, հատուկ դպրոցների սոցիալական մանկավարժներ և սոցաշխատողներ

	Սույն մակարդակում ուսուցման համար հարկավոր է անցնել առաջին երկու մակարդակների ուսուցանումը: Երրորդ մակարդակի կուրսը ևս իր մեջ պրոֆեսիոնալ մասնագիտացված կառուցյներում գործնական աշխատանք է ենթադրում: Սույն ծրագրրը կարող են առաջարկվել ելնելով որոծակի հստակ պահանջարկից կամ պետական պատվերից:	

Ուսուցումը տրամադրող կառույցները

Եվրոպական տարբեր երկրներում ԵԱ մասնագետների պատրաստման համակարգերը տարբերվում են: Անգամ ԵԱ լուրջ փորձ ունեցող երկրներում, ինչպիսիք օրինակ Բելգիան և Ավստրիան են ԵԱ պատրաստմամբ հաճախ զբաղվում են երիտասարդական կազմակերպությունները: Ազգային որոշակի ստանդարտների առկայությունը հնարավորություն է տալիս տարբեր կազմակերպությունների զբաղվել մասնագետների պատրաստմամբ: Մասնագիտական ուսուցողական ծրագրերը տարբեր ենմ սակայն ըստ այն տրամադրող կառույցի հնարավոր է տեսնել հիմնականում հետևյալ իրավիճակը՝

- պետական կառույցների միջոցով
- պետական կառույցների կողմից ՀԿ դաշտի հետ համագործակցությամբ
- ՀԿ ոլորտի կողմից, որոշակի պտական չափանիշներին համապատասխանող և հաստատված/սերտիֆիկացված ծրագրերի միջոցով
- ՀԿ ոլորտի կողմից սեփական առաջարկվող ծրագրերի միջոցով, որոնք ստանում են պետական մարմինների հավանություն
- Երիտասարդական ինստիտուտ /պետական մարմնի կազմում գործող
- ԲՈՒՀ-ական կամ լրացուցիչ կրթական մարմինների կողմից

Մեր պատկերացմամաբ, ցանկացած ուսումնական գործընթաց պետք է նախ բխի ու համապատասխանի որոշակի սկզբունքների, մասնավորապես

- ուսուցման կազմակերպման մեջ համագործակցային մոտեցում պետական, մունիցիպալ, հասարակական, կրթական, այլ գերատեսչությունների միջև
- ուսուցողական ծրագրերը պետք է տրամադրվեն ոչ միայն ոչ-ֆորմալ, այլև ֆորմալ մասնագիտական կրթության միջոցով՝ փոխլրացման սկզբունքով, բխելով ամեն մարմնի յուրահատուկ հատուկ փորձագիտական ունակությունների և ռեսուրսների վրա հիմնվելով
- ուսուցման ապահովումը իրականացնել և ծրագրել ոլորտում գործող պահագրգիռ կողմերի, պոտենցիալ գործատուների հետ քննարկումների հիման վրա

Ուսուցման տարբեր մակարդակների կրթական ծրագրերի մասնակիցները

Ելնելով այն հանգամանաքից, որ առաջարկված եռաքայլ ուսուցողական ծրագրերը հնարավորություն են տալիս յուրաքանչյուր մասնագտի ստանալ բազային գիտելիքների մինչև խորացված մասնագիտական ունակություններ, ուստի ամեն աստիճանի ուսուցողականա ծրագրում մասնակիցներիհնարավոր նկարագիրը (profile) և թիրախը տարբեր կլինի: Առաջարկված ուսուցման ծրագրերը բաց են, և

միտված են ծածկել ընդհանուր առմամբ պատանիների և երիտասարդների հետ տարբեր հարթություններում և միջավայրերում աշխատող մարդկանց/մասնագետների տիրույթը: Ուստի առաջարկվում է, որպես հնարավոր թիրախ ուսուցման և վերապատրաստման համար դիտարկելավելի լայն շրջանակ, քան միայն հկ ներգրավվախ անձանց և հանրայինծառայողներին, ով ի պաշտոնե զբաղվում է երիտասարդության հարցերով, բայց և բոլոր այն ոլորտների մարդկանց, ովքեր հարակից դաշտերից են: Ստորև բերված է այդ հնարավոր ուսուցման մասնակիցների տարբեր կատեգորիաներ:

գործող երիտասարդական աշխատողներ	դպրոցների ուսուցիչներ եւ կազմակերպիչներ	մարզպետարանների եւ քաղքապետարենների աշխատողներ	Համայնքային երիտասարդական նախաձեռնող խմբեր
ուսանողներ համապատասխան կրթությամբ	մանկավարժական ԲՈՒՀ-երի շրջանավարտներ	բանակային կառույցների ուսուցանողներ եւ կազմակերպիչներ	երիատասարդությամբ զբաղվող միջազգային կազմակերպություններ
երիատասարդական կազմակերպությունների անդամներ եւ կամավորներ	հայորդյաց տների եւ ճամբարների ուսուցանողներ	քաղաքական կուսակցությունների երիտասարդական թեւեր	ազգային փոքրամասնությունների համայնքային կառույցներ
սոցիալական աշխատողներ	քաղծառայողներ պետական սեկտորից	ուսանողական ինքնակառավարման մարմիններ	ՀԿ աշխատակիցներ

Երիտասարդական աշխատողը աշխատաշուկայում

Երիտասարդական աշխատողների ուսուցման և վերապատրաստման ծրագրերը սերտորեն կապված են նաև ԵԱ աշխատաշուկայի հետ: Ուստի կարիք կա ընդհանուր առմամբ դաշտի մարքետինգային ուսումնասիրությունների, որը հնարավորություն կտա պարզելու երիտասարդականա աշխատողների պահանջարկը, նրանց գործունեության ակնկալիքները, հնարավոր գործառույթների տիրույթը, տարբեր մարմիններում աշխատանքի նրանց ներկայացվող պահանջները, տարբեր հարակից ոլորտներում երիտասարդական աշխանանքի ներմուծման հնարավորությունները: Սա հնարավորություն կտա ուսուցման բովանդակությունն առավել թիրախված և ըստ պահանջի դարձնել: Սույն գործընթացը կարող է հնարավեր մի քանի ստորև նշված տարրեր ունենալ:



ՀՀ-ում երիտասարդական աշխատանքի զարգացման խթանման համար անհրաժեշտ նախապայմանները և անհրաժեշտ գործողությունները

Կատարված ուսումնասիրության, կլոր սեղանային քննարկումների և միջազգային փորձագետների այցելությունից ու քննարկումների արդյունքում, նախանշվեցին այն հիմնական քայլերն ու միջոցառումները, որոնք անհրաժեշտ են ոլորտի կայացման և հետագա շարունակական զարգացման համար: Այս միջոցառումները վերաբերում են իրավական դաշտի կարգավորումներին, կրթական համակարգերի անհրաժեշտ փոփոխություններին, պետություն ՏԻՄ երրորդ սեկտոր համագործակցային մեխանիզմներին, և այլն: Ստորև ներկայացնում ենք հստակ ոլորտներն ու ցանկալի միջոցառումները ոլորտի բարելավման համար:

Ոլորտ	Առաջարկվող գործողություն
Իրավական դաշտ	- երիտասարդական աշխատանքի մասին առանձին ՀՀ հայեցակարգի մշակում ԿԱՄ ՀՀ երիտասարդական քաղաքականության հայեցակարգի մեջ ոլորտն առավել հստակ սահմանող առանձին գլուխ - Երիտասարդական քաղաքականության նոր ռազմավարության մեջ երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողների պատրաստման մասին գործողությունների սահմանում - Հայցակարգի հիման վրա ԵԱ զարգացման աշխատանքային պլանի մշակում և առանձնացված բյուջեի հատկացում - ոլորտի զարգացման ու կարգավորման համար իրավականորեն սահմանված միջգերատեսչական համագործակցության խթանում՝ հատկապես սպորտի և երիտասարդության հարցերի, կրթության և գիտության և սոցիալական ապահովության, տարածքային կառավարման նախարարությունների միջև/հետ, - հկ/աշխատող/պետական ոլորտ շփման ու համագործակցության 50-50 ձևաչափով հարթակների մշակում ստեղծում /ուսուցողական համատեղ ծրագրեր, համատեղ քննարկման ֆորումներ, …/ - երիտասարդական աշխատանքի իրականամցնա պետական քաղաքականության սահմանում - պետական մակարդակում Երիտասարդության Ինստիտուտի ստեղծում

Ոլորտի որակի ապահովում	Երիտասարդական աշխատանքի Ազգային մինիմալ ստանդարտների մշակում /կապված ազգային երիտասարդական քաղաքականության առաջնահերթությունների և ուղղությունների հետ/ ԵԱ ծառայող մատուցող կառույցների ներքին հատուկ ստանդարտների, ուղենիշների, աշխատանքի կանոնակարգերի մշակման խթանում Որակի ստանդարների մշակման ուսուցողական ձեռնարկի պատրաստում և ուսուցողական մոդուլների մշակում Որակի ստանդարների օգտագործում անձանց ու կառույցների կարողությունների նաև աշխատանքի որակի ու ազդեցության զարգացման համար Անվտանգության և ապահովության չափանիշների սահմանում երիտասարդական աշխատանք տրամադրող կառույցների գործունեության համար
Ունակությունների սանդղակի և ծրագրերի մշակում	- Երիտասարդական աշխատողների ունակությունների փաթեթի մշակում և փորձարկում, - դրա հիման վրա ինքնագնահատման մեխանիզմի սահմանում, - դրանց հիման վրա համապատասխան ուսուցողական գործընթացի և կրթական ծրագրի մշակում
ԵԱ ընդհանուր հարթակ	Եարիտասարդակնա աշխատանք տրամադրող կառույցների, երիտասարդական աշխատողների, հանրային ժառայողների, ոլորտի միջազգային կառույցների համար ընդհանուր հարթակի ստեղծում, որը հնարավորություն կտա մասնագետների և այլ շահագրգիռ կառույցների շարունակական զարգացման փորձի փոխանակման, փոխօգնության, արդյունավետության բարձրացման, համատեղ լոբինգի, և այլն: Հարթակն իր մեջ կարող է ներառել՝ - ԵԱ ինտերնետային պորտալ - երիտասարդական աշխատողների ասոցիացիա/ արհմիություն - ուսուցողական նյութերի բազա - գիտահետազոտական նյութերի բազա - որակի ապահովման և որակի նիշերի սահմանման մարմին/համակարգ - պարբերական ուսուցողական ծրագրեր
ԵԱ ոլորտի ֆինանսավորում	- դոնորային համայնքի կոորդինացիա ապահովող մեխանիզմի սահմանում

	- ՏԻՄ և համայքների ռեսուրսների մոբիլիզացիայի հնարավոր ապահովում և խթանում՝ տեղերում ոլորտի ֆինանսավորման համար
Երիտասարդական աշխատողների աշխատատեղեր	Տարբեր ոլորտների երիտասարդական աշխատողերի ներգրավման և աշխատանքի տրամադրման կարիքների քարտեզագրում

Օգտագործված աղբյուրները

Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, 2014

Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենք

Нахеева Н. Хроника основных событий государственной молодежной политики , 2009

Основы государственной молодежной политики Российской Федерации на период до 2025 года, 2014

Children and young persons act, Singapore, 2011

Country sheet on youth policy in Belgium

Deltuva A. A story of youth work in Lithuania

Haarder B, Danish Youth policy,

Höylä S, Sinisalo-Juha E. "The biggest educator in youth work field in Finland" 2015

Kriauciunas N. Youth Worker's Certification System in Lithuania, 2012

Lithuanian youth policy: Legislation, Structures, Good Practices, 2013

Moving Societies towards Integration, project report

National Occupational Standards for Youth Work, 2008

National report: First cooperation cycle of the EU Youth Strategy 2010-2012

National Youth Survey in Georgia: Analysis of the Situation and Needs of Youth in Georgia , 2014

Nieminen J. The history of youth work as a profession in Finland, 2010

Peltola M. Youth Work in Finland: Finding Ways for Intercultural Opening , National report for the project "Moving Societies towards Integration?" , 2010

Policy papaer on Youth work in the European Youth Forum and youth organizations, 2014

Recommendations for Peer-to-peer in youth information work , Lithuania

Resolution of the Council and of the representatives of the governments of the member states, meeting within the Council, on youth work, 2010

Scope of Youth Work in Europe, Study commissioned by the partnership between the European Commission and the Council of Europe in the field of Youth and conducted by the Institute for Social Work and Social Education, 2009

The Finnish Government's Child and Youth Policy Programme 2007–2011
The Finnish Government's Child and Youth Policy Programme 2012-2015

The Georgian National Youth Policy Document , 2014

Tuominen S. Online Youth Work in Finland

Williamson H. "Finding common ground: Mapping and scanning the horizons for European youth work in the 21st century", 2015

Working with young people: The value of youth work in the EU Country report: Dutch speaking community of Belgium, Denmark, 2014

Working with young people: the value of youth work in the European Union, 2014

http://neuvoo.ca/emplois/educateur-specialise/

http://www.aufzaq.at

http://www.centrejeunessedemontreal.qc.ca/

http://www.coe.int/en/web/youth-portfolio

http://www.collegemv.qc.ca/CMS/MediaFree/image/pdf_divers/Portrait%20des%20TES%20-%20m5m%20-%20version%20finale%20+%20ann%203.pdf

http://www.immigrer.com/faq/sujet/educateur-educatrice-specialisee-au-quebec.html

http://www.metiers-quebec.org/enseignement/educateur_spec.htm

http://www.rifssso.ca/rfteso/qui-sont-les-tes/

http://www.servicecanada.gc.ca/fra/qc/emploi_avenir/statistiques/4215.shtml#exemples

ՀԱՎԵԼՎԱԾ

Երիտասարդական աշխատանքի միջազգային փորձը: Երկրների փորձի ներկայացում

ԵՐԿԻՐԸ: ԲԵԼԳԻԱ /ՖԼԱՄԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Երիտասարդական աշխատանքի սահմանումը

Երիտասարդական աշխատանքը Ֆլամանդական մասում սահմանվում է որպես ազատ ժամանցի կազմակերպման ոլորտում 3-ից 30 տարեկան երիտասարդների համար կամ երիտասարդների կողմից կազմակերպվող ոչ-առևտրային, կամավորական սոցիալ-մշակութային աշխատանք, որն իրականացվում է կրթական ուղղորդմամբ: Այն նպաստում է երիտասարդների լիարժեք զարգացմանը: Վերոնշյալ սահմանումը տարածվում է թե ֆորմալ և թե ոչ-ֆորմալ երիտասարդական աշխատանքի վրա, քանի որ երիտասարդական աշխատանքի այս երկու տեսակներն էլ իրականացվում են շահույթ չհետապնդող կազմակերպությունների կողմից:

Ընդհանուր առմամբ Ֆլամանդական երիտասարդական աշխատանքում կան երկու հատվածներ.համընդհանուր երիտասարդական աշխատանք և թիրախավորված երիտասարդական աշխատանք: Համընդհանուր երիտասարդական աշխատանքը վերաբերում է այն աշխատանքներին, որոնք տարբերակում չեն դնում թիրախ խմբերի միջև. դրանք հասանելի են և ուղղված են երիտասարդների բոլոր խմբերին: Այն ներառում է երիտասարդական շարժումները (Սկաուտները և Չիրո) և նաև բազմաթիվ այլ տեսակներ (այն է՝ մարզաձևերի ասոցիացիաներ, երիտասարդական քաղաքական ասոցիացիաներ, երիտասարդական կենտրոններ կամ ակումբներ, երիտասարդների արվեստի սիրողական ասոցիացիաներ, երիտասարդական սեմինարներ):

Երիտասարդական շարժումները դրանք սովորաբարերիտասարդական կազմակերպություններ են կամ 16-ից բարձր տարիք ունեցողերիտասարդներն իրենք, որոնք վարում են տեղական խմբերը և երիտասարդների որոշակի խմբերի համար կանոնավոր կերպով կազմակերպում միջոցառումներ: Այս տիպի աշխատանքները սովորաբար հիմնված են կամավարության սկզբունքի վրա՝ արհեստավարժ երիտասարդական աշխատողների շատ քիչ ներգրավվածությամբ կամ առանց այդ ներգրավվածության: Թիրախավորված երիտասարդական աշխատանքն ուղղված է երիտասարդների դժվար հասանելի խմբերին, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող երիտասարդները, ներգաղթյալ կամ միգրացիոն անցյալ ունեցող և սոցիալապես խոցելի երիտասարդները: Այս խմբերի հետ աշխատանքները կազմակերպվում են ինքնակազմակերպման և կամավորության հիմունքներով և այդ

աշխատանքներին հաճախ աջակցում են արհեստավարժ երիտասարդական աշխատողները: Թիրախավորված երիտասարդական աշխատանքի շրջանակներում իրականացվող նախաձեռնությունների մի մասը կոչվում են “բաց նախաձեռնություններ”, քանի որ դրանք չեն պահանջում կանոնավոր և պարտադիր հաճախելիություն և չեն պահանջում մասնակցություն նախորոք պլանավորված խմբային աշխատանքներին:

Ֆլանդրիայում, համայնքային երիտասարդական կազմակերպությունների ֆինանսավորումը հիմնականում կազմակերպվում է տեղական մակարդակում՝ որպես համայնքային երիտասարդական քաղաքականության մի մաս:Չնայած դրան,Ֆլանդրիայի կառավարությունըառանձին ֆինանսավորման ծրագիր ունի նաև ազգային մակարդակում գործող կազմակերպությունների, ինչպես նաև փորձարարական ծրագրերի համար: Կառավարությունը պատասխանատու է նաև համայնքային մակարդակում երիտասարդական աշխատանքի շրջանակն ու առաջնահերթությունները սահմանելու համար:

Երիտասարդական աշխատանքի թիրախներ (օր.՝տարիքայինսահմաններ, երիտասարդներհատուկկարիքներով, բարդսոցիալականիրավիճակումհայտնված, ծնողազուրկ, մեյնսթրիմ)

Ինչպես վերը նշվեց, կան երիտասարդական աշխատանքի երկու տեսակներ, որոնց հիման վրա էլ սահմանվում են թիրախ խմբերը (համընդհանուր և թիրախավորված երիտասարդական աշխատանք): Համընդհանուր երիտասարդական աշխատանքը ուղղված է “բոլոր երիտասարդներին”: 2010թ. դրությամբ վեց ամենախոշոր Ֆլամանդական շարժումները միասին վերցրած ունեին 232.000 անդամներ, որոնցից մոտավորապես կեսը տասներկու տարեկանից փոքր էին: Թիրախավորված երիտասարդական աշխատանքը հիմնականում ուղղված է երիտասարդների դժվար հասանելի խմբերին, ինչպիսիք են սոցիալապես խոցելի երիտասարդները, հաշմանդամություն ունեցող, ներգաղթյալ կամ միգրացիոն անցյալ ունեցողներ երիտասարդները:

Տեղական մակարդակում, թվով 93 համայնքներում գործում էին 184 երիտասարդական նախաձեռնություններ, որոնք հատկապես ուղղված էին դժվար հասանելի խմբերին: Տարիքային խմբերի առումով, հարցվածները նշում էին, որ մասնակցությունը երիտասարդական կազմակերպություններում սկսվում է 7 տարեկանից մինչ 16 կամ 18 տարեկանը: 16-ից 21 տարեկան երիտասարդները հիմնականում ներգրավված են որպես կամավորներ, իսկ 24 տարեկանից բարձր երիտասարդների մասնակցությունը կտրուկ նվազում է: Հասկանալիորեն, 24-ից 30 տարեկան երիտասարդների մասնակցությունը շատ ցածր է:

Երիտասարդական աշխատանքի իրականացման առաջնային/հիմնական ձևաչափեր (օր. ակումբներ, երիասարդական կենտրոններ, փողոցում իրաանացվող աշխատանք, և այլն)

Ֆլանդրիայում չկա հստակ սահմանազատում ֆորմալ և ոչ-ֆորմալ երիտասարդական աշխատանքի միջև.փոխարենը հստակ սահմանազատում կա համընդհանուր և թիրախավորված երիտասարդական աշխատանքի միջև: Համընդհանուր երիտասարդական աշխատանքը հիմնականում ներգրավում է միջին դասը ներկայացնող երիտասարդներին և վերջիններիս առաջարկում ազատ ժամանցի կազմակերպման խելամիտ տարբերակներ: Այն հիմնականում տրամադրվում է երիտասարդների կողմից, թեևերբեմն լինում է նաև արհեստավարժ երիտասարդական աշխատողների աջակցությունը: Համընդհանուր երիտասարդական աշխատանքում, մասնագետ երիտասարդական աշխատողների դերը հանգում է ավելի շատ կամավորներին աջակցելու քան թե վերջիններիս փոխարեն աշխատանքներն իրականացնելու գործին:

Թիրախավորված երիտասարդական աշխատանքը զբաղվում է դժվար հասանելի խմբերով և առաջարկում է նրանց հավելյալ կամ փոխհատուցման աջակցություն, որը հաճախ կրում է կրթական բնույթ: Այս տիպի երիտասարդական աշխատանքը տրամադրվում է արհեստավարժների և կամավորների կողմից: Մասնագետների ներգրավվածությունը դժվար հասանելի խմբերի (ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող երիտասարդները, ներգաղթյալ կամ միգրացիոն անցյալ ունեցող երիտասարդները, սոցիալապես խոցելի երիտասարդները) հետ աշխատանքներում շատ կարևոր է, քանի որ այս աշխատանքները առաջարկում են ավելին, քան զուտ ազատ ժամանցի կազմակերպումն է և շեշտը դնում են լրացուցիչ և փոխհատուցվող կրթական աջակցության վրա (այն է՝ տնային հանձնարարությունների կատարում, լեզվական դասընթաց): Ի տարբերություն համընդհանուր երիտասարդական աշխատանքի, թիրախավորված երիտասարդական աշխատանքի մեջ՝ թիրախ խմբերի հետ աշխատանքներում ներգրավված են մասնագետները, քանի որ պահանջվում է մասնագիտական ավելի խոր աջակցություն: Կամավորները նույնպես ակտիվորեն ներգրավված են այս ոլորտում:

Ընդհանուր առմամբ, Ֆլամանդական երիտասարդական աշխատանքը որպես ամբողջություն հիմնականում իրականացվում է կամավորության հիմունքներով և բնութագրվում է արհեստավարժ երիտասարդական աշխատողների սահմանափակ ներգրավվածությամբ: Մյուս կողմից, երիտասարդական խնամքի ոլորտը, թեև չի հանդիսանում երիտասարդական աշխատանքի մաս, մեծապես մասնագիտացած է: Երիտասարդական խնամքի ոլորտը կենտրոնացած է տարբեր դժվարություններ

ունեցող երիտասարդների վրա (այն է՝ մտավոր, սոցիալական և մանկավարժական խնդիրներ ունեցող) և հետևաբար, լավ պատրաստված մասնագիտական անձնակազմի կարիքը անհրաժեշտ է՝ այս խմբերին աջակցելու համար: Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական խնամքի ոլորտները առանձնացված են, սակայն կան կապող օղակներ, որոնք հնարավորություն են տալիս մեկ ոլորտից մյուսին երիտասարդների անցումը սահուն իրականացնելու համար:Կան կապող օղակներ նաև երիտասարդական աշխատանքի և այլ ոլորտների միջև (այն է՝ կրթություն, երիտասարդների բարեկեցություն, կանխարգելում, մշակույթ), բայց հարցվածները նշում էին, որ այդ համագործակցությունը միշտ չէ որ ակներև է և կարիք ունի հետագա բարելավման: Սույն ազգային զեկույցի շրջանակներում, երիտասարդական խնամքի ոլորտին անդրադարձ չի կատարվում, քանի որ այն առանձին ոլորտ է:

Ձևեր. Երիտասարդական շարժումներ, սկաուտական շարժում, խաղային ասոցիացիաներ, համայնքային և մասնավոր երիտասարդական ակումբներ/կենտրոններ, երիտասարդների բարեկեցությանն ուղղված ծրագրեր, հարևանության/տարածքի շրջանակներում տարվող աշխատանք, ՏԻՄ երիտասարդական ծառայություն:

Երիտասարդական աշխատողի ինստիտուտը (ֆունկցիաներ, իրավական ստատուս, կարգավորող իրավական հիմքեր)

Երիտասարդական աշխատանքը որպես այդպիսին պաշտոնապես ճանաչված չէ Ֆլանդրիայում, և հետևաբար չկան երիտասարդական աշխատանքի համապատասխան ուսուցողական ծրագրեր կամ որակավորում տրամադրող այլ ծրագրեր: Երիտասարդական աշխատողների մեծ մասը ուսուցանում են այլ մասնագիտություններ, ինչպիսիք են սոցիալ-մշակութային աշխատող (որը կազմում է ավելի լայն սոցիալական աշխատանքի բակալավրի կոչում շնորհող ծրագրի մի մաս) կամ մանակավարժություն, բայց նրանք կարող են ունենալ նաև այլ կրթություն, քանի որ ինչպես վերը նշվեց, երիտասարդական աշխատողի որակավորում գոյություն չունի: Երիտասարդական աշխատողների համար չկա կրթական հստակ ուղի. անկախ կրթության աստիճանից և փորձից, ոլորտում աշխատող բոլոր երիտասարդական աշխատողներ կարող են ձեռք բերել երիտասարդական աշխատողի վկայականներ: Այս վկայականները շնորհվում են Մշակույթի, երիտասարդության և սպորտի, և Մամուլի նախարարության կողմից (by the Ministry of Culture, Youth Sport and Media)՝ հաստատված ուսուցողական դասընթացն ավարտելուց հետո:

Երիտասարդական աշխատանքը որպես այդպիսին պաշտոնապես ճանաչված չէ Ֆլանդրիայում, բայց “երիտասարդական աշխատող” սահմանումը այնուամենայնիվ սահմանված է օրենքով: 2008թ. հուլիսի 18-ի որոշումը սահմանում է երիտասարդական աշխատողին որպես “ցանկացած անձ, որը պատասխանատվություն է ստանձնում երիտասարդական աշխատանքում և ունի տեսանելի փորձ կամ երիտասարդների հետ կապված ջանքեր է գործադրում կրթության և ուսուցման ոլորտներում”: Անհրաժեշտ է նշել, որսահմանումը չի տարանջատում կամավոր և վարձու աշխատող երիտասարդական աշխատողներին: Երիտասարդական աշխատանքի ոլորտը հիմնականում հիմնված է կամավորության վրա՝ մասնագիտական անձնակազմի զբաղվածության սահմանափակ հնարավորություններով: Վերջիններս ավելի ակտիվ են երիտասարդական խամքի բանագավառում (այն է՝ սոցիալական աշխատանք): Թվում է, որ ընդհանուր առմամբ երիտասարդական աշխատանքի որակավորման, և հետևաբար դրա ճանաչման կարիքը այդքան էլ չկա, որը պայմանավորված է ոլորտում ներգրավված կամավորների մեծ մասնաբաժնով: Շատերի կարծիքով, կամավորների ներգրավվածությունը, ինչպես նաև կրթական աստիճանների բազմազանությունը Ֆլամանդական երիտասարդական աշխատանքի հիմնական ուժեղ կողմերից մեկն է:

Ընդհանուր առմամբ, արհեստավարժ երիտասարդական աշխատողները հարաբերականորեն երիտասարդ են, նոր ավարտած (որը նշանակում է, որ նրանք ձեռք են բերում իրենց առաջին աշխատանքային փորձը որպես երիտասարդական աշխատողներ): Այնուամենայնիվ, շատ տարածված է, որ երիտասարդական աշխատողները մի քանի տարվա ընթացքում տեղափոխվում են այլ աշխատանքի, մասամբ պայամանավորված այն հանգամանքով, որ երիտասարդական աշխատանքի ոլորտում, այլ ոլորտների հետ համեմատած աշխատավարձերը ցածր են (օրինակ համեմատած սոցիալական աշխատանքի կամ երիտասարդական խնամքի ոլորտների): Ոլորտի ներսում, սա այդքան էլ բացասական չի դիտարկվում: Այսինքն, միշտ կա նոր երիտասարդական աշխատողների մշտական ներհոսք, մինչդեռ նախկին երիտասարդական աշխատողները անցում են կատարում հարակից այլ կազմակերպություններ և ոլորտներ (այն է՝ տեղական, տարածաշրջանային կամ ազգային մարմիններ, այլ ՀԿ-ներ): Սա երաշխավորում է նաև, որ կան համապատասխան կապեր երիտասարդական աշխատանքի ոլորտի և այլ ոլորտների միջև: Երիասարդական խնամքի ոլորտը, որը երիտասարդական աշխատանքի մաս չի հանդիսանում, մեծապես մասնագիտացված է, քանի որ վերջինս աջակցում է մտավոր, սոցիալական և մանկավարժական խնդիրներ ունեցող երիտասարդներին, որտեղ արհեստավարժ մասնագետների հստակ կարիք կա:

Երիտասարդական աշխատողների պրոֆիլի հետ կապված չկան հասանելի տվյալներ, բայց ինչպես վերը նշվեց, քանի որ Ֆլանդրիայում երիտասարդական աշխատող

դառնալու համար չկա ակադեմիական որակավորման կարիք, ապա դաշտում առկա արհեստավարժ երիտասարդական աշխատողների մեծ մասը ունի հարակից ոլորտների կրթություն, ինչպիսիք են սոցիալ-մշակութային աշխատող (սոցիալական աշխատանք), հոգեբանություն կամ մանկավարժություն:

2012թ.հունվարի 20-ի որոշմամբ ընդունված փաստաթուղթը, որը ունի “Երիտասարդների և երեխաների իրավունքների իրականացման Ֆլամանդական քաղաքականությունը” անվանումը մատնանշում է երկրի երիտասարդական քաղաքականության հիմնական սկզբունքները: Այս որոշմամբ սահմանվում են նաև “երիտասարդական աշխատանք”, “երիտասարդական աշխատող” և “երիտասարդական կազմակերպություն” հասկացությունները և նշվում է, որ Ֆլամանդական կառավարությունը պատասխանատու է երիտասարդական քաղաքականության ծրագրի մշակման համար, որտեղ հատուկ շեշտ պետք է դնել երիտասարդական աշխատանքի վրա: Որոշումը մատնանշում է նաև մի շարք պահանջներ ազգային մակարդակում գործող երիտասարդական կազմակերպություններին ֆինանսավորում հատկացնելու մասով (սա չի վերաբերում տարածաշրջանային և համայնքային կազմակերպություններին, որոնք ֆինանսավորվում են ՏԻՄ-երի կողմից):

Երիտասարդական աշխատողի պատրաստման համակարգեր (ունակություններիշրջանակներ, պատրաստող կառույցներ, կրթական մոտեցումներ և ծրագրեր /ֆորմալ և ոչ ֆորմալ/)

Ուսուցողական դասընթացներըսովորաբար անցկացվում են երիտասարդական կազմակերպությունների կողմից և գնահատվում ու հաստատվում են նախարարության կողմից՝ ըստ մի շարք չափանիշների: Նախարարության կողմից շնորհվում են երիտասարդական աշխատողի վկայականների հետևյալ տիպերը.

- Անիմատոր – անիմատորի ուսոցողական դասընթացը կենտրոնանում է երիտասարդների հետ աշխատանքի ըմռնում, մոտեցումներ և հմտություններ զարգացնելու վրա: Այն հիմնված է տեսական մասի վրա (մասնակցություն – 60 ժամ) նախարարության կողմից հաստատված դասընթացում և գործնական մաս (60 ժամ ստաժավորում):

- ավագ անիմատոր – ավագ անիմատորի ուսոցողական ծրագիրը նպատակ ունի հավելյալ գիտելիքներ և հմտություններ փոխանցելու թեկնածուներին, որոնք երիտասարդական աշխատանքի շրջանակներում զբաղվելու են քոուչինգով: Ծրագիրը նպատակ ունի հզորացնելու երիտասարդների հետ աշխատանքի ըմռնումը, մոտեցումները և հմտությունները: Այն հիմնված է տեսական մասի վրա

(մասնակցություն – 30 ժամ) նախարարության կողմից հաստատված դասընթացումն գործնական մաս (30 ժամ ստաժավորում):

- Հրահանգիչ – հրահանգչի ուսոցողական դասընթացը նպատակ ունի զարգացնելու մասնակիցներին՝ որոշակի պարտականություններ ստանձնելու երիտասարդական կազմակերպություններում: Ծրագիրը կենտրոնանում է խմբային դինամիկայի ըմբռնմանն ու հմտությունների զարգացմանը, հաղորդակցության և կոնֆլիկտների կառավարման հմտությունների հզորացմանը: Այն հիմնված է տեսական մասի վրա (մասնակցություն – 30 ժամ) նախարարության կողմից հաստատվածդասընթացում և գործնական մաս (60 ժամ ստաժավորում):

- Ավագ հրահանգիչ – ավագ հրահանգչի ուսուցողական դասընթացը նպատակ ունի աջակցելու մասնակիցներին ստանձնելու կառավարչական կամ վերջնական պատասխանատվության ստանձնում երիտասարդական կազմակերպություններում: Ծրագիրը կենտրոնանում է մասնակիցներին Ֆլանդրիայում գործող երիտասարդական աշխատանքի տիպերի, դերակատարների և երիտասարդական քաղաքականության գործոնների մասին տեղեկատավություն և գիտելիքներ տրամադրելու վրա, ինչպես նաև հաղորդելու գիտելիքներ երիտասարդական մշակույթի ասպեկտների մասին:

Այն հիմնված է տեսական մասի վրա (մասնակցություն – 120 ժամ) նախարարության կողմից հաստատված դասընթացում և գործնական մաս (զեկույցի նախապատրաստում): Երիտասարդական աշխատողները պարտավոր չեն մասնակցելու այս վերջին տիպիդասընթացին, չնայած որ նրանց մասնակցությունը քաջալերվում է տեղական իշխանությունների կողմից, և այդ նպատակովերիտասարդական կազմակերպություններին հատկացվում է հավելյալ ֆինանսավորում՝ իրենց աշխատակիցներին այդ դասընթացին ուղարկելու համար: Որպես Երիտասարդական քաղաքականության ծրագրի մաս,Ֆլամանդական կառավարությունը ծրագրում էմշակել երիտասարդական աշխատանքի համար նախատեսվածունակությունների ծրագիր և նախատեսվում է, որ երիտասարդական աշխատողի վկայականները պետք է հարմարեցվեն և ինտեգրվեն որակավորումների ճանաչելիության ավելի լայն շրջանակին: Սա նաև ընդգծում է, որ երիտասարդական աշխատողների համար պլանավորվում էմշակելունակությունների պրոֆիլ,որը հնարավոր է, որ կհարմարեցվիվերջիններիս որակավորման պրոֆիլի հետ:

ԵՐԿԻՐԸ: ԼԻՏՎԱ

Երիտասարդական աշխատանքի սահմանումը (նպատակներ, արդյունք, հիմնարար արժեքային բազա և սկզբունքներ սոցիալ-փիլիսոփայական մեթոդաբանություն)

Երիտասարդական աշխատանքը լայն հասկացություն է, որն ընդգրկում է սոցիալական, մշակութային, կրթական, քաղաքական կամ այլ տեսակի աշխատանքներ ու ծրագրեր, որոնք իրականացվում են երիտասարդների կողմից, երիտասարդների հետ կամ երիտասարդների համար: Երիտասարդական աշխատանքը ընդգրկում է արտադպրոցական կրթության ոլորտը: Այն ներառում է նաև ազատ ժամանցի կազմակերպման աշխատանքները, որոնք իրականացվում են երիտասարդների և երիտասարդ առաջնորդների հետ աշխատող մասնագետների կամ կամավորների կողմից: երիտասարդական աշխատանքի կազմակերպման բազմաթիվ ձևեր կան: Դրանք կարող են կազմակերպվել երիտասարդների կողմից ղեկավարվող և երիտասարդների համար ստեղծված կազմակերպությունների կողմից, ոչ-ֆորմալ երիտասարդական խմբերի, ինչպես նաև երիտասարդների համար ծառայություններ մատուցող հանրային ինստիտուտների կողմից (օրենքի համաձայն): Գործնականում, երիտասարդական աշխատանքը հիմնականում կազմակերպվում է երիտասարդների հետ/համար աշխատող հանրային ինստիտուտների կողմից: Սովորաբար երիտասարդների կողմից ղեկավարվող կազմակերպությունները 2-3 տարի անց դադարում են ակտիվ գործունեություն ծավալել, իսկ ոչ-ֆորմալ խմբերը երիտասարդական աշխատանք որպես այդպիսին չեն կազմակերպում:

Երիտասարդական աշխատանքը Լիտվայում ընկալվում է որպես կրթական գործունեություն, որն իրականացվում է երիտասարդների կամ նրանց խմբերի հետ համատեղ, վերջիններիս ազատ ժամանակի ընթացքում և հիմնված է նրանց կարիքների վրա: Սա մի գործունեություն է, որը նպատակ ունի ներառելու և ինտեգրելու երիտասարդին սոցիալական միջավայրում և հնարավորություն տալու նրան գիտակցաբար և ակտվորեն մասնակցելու թե իր անձնական և թե հասարակական կյանքին: Այս առումով, երիտասարդական աշխատանքը փոխլրացնում է ֆորմալ կրթությանն ու ընտանեկան դաստիարակությանը:

Երիտասարդական աշխատողը ավելի շատ սոցիալական աշխատողի գործառույթներ ունի (սա բացատրվում է նրանով, որ երիտասարդների խնդիրներով զբաղվում է սոցիալական հարցերի նախարարությունը): Ներկայումս ընթացող երիտասարդական քաղաքականության փաստաթղթի վերանայման գործընթացի շրջանակներում առաջարկվում է, որ երիտասարդական աշխատողը (սա չի վերաբերում չպետք է միայն բաց երիտասարդական աշխատանքին) պետք է օրենքով ձեռք բերի ճանաչելիություն և վճարվի պետության կողմից:

Երիտասարդական աշխատանքի թիրախներ (օր. `տարիքային սահմաններ, երիտասարդներ հատուկ կարիքներով, բարդ սոցիալական իրավիճակում հայտնված, ծնողազուրկ, մեյնսթրիմ)

Երիտասարդ են համարվում 14-ից 29 տարեկանները, ներառյալ կազմակերպված երիտասարդությունը (երեխաների և երիտասարդների միայն 22% է մասնակցում ՀԿ-ների, համապատասխան հանրային ինստիտուտների և ոչ-ֆորմալ կրթություն տրամադրող կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումներին/ծրագրերին) և ոչ կազմակերպված երիտասարդությունը:

Մեծ կարևորություն է տրվում այսպես կոչված NEET կարգավիճակ ունեցող (ուսուցումից, աշխատաշուկայից և կրթությունից դուրս մնացած), ոչ կազմակերպված և փողոցային/փողոցում հայտնված երիտասարդությանը: Բաց երիտասարդական աշխատանքում հատուկ շեշտադրվում է հանցագործ երիտասարդների (14-18 տարեկան) հետ տարվող աշխատանքները. այս աշխատանքները կանոնակարգվում են օրենքով և ոստիկանությունում հաշվառված երիտասարդները ուղղորդվում են բաց երիտասարդական ակումբներ՝ համապատասխան սոցիալական ծառայություններ ստանալու համար: Եթե նրանք նշված տարիքային շեմից ցածր են կամ տվյալ բնակավայրում չկա բաց երիտասարդական ակումբ, ապա նրանք ուղղորդվում են երեխաների ցերեկային խնամքի կենտրոններ:

Երիտասարդական աշխատանքի իրականացման առաջնային/հիմնական ձևաչափեր (օր. ակումբներ, երիտասարդական կենտրոններ, փողոցում իրաանացվող աշխատանք, և այլն)

Աշխատանք կազմակերպված երիտասարդության հետ (որտեղ առկա է երիտասարդ առաջնորդը)

1. Երիտասարդական կազմակերպություն (հանրային կազմակերպություն կամ կազմակերպությունների ասոցիացիա, որը գրանցված է օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համաձայն, որտեղ երիտասարդները կամ երիտասարդական կազմակերպությունները կազմում են անդամների նվազագույնը երկու երրորդը):
2. Երիտասարդների հետ աշխատող կազմակերպություն (պետական իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մարմին, որի նպատակներից մեկը երիտասարդներին միտված և նրանց կարիքների լուծմանն ուղղված աշխատանքներն են)

Աշխատանք ոչ-կազմակերպված երիտասարդության հետ (որտեղ առկա է երիտասարդական աշխատողը: Սա մի ծառայություն է, որ մատուցվում է երիտասարդներին պետության կողմից)

1. Մշակույթ
2. Սպորտ
3. Կրթություն (ոչ-ֆորմալ կրթություն), /որը հանդիսանում է նաև թե կազմակերպված և թե ոչ-կազմակերպված երիտասարդների հետ աշխատանքի սկզբունքներից մեկը
4. Սոցիալական հարցեր / սոցիալական ծառայություններ
5. Այլ (բացառությամբ մասնագիտական / դեմ առ դեմ արհեստավոր վարպետի հետ աշխատանքից)
6. Բաց երիտասարդական աշխատանք
    6.1. Բաց երիտասարդական կենտրոններ
    6.2. Բաց տարածքներ
7. Կտրված (երիտասարդներին հարմար վայրում և հարմար ժամին տարվող) երիտասարդական աշխատանք (փողոցային երիտասարդական աշխատանք/ Իրազեկող (outreach) երիտասարդական աշխատանք): Նշված աշխատանքները ավելի հարմար է իրականացնել մեծ փողոցներում
    7.1. Իրազեկող երիտասարդական աշխատանքի դեպքում խնդիր է դրվում երիտասարդներին բերել բաց երիտասարդական կենտրոններ
    7.2. Կտրված երիտասարդական աշխատանքը խնդիր ունի երիտասարդների հետ աշխատելու տեղում, հենց իրենց միջավայրում
    7.3. Փողոցային երիտասարդական աշխատանքը փողոցներում ապրող երիտասարդների հետ աշխատանքն է, որոնք ունեն դեվիանտ վարքագիծ: Այն նպատակ ունի աջակցելու և խթանելու առողջ վարքագիծը վերջիններիս շրջանում:

8. Շարժական երիտասարդական աշխատանք (գյուղերում, երբ երիտասարդական աշխատողը գալիս է իր անձնական սարքավորումներով/գույքով և գործիքներով՝ երիտասարդների հետ տեղում աշխատելու):

9. Երիտասարդական տեղեկատվություն (կարող են լինել համայնքային երիտասարդական տեղեկատվական կենտրոններ, Eurodesk գրասենյակներ կամ հաճախ սա կարող է լինել երիտասարդական կենտրոնների կողմից իրականացվող լրացուցիչ գործառույթ)

10. Անհատական երիտասարդական աշխատանք

Երիտասարդական աշխատանքի միակ ձևը, որը Լիտվայում գոյություն չունի դա “երիտասարդական շարժումներն” են. չնայած երիտասարդները կարող են մասնակցել շարժումներին, բայց այդ շարժումները զուտ երիտասարդական չեն:

Բաց երիտասարդական աշխատանք

Արևմտյան Եվրոպան ունի բաց երիտասարդական աշխատանքի մեծ ավանդույթ: 2006թ. սկսած երիտասարդական աշխատանքի այս տեսակը սկսեց արմատավորվել նաև Լիտվայում:

Ճշմարիտ չէր լինի ասել, որ մինչ այդ չկար բաց երիտասարդական աշխատանք: Բազմաթիվ երիտասարդական կազմակերպություններ և երիտասարդական ծառայություններ ունեին բաց երիտասարդական աշխատանքի դրսևորումներ: Այնուամենայնիվ, երիտասարդական քաղաքականության համակարգը և ֆինանսական մեխանիզմները հարմարեցված չէին այս տիպի երիտասարդական աշխատանքին: Այժմ, լիտվականա համայնքապետարանների կառուցվածքի մեջ գործում են բաց երիտասարդական կենտրոններ: Դրանք կոչված են բաց երիտասարդական աշխատանք իրականացնելու սակավ հնարավորություններ ունեցող երիտասարդների հետ: Պարզվում է՝ բազմաթիվ հաստատություններ ունեն չօգտագործված տարածքներ, որոնք կարելի է հարմարեցնել երիտասարդների կարիքների համար: Այս տարածքներին տրվում է “Բաց Տարածք” անվանումը: 2007-2009թթ. Երիտասարդների հարցերով զբաղվող վարչության կողմից իրականացվել է Բաց Երիտասարդական կենտրոնների փորձնական ծրագիրը: Դրան զուգահեռ, մշակվել և գործնականում փորձարկվել է Բաց Երիտասարդական Աշխատանքի հայեցակարգը: Հայեցակարգը 2010թ. հաստատվել է Երիտասարդների հարցերով զբաղվող վարչության տնօրենի կողմից: Այն մատնանշում է բաց երիտասարդական աշխատանքի հիմնական սկզբունքները, սահմանում է երիտասարդական աշխատողի մասնագիտական մոտեցումները, ինչպես նաև ՏԻՄ-երի և երիտասարդական քաղաքականության այլ դերակատարների դերը/ ներգրավվածությունն այս գործընթացում: Երիտասարդների հարցերով զբաղվող վարչության նախաձեռնությամբ սկսված միջոլորտային համագործակցության արդյունքում, 2010թ. Երեխաների նվազագույն և միջին չափի խնամքի օրենքում կատարվեցին փոփոխություններ և Բաց Երիտասարդական կենտրոններն ընդգրկվեցին (ավելացվեցին) երեխաներին նվազագույն ծառայություններ մատուցող հաստատությունների ցանկում:

2010թ. ընդունված 2011-2019թթ. Երիտասարդական Ազգային քաղաքականության զարգացման ծրագիրը ապահովում է հետևյալ քայլերն ու ինդիկատորները, որոնք անհրաժեշտ են Բաց Երիտասարդական Կենտրոնների և Բաց Տարածքների հայեցակարգի իրականացման համար.

• Երիտասարդական աշխատողների համակարգը Լիտվայում նախապատրաստված և մշակված է
• Հավատարմագրված երիտասարդական աշխատողների թիվը - 1000
• Բաց երիտասարդական կենտրոնների և տարածքների թիվը - 350
• Բաց երիտասարդական կենտրոնների և տարածքների կողմից իրականացվող միջոցառումներին/ ծրագրերին մասնակցող երիտասարդների թիվը - 112 000:

Հայեցակարգի սահուն իրականացումն ապահովելու համար 2011թ. սկսվեց բաց երիտասարդական տարածքների ֆինանսավորումը: Ամեն տարի, Երիտասարդների հարցերով զբաղվող վարչությունը ֆինանսավորում է 25 բաց երիտասարդական կենտրոնների և բաց երիտասարդական տարածքների ծրագրեր, որոնք ներառում են մոտ 7500 երիտասարդների: 29-ից բարձր տարիք ունեցող մոտ 2000 անդամներ և 330 կարճա- և երկարաժամկետ կամավորներ ներգրավված են Բաց Երիտասարդական կենտրոնների և Տարածքների շրջանակներում կազմակերպված այս ծրագրերին/ միջոցառումներին: Բաց երիտասարդական աշխատանքին աջակցելու ուղղությամբ տարվում են զգալի աշխատանքներ, ներառյալ մեթոդաբանական նյութերի տպագրությունը, դասընթացների կազմակերպումը, երիտասարդական աշխատողներին անհատական և խմբային խորհրդատվության տրամադրումը:
Երիտասարդների հարցերով զբաղվող վարչությունը իրականացնում է բաց երիտասարդական կենտրոնների և տարածքների մոնիտորինգը և մասնակցում է երիտասարդական քաղաքականության կայուն զարգացման համար պատասխանատու պաշտոնյաների և առաջնորդների հետ համայնքապետարաններում կազմակերպվող քննարկումներին: Զուգահեռ, Երիտասարդների հարցերով զբաղվող վարչությունը այլ հարակից ոլորտների և հաստատությունների համար իրականացնում է երիտասարդական աշխատանքի և մասնավորապես, բաց երիտասարդական աշխատանքի դասընթացներ, որոնք վերաբերում են երիտասարդական քաղաքականությանը, մարզաձևերին, մշակույթին, երեխաների ցերեկային խնամքի կենտրոններին և այլն:

Երիտասարդական աշխատողների վկայականների տրամադրման գործընթացը սկիզբ է դրվել ԵՄ ֆինասնավորմամբ իրականացվող “ինտեգրացված երիտասարդական քաղաքականության իրականացման նպատակով պետական և ոչ-կառավարական ոլորտների համագործակցության խթանում” ծրագրի շրջանակներում, 2011-2013թթ.: Սոցիալական Ապահովության և Աշխատանքի նախարարությունը, Երիտասարդների հարցերով զբաղվող վարչությունը և ներգրավված փորձագետները ակտիվորեն ներգրավվել են օրենսդրության մշակման գործընթացում. նախապատրաստվեց “Բաց Երիտասարդական կենտրոնների աշխատանքների նկարագրությունը”, որը հաստատվեց 2012թ.-ին, իսկ Երիտասարդական աշխատողների աշխատանքների նկարագրությունը՝ 2013թ.-ին: Նպատակ ունենալով հասնելու երիտասարդական

աշխատանքի ավելի համակարգված և ընդհանուր ճանաչելիությանը, սկսվել են “Երիտասարդական քաղաքականության շրջանակների մասին” օրենքի նոր գլխի մշակման աշխատանքները: Սա հնարավորություն կտա սահմանել և շարադրել երիտասարդական աշխատանքի նպատակը, հիմնական սահմանումները և դերակատարներին:

Ավելի մանրամասն կենտրոններում իրականացվող բաց երիտասարդական աշխաանքի մասին տես՝ http://www.jrd.lt/youth-centers

Երիտասարդական աշխատողի ինստիտուտը (ֆունկցիաներ, իրավական ստատուս, կարգավորող իրավական հիմքեր)

Երիտասարդական աշխատողը շատ կարևոր դեր է վերապահված երիտասարդական աշխատանքում (երիտասարդական աշխատողը Լիտվայում դիտարկվում է որպես մի մասնագետ, որը պատասխանատու է որոշակի քաղաքականության իրականացման համար, այլ ոչ թե առանձին մասանգիտություն է): Երիտասարդական աշխատողը չափահաս է, որն աշխատում է երիտասարդների հետ վերջիններիս ազատ ժամանակի ընթացքում և նպաստում է վերջիններիս անձնական և սոցիալական զարգացմանը անհատների, խմբերի կամ համայնքների հետ աշխատանքի միջոցով: Երիտասարդական աշխատողը պետք է ունենա ունակություններ, որոնք ճանաչվում են Երիտասարդների հարցերով զբաղվող վարչության համապատասխան կանոնակարգով:

Երիտասարդական աշխատողը, Լիտվայի հանրապետության օրենսդրությամբ հաստատված կարգով, վարձատրվում է իր կատարած որակյալ աշխատանքի համար: Պետության կողմից նախատեսված, կանոնակարգվող և ֆինանսավորվող երիտասարդական աշխատանքի միակ ձևը դա բաց երիտասարդական աշխատանքն է: Երիտասարդական աշխատանքի հայեցակարգն էլ իր հերթին սահմանում է, թե ով է երիտասարդական աշխատողը և ինչ է երիտասարդական աշխատանքը: Այնուամենայնիվ, չկա առաջնային օրենք երիտասարդական աշխատողի և երիտասարդական աշխատանքի մասին:

Լիտվայում, երիտասարդական աշխատանքը սերտորեն ընթանում է երեխաների իրավունքների պաշտպանության հետ համաքայլ (քանի որ ՏԻՄ-երի մասին օրենքով ՏԻՄ-երը իրականացնում են նաև այդպիսի գործառույթ):

• Տեղական ինքնակառավարման մասին օրենքը (մատնանշում է ՏԻՄ-երի գործառույթները, 1994թ.)
• Երիտասարդական քաղաքականության շրջանակների մասին օրենքը, 2003թ.

• Լիտվայի հանրապետությունում երեխաների նվազագույն և միջին չափի խնամքի մասին օրենքը, 2007թ.
• Բաց երիտասարդական կենտրոնների և տարածքների մասին հայեցակարգ, 2010թ.
• Երիտասարդական ազգային քաղաքանության զարգացման 2011-2019թթ. ծրագիր, ընդունվել է 2010թ.-ին
• Բաց երիտասարդական կենտրոնների աշխատանքների նկարագրություն, 2012թ.
• Լիտվայի կառավարության ծրագիր, 2012թ.
• Երիտասարդական աշխատողի աշխատանքների նկարագրություն, 2013թ.

Երիտասարդական աշխատողի պատրաստման համակարգեր (ունակությունների շրջանակներ, պատրաստող կառույցներ, կրթական մոտեցումներ և ծրագրեր /ֆորմալ և ոչ ֆորմալ/)

Երիտասարդական աշխատողների հավաստագրման համակարգը սահմանում է այն ունակությունները, որոնք անհրաժեշտ են տրամադրելու մասնագիտական և որակյալ երիտասարդական աշխատանքի ծառայություններ: Երիտասարդական աշխատողի ունակությունները սահմանվել են հաշվի առնելով այլ երկրների փորձը և հղում կատարելով Եվրոպայի Խորհրդի կողմից մշակված Երիտասարդ առաջնորդների և Երիտասարդական աշխատողների Եվրոպական Պորտֆոլին, և Եվրահանձնաժողովի կողմից մշակված Հիմնական Ունակությունների և շարունակական կրթության շրջանակին: Ունակությունների առաջարկվող մոդելը հարմարեցված է Լիտվայի տեղական համատեքստին և հիմնվում է երիտասարդական աշխատանքի գոյություն ունեցող ավանդույթների, ձևերի և հնարավորությունների վրա:

Մասնագիտական և որակյալ երիտասարդական աշխատանքի ծառայություններ տրամադրելու համար պահանջվող ունակությունները

Երիտասարդական աշխատողների հիմնական գործառույթը դա երիտասարդների հետ աշխատանքն է: Այսպիսի աշխատանքը պահանջում է միջառարկայական ըմբռնում և ունակություն սոցիալ-կրթական բնույթի մասնագիտական աշխատանք իրականացնելու համար: Հետևաբար, երիտասարդական աշխատողը պետք է համապատասխան կերպով արձագանքի և գործի որոշակի իրավիճակներում: Սա նշանակում է, որ երիտասարդական աշխատողի ունակությունները կախված են անձնական որակներից և որոշակի իրավիճակներում վերջինիս գործելու հմտություններից: Մասնավորապես, երիտասարդական աշխատողները պետք է կարողանան ցույց տալ, որ նրանք տիրապետում են ունակությունների հետևյալ բնագավառներում.

Ներկայումս Լիտվայում կիրառվող ունակությունների հինգ փաթեթները շատ նման են ուսուցչին վերագրվող ունակություններին.

Անձնական ունակություններ. Ընդհանուր ունակություններ. ինքնավերլուծություն/ինքնահայեցողություն (reflexivity/self-reflection), սովորել ինչպես սովորել (learning to learn), ինքնավարություն, կազմակերպչական/կառավարչական ունակություններ, հուսալիություն: Հավելյալ ունակություններ. ստեղծարարություն, ճկունություն, քննադատական մտածողություն, քննադատությունը ընդունելու կարողություն, հանձնառություն, նպատակներին հասնելու կարողություն, մարտահրավերներ ընդունելու կարողություն, ֆիզիկական, հոգևոր և զգայական ճնշումներին դիմակայելու կարողություն, էմոցիոնալ ինտելեկտ (emotional intelligence):

Սոցիալական ունակություններ. Ընդհանուր ունակություններ, հաղորդակցություն, խմբում/թիմում լինելու և խմբի/թիմի հետ աշխատելու ունակություն, կարեկցանք, կոնֆլիկտների տրանսֆորմացիա, խմբի ներսում բազմազանության հետ աշխատելու կարողություն

Մասնագիտական ունակություններ. Ընդհանուր ունակություններ. ոչ-ֆորմալ կրթություն, չափահասների և երիտասարդների աշխարհը հասկանալու կարողություն, կառուցվածքային համատեքստի գիտելիք և ըմբռնում (knowledge and understanding of the structural context): Հավելյալ ունակություններ. իրավական գիտելիքներ, երիտասարդական աշխատանքի ձևերի և հնարավորությունների ըմբռնում, երիտասարդական աշխատողի դերի ըմբռնում:

Մեթոդաբանական ունակություններ. Ընդհանուր ունակություններ. մեթոդների ըմբռնում և կիրառում, կարողություն թեմատիկավորել երիտասարդական խնդիրները: Հավելյալ ունակություններ. տարբեր մեթոդաբանական մոտեցումների ընկալում և կիրառման կարողություն, թվային որակներ, հռետորաբանության/հանրային խոսքի հմտություններ:

Հատուկ ունակություններ. Ընդհանուր ունակություններ. հատուկ խնդիրների ընկալում: Հավելյալ ունակություններ. երաժշտական, արտիստիկ, մարզական և այլ հմտություններ, հանրային կապեր, այլ որակներ:

Հավաստագրման ընթացքում դիմորդը պետք է հավաքի ավելի քան 60% ընդհանուր ունակությունների յուրաքանչյուր բնագավառում, որպեսզի ստանա երիտասարդական աշխատողի որակավորման պետական ճանաչում:

Ներկայումս Լիտվան վերանայում է ունակությունների շրջանակը, և նոր մոդելը սպասվում է, որ հիմնված կլինի Եվրոպայի Խորհրդի երիտասարդական աշխատանքի պորտֆելի տրամաբանությանը որոշակի փոփոխություններով (բացառությամբ այն երիտասարդական աշխատանքների, որոնք գոյություն ունեն Լիտվայում, բայց ներառված չեն Եվրոպայի Խորհրդի պորտֆելում):

Երիտասարդական աշխատանքի ընդհանուր ունակություններ ձեռք բերելու ուսուցողական դասընթացները

Երիտասարդական աշխատողի հավաստագրման գործընթացը նախատեսում և ներառում է հնարավորություն թեկնածուների համար մասնակցելու ուսուցողական ծրագրերին՝ նպատակ ունենալով զարգացնելու անհրաժեշտ ընդհանուր ունակություններ երիտասարդական աշխատանքի համար: Նախնական գնահատման արդյունքում, թեկանծուներին խորհուրդ է տրվում մասնակցել որոշ կամ բոլոր մոդուլներին, կախված այն հանգամանքից, թե որքան ընդհանուր ունակություններ են նրանք կարողանում ցուցադրել:

Երիտասարդական աշխատողների ուսուցման ծրագրերը վարում են հավատարմագրված կրթական կազմակերպություններն ու հաստատությունները, որոնք ներկայացնում են և ֆորմալ և ոչ-ֆորմալ կրթական ոլորտները: Հավատարմագրման ազգային ինստիտուտը պատասխանատու է նշված կազմակերպությունների և հաստատությունների հավատարմագրման համար:

Ուսուցողական դասընթացը պետք է անդրադառնա ունակությունների բոլոր մակարդակներին և ներառի երիտասարդական աշխատողին առաջադրվող գիտելիքների, հմտությունների և մոտեցումների զարգացումը: Ուսուցողական ծրագրեր ներառում են դասընթացի մոդուլները, պրակտիկ աշխատանք երիտասարդների հետ, ձեռնարկներ և գնահատման գործընթաց:
Դասընթացները վերաբերում են ընդհանուր ունակությունների ոլորտներին և անդրադառնում հետևյալ հարցերին.

Մոդուլ 1. Ինքնաընկալումը երիտասարդական աշխատանքի համատեքստում: Երիտասարդական աշխատանքի արժեքների և սկզբունքերի մասին ինքնաարտացոլում և իրազեկման բարձրացում, ուսուցման տարբեր ձևերի ընկալում, “սովորել թե ինչպես ձեռք բերել գիտելիքներ” ունակության զարգացում, խմբում/թիմում լինելու և խմբի/թիմի հետ աշխատելու կարողության զարգացում, երիտասարդական աշխատանքի համատեքստի և երիտասարդական աշխատողի դերի ընկալում:

Մոդուլ 2. Պատանիների և երիտասարդների աշխարհի ընկալում: Պատանեկության ընթացքում սոցիոլոգիական և հոգեբանական տեսությունների, խնդիրների մասին գիտելիքներ, որ զգում են երիտասարդները, երիտասարդական մշակույթ, գործընկերների խմբեր և գործընկերային կրթություն, սեռական և գենդերայի հարցեր, երիտասարդական խնդիրների ուսումնասիրություն երիտասարդական աշխատողի տեսանկյունից:

Մոդուլ 3: անհատական աշխատանք երիտասարդի հետ. տեսություններ, որոնք ոգեշնչում են անհատական աշխատանքը երիտասարդների հետ, հաղորդակցության հմտություններ և միջանձնային մեխանիզմներ, քոուչինգի հիմնական հմտություններ, մասնագիտական սահմաններ և երիտասարդական աշխատողի դերը երիտասարդի հետ անհատական աշխատանքի ընթացքում:

Մոդուլ 4. Խմբերի և հանցավոր վարքագիծ ունեցող երիտասարդների հետ աշխատանք. խմբային դինամիկայի տեսություններ, խմբային զարգացման փուլերի ընկալում, առաջնորդություն և ֆասիլիտացիա, կոնֆլիկտների տրանսֆորմացիա, հանցավոր վարքագծի հետ աշխատելու կարողություն: Այս մոդուլը պետք է անցկացվի հանցագործ երիտասարդների պահման վայրերում:

Մոդուլ 5. Երիտասարդական աշխատանքի մեթոդները. տարբեր մեթոդաբանությունների ընկալումը երիտասարդական աշխատանքում, երիտասարդական աշխատանքի հատուկ ծրագրերի մշակում, գնահատում, երիտասարդական աշխատողների մասնագիտական զարգացում և կարիերա: Եթե անձը մասնակցում է ավելի քան երեք մոդուլների, ապա նա հաճախում է նաև լրացուցիչ մեկ օր՝ խորհելու ուսուցման փորձառության մասին և գնահատելու ուսուցման արդյունքները:

Բոլոր մոդուլները իրականացվում են ներառելով խմբային ուսուցման մեթոդներ և ոչ-ֆորմալ կրթության հիմնական արժեքներն ու սկզբունքները: Խմբում պետք է լինեն 14-ից 20 մասնակիցներ: Դասընթացը պետք է վարեն առնվազն երկու որակավորված դասընթացավարներ: Յուրաքանչյուր դասընթաց հետևում է սահմանված ընդհանուր խնդիրներին, սակայն ելնելով խմբի ուսուցման կարիքներից, դրանք կարող են նաև հարմարեցվել:

Դասընթացի ինտենսիվությունը թույլ է տալիս մասնակիցներին մեկտեղելու ուսուցումն աշխատանքի հետ: Բոլոր հինգ մոդուլները պետք է անցկացվեն 9-ից 12 ամիսների ընթացքում: Յուրաքանչյուր մոդուլի տևողությունը կազմում է 4-5 աշխատանքային օր: Մասնակիցները առնվազն 280 ժամ պետք է ներգրավված լինեն գործնական երիտասարդական աշխատանքի մեջ:

Ուսուցման մոդուլներից յուրաքանչյուրը հավելվում է ուսուցողական հանդիպումով (tutorial meeting): Այս տիպի հանդիպման նպատակը աջակցելն է մասնակիցների ուսուցմանը՝ մասնագիտական զարգացման ուղղորդված ինքնավերլուծության միջոցով (facilitated reflection) և իրենց երիտասարդական աշխատանքից պրակտիկ դեպքերի վերլուծությամբ: Նման հանդիպումները վարում են դասընթացավարներ կամ այլ, երիտասարդական աշխատանքին քաջածանոթ փորձառու մասնագետներ: Այս հանդիպումները տեղի են ունենում փոքր խմբերում և տևում են 4-5 ժամ: Եթե կարիք է լինում, ապա դաստիարակչական հանդիպումը կարող է անցկացվել նաև անհատապես:

Թեկնածուները կարող են ընտրել նաև ինքնազարգացման ճանապարհը՝ հաճախելով այլ դասընթացներ կամ ուսանելով ինքնուրույն: Սա հնարավոր է, բայց խորհուրդ է տրվում, որ մասնագիտական զարգացման համար համաձայնություն ձեռք բերվի ազգային հավատարմագրման հաստատության կողմից առաջադրված ներկայացուցչի հետ: Եվրոպական “Երիտասարդությունը Գործողության մեջ” ծրագրի շրջանակներում իրականացված դասընթացները, որոնք իրականացնում են Youthpass, ճանաչվում են երիտասարդական աշխատողի հավատարմագրման լիտվական համակարգի կողմից:

Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի որակի ապահովման մեխանիզմներ (աշխատողների, կառույցների լիցենզավորում, ատեստավորում, ինքնագնահատման գործիքներ և այլն)

Երիտասարդական աշխատողի որակավորման ճանաչելիությունը

Ազգային սերտիֆիկացման ինստիտուտը, որը կազմում է երիտասարդական աշխատանքի մաս և հավատարմագրված է պետության կողմից, պատասխանատու է երիտասարդական աշխատողների ունակությունների գնահատումն իրականացնելու համար և իրականացնելու երիտասարդական աշխատողների հավաստագրումը Լիտվայում: Այս հաստատությունը պետք է պատասխանատու լինի նաև Լիտվայում երիտասարդական աշխատանքի հետագա զարգացման համար:

Թեկնածուները, որոնք ցանկանում են ձեռք բերել երիտասարդական աշխատողի վկայական պետք է մասնակցեն հավաստագրման գործընթացին, որը բաղկացած է հետևյալ քայլերից.

Քայլ 1. Թեկնածուն ներկայացնում է առցանց հայտադիմում, որը ներառում է անհրաժեշտ տեղեկատվություն գնահատում անցնելու համար՝ ըստ հավաստագրման

ֆորմալ չափանիշների: Ազգային հավաստագրման հաստատությունը գնահատում է թե արդյոք թեկնածուն որակավորվում է (ըստ ֆորմալ չափանիշների) մասնակցելու երիտասարդական աշխատողների հավաստագրման համակարգին թե ոչ:

Քայլ 2. Որակների գնահատումը ներառում է հնարավոր մի քանի տարբերակներ.
- Եթե թեկնածուի նախնական գնահատումը ցույց է տալիս, որ նա ունի անհրաժեշտ ունակությունները երիտասարդական աշխատանքի համար, ապա նա ստանում է երիտասարդական աշխատողի հավաստագիր
- Եթե նախնական գնահատումը ցույց է տալիս, որ թեկնածուն կարիք ունի բարելավելու ունակությունների մեկ կամ մի քանի բնագավառներ, ապա նրան խորհուրդ է տրվում կամ մասնակցել հավատարմագրված դասընթացի մոդուլներին կամ ինքնուրույն շարունակել կրթությունը: Դրանից հետո տեղի է ունենում տվյալ թեկնածուի ունակությունների վերջնական գնահատումը:

Քայլ 3. Ունակությունների զարգացման ծրագիր. եթե թեկանծուն չի որակավորվում երիտասարդական աշխատանքի համար պահանջվող ունակությունների նվազագույն մակարդակի համար, ապա նրան խորհուրդ է տրվում հաճախել երիտասարդական աշխատողների համար հավատարմագրված դասընթացը: Դասընթացը կազմված է որոշակի մոդուլներից, ձեռնարկներից և երիտասարդական աշխատանքի գործնական մասից, որոնք թույլ են տալիս տվյալ անձնավորությանը զարգացնելու երիտասարդների հետ աշխատանքի համար պահանջվող ընդհանուր ունակությունները:

Քայլ 4. Որակների վերջնական գնահատում և հավաստագրում:

Քայլ 5. Հետագա մասնագիտական զարգացում. Երիտասարդական աշխատանքի վկայականը շնորհվում է 5 տարի ժամկետով: Այն երիտասարդական աշխատողը, որը ցանկություն ունի երկարացնելու իր վկայականի վավերականությունը (տևողությունը), պետք է տրամադրի մասնագիտական զարգացման և երիտասարդների հետ գործնական աշխատանքի ապացույցներ:

Գնահատման գործընթացը և վկայականի տրամադրումը

Գնահատման գործընթացը տեղի է ունենում տարբեր փուլերով, որի ընթացքում օգտագործվում են տարբեր լրացուցիչ մեթոդներ:

Հայտադիմումի փուլ. Երիտասարդական աշխատողի վկայական ստանալու համար թեկնածուները ներկայացնում են առցանց հայտադիմում: Այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են թեկնածուի ֆորմալ և ոչ-ֆորմալ կրթությունը, երիտասարդական

աշխատանքի գործնական փորձը և մոտիվացիան գնահատվում են այս փուլի ընթացքում:

Նախնական գնահատման փուլ. Յուրաքանչյուր թեկնածու ստանում է ունակությունների գնահատման գործիք, որը հնարավորություն է տալիս նրանց անցկացնելու ընդհանուր և լրացուցիչ ունակությունների ինքնագնահատում, և որը պահանջվում է որակավորվելու համար մասնագիտական և որակյալ երիտասարդական աշխատանքի ծառայություններ մատուցելու համար: Ապա թեկնածուն, գնահատողի հետ (որն առաջադրվում է հավաստագրման ազգային ինստիտուտի կողմից) հաճախում է գնահատման հանդիպմանը: Գնահատման գործընթացը կարող է ներառել նաև այլ մեթոդներ (այն է՝ գրավոր հանձնարարություն, դեպքի վարման/ուսումնասիրության վերլուծություն, գործնական հանձնարարություններ, դիտարկում) գնահատելու թեկնածուի կողմից ցույց տրվող ունակությունների մակարդակը:

Ինքնագնահատում և հետադարձ կապ դասընթացի ընթացքում. թեկնածուները, որոնք մասնակցում են Դասընթացին մասնակցող թեկնածուները, իրենց ինքնագնահատման հետ կապված, ստանում են աջակցություն: Դասընթացների ընթացքում տրամադրվում է հատուկ ժամանակ և կիրառվում են բազմազան մեթոդներ, որոնք ուսուցման փորձառության և մասնագիտական զարգացման տեսանկյունից կարող են աջակցել ինքնադիտարկմանը: Դաստիարակչական հանդիպումները հնարավորություն են տալիս մասնակիցներին ավելի լավ հասկանալու իրենց մասնագիտական զարգացման և գործնական աշխատանքի բարելավման նպատակով ստացած գիտելիքները: Գործընկերների/մյուս մասնակիցների, դասընթացավարների և ֆասիլիտատորների աջակցությամբ կազմակերպվում են հետադարձ կապի պարապմունքներ: Հավատարմագրված դասընթացների ընթացքում, գնահատման արդյունքները ավտոմատ կերպով ճանաչվում են հավաստագրման գործընթացի վերջնական գնահատման համար:

Երրորդ կողմի գնահատում. Անհրաժեշտության դեպքում, մասնակիցները կարող են տրամադրել իրենց որակները ապացուցող տեղեկատվություն, որը հաստատված է իրենց գործատուների, գործընկերների կամ հաճախորդների կողմից:

Վերջնական գնահատում. վերջնական գնահատումը իրականացվում է այն թեկնածուների հետ, որոնց խորհուրդ է տրվել հաճախել երիտասարդական աշխատողների ուսուցման դասընթացին կամ ինքնուրույնաբար շարունակելու կրթությունն ու մասնագիտական զարգացումը: Թեկնածուն, գնահատողի հետ միասին (որը առաջադրվում է հավաստագրման ազգային ինստիտուտի կողմից) հաճախում է գնահատման հանդիպմանը: Թեկնածուի ունակություններն ստուգելու համար

գնահատման գործընթացը կարող է ներառել այլ մեթոդներ (այն է՝ գրավոր հանձնարարություն, դեպքի վարման/ուսումնասիրության վերլուծություն, գործնական հանձնարարություններ, դիտարկում):

Եվ թեկնածուն և թե գնահատողը պետք է համաձայն լինեն և ստորագրեն գնահատման վերջնական արձանագրությունը: Այնուհետև արձանագրությունը ներկայացվում է հավաստագրման ազգային ինստիտուտին՝ վերջնական որոշման համար: Վերջնական որոշումը կայացվում է հանձնաժողովի կողմից, որի կազմում հավասարապես ներկայացված են երիտասարդական քաղաքականության հարցերով զբաղվող պետական պաշտոնյաները, երիտասարդական աշխատանքի ոլորտի գործատուները և երիտասարդական աշխատողների միության ներկայացուցիչները: Բացասական որոշման դեպքում թեկնածուն իրավունք ունի բողոքարկել գործընթացը:

Ֆինլադիա

Երիտասարդական աշխատանքի սահմանումը (խնդիրներ, արդյունք, հիմնարար արժեքային բազա և սկզբունքներ, սոցիալ-փիլիսոփայական մեթոդաբանություն)

Համաձայն Երիտասարդական Ակտի, Ֆինլանդիայի կառավարությունը չորս տարին մեկ որդեգրում է երիտասարդական քաղաքականության զարգացման ծրագիր: Այն կոչվում է Երեխաների և Երիտասարդական քաղաքականության ծրագիր, քանի որ այն ներառում է նաև երեխաների աճին վերաբերող նպատակներ և միջոցառումներ:

Սահմանումը.

Շատ չհեռանալով ԵԱ-ի սահմանման Եվրոպայում ընդունված մոտեցումներից, հետազոտող Փեթրի Սեդերլյոֆը ի մի է բերել ֆիննական երիտասարդական աշխատանքի մի քանի սահմանումները, որոնք հիմնված են երկրի համապատասխան օրենսդրության և ԵԱ-ի տարբեր ասպեկտների սեփական պատկերացումների վրա: Այսպիսով, համաձայն Ֆինլանդիայի Երիտասարդական Ակտի (2006թ.), ԵԱ-ն ուղղված է:

- Աջակցելու երիտասարդների աճին և անկախությանը՝ բարելավելով վերջիններիս ազատ ժամանակի/ժամանցի որակն ու բովանդակությունը
- Երիտասարդների ակտիվ քաղաքացիության խթանմանը
- Սերունդների միջև հաղորդակցությանը
- Երիտասարդների սոցիալական ամրապնդմանը/ինտեգրմանը:
  (ավելի մանրամասն տես http://nam.humak.fi/nam, http://www.verke.org/en/verke/youth-work-in-finland

Խնդիրները.

Ֆինլանդիայում անցկացված հետազոտության համաձայն, ԵԱ-ն ունի չորս հիմնական գործառույթ.

1. Սոցիալիզացիայի գործառույթը վերաբերում է այն աշխատանքներին, որոնք նպատակ ունեն ինտեգրելու/դարձնելու երիտասարդներին իրենց մշակույթի, հասարակության և անմիջական միջավայրի մասնակից: Ի լրումն այն նպատակի, որ երիտասարդներին պետք է դարձնել գիտակից գերակա նորմերի և պրակտիկաների նկատմամբ, ԵԱ-ն խնդիր ունի նաև հաղորդելու այնպիսի տեղեկատվություն, հմտություններ, արժեքներ և պրակտիկաներ, որոնք թույլ կտան երիտասարդներին մասնակցելու իրենց համապատասխան համայնքների և լայն առումով, հասարակության զարգացմանն ու վերափոխմանը:

2.Ինքնության ձևավորման մեկնարկային կետը երիտասարդ մարդու առկա անհատականության, եզակիության և հանճարեղության ճանաչումն է, ընդունումը և աջակցումը:ԵԱ խնդիրը երիտասարդների ինքնության ձևավորումն է, այնպես որ նրանք դառնան անկախ անհատներ, որոնք ճանաչում են իրենց սեփական կարիքներն ու ձգտումները: Զարգացման տեսանկյունից, ԵԱ-ն պետք է ապահովի մարդկային աճի հնարավորություններ և ոգեշնչի ուսման փորձերը, ինչպես նաև տա հնարավորություններ բոլորիս մեջ անձնական փորձը զարգացնելու համար: Ինքնության ձևավորման մեկնարկային կետերից է նաև երիտասարդների հետ հավասարը հավասարի պայմաններով երկխոսության վարումը: Մշակութային երիտասարդական աշխատանքի միջոցով, երիտասարդները հնարավություն են ստանում ուղղորդում/խորհրդատվություն ստանալու այն բնագավառներում, որտեղ վերջիններիս տների և դպրոցների հետաքրքրությունները, ռեսուրսները և հմտությունները չեն բավարարում:

3.Փոխհատուցման գործառույթը նպատակ ունիվերանորոգելու այն թերությունները, որոնք երևան են գալիս երիտասարդի սոցիալիզացիայի կամ անհատականության ձևավորման գործընթացում: ԵԱ-ն թիրախավորում է իր աշխատանքները ավելի թույլ դիրքեր կամ հատուկ կարիքներ ունեցող երիտասարդների վրա և այդպիսով, փորձում է հավասար պայմաններ ստեղծել բոլոր երիտասարդների համար: ԵԱ աշխատանքային կենտրոնական բնագավառը ավելի սերտորեն առնչվում է երիտասարդների սոցիալիզացիայի և ինքնության ձևավորման գործառույթների հետ, քանի որ վերջիններս կանխարգելիչ աշխատանքներ են: Փոխհատուցման գործառույթի միջոցով, որը վերականգնողական բնույթ ունի, ԵԱ-ն մոտենում է սոցիալական և առողջապահական մարմինների գործունեության ոլորտին:

4.Ռեսուրսների և դրանց հատկացման գործառույթը վերաբերում է այն աշխատանքներին, որոնք առնչվում են ռեսուրսներին, որ հասարակությունը ուղղում

է երիտասարդներին. ուր են ուղղվում այդ ռեսուրսները և ինչպես են ծախսվում: Այս գործառույթը վերաբերում է կառավարության կողմից երիտասարդական քաղաքականության վրա ազդելու և սոցիալիզացիայի և ինքնության ձևավորման գործառույթները հետապնդելու միջոցով, ինչպես նաև ԵԱ-ին մասնակցությամբ և դրա վրա ազդեցությամբ:

ԵԱ արդյունքը և արժեքային համակարգը.Երիտասարդական աշխատանքի արդյունքում նախատեսվում էբարելավել երիտասարդների կյանքի կառավարման հմտությունները: Այնուամենայնիվ, երիտասարդական աշխատանքի խնդիրը դա երիտասարդների կյանքի կառավարումը չի, այլ քաջալերելն է վերջիններիս պատասխանատվություն ստանձնելու սեփական կյանքի և այն կազմակերպելու/վարելու նկատմամբ: Հետևաբար, երիտասարդական աշխատանքը օժանդակում է երիտասարդներին՝ ապահովելով վերջիններիս՝ իրենց անձնական կյանքի նկատմամբ պատասխանատվություն ստանձնելուն և այն վերահսկելուն ուղղված անհրաժեշտ գործիքներով և տեղեկատվությամբ: Համաձայն Երիտասարդական Ակտի, ԵԱ-ն պետք է նպատակ ունենա աջակցելու երիտասարդների աճին և անկախությանը, խթանելու նրանց ակտիվ քաղաքացիությունը և կարողությունների կառուցումը/հզորացումը և բարելավելու վերջիններիս կենսապայմանները:

ԵԱ-ի հիմնական արժեքները դրանք համայնքային պատկանելիությունն է, համերաշխությունը, արդարությունն ու հավասարությունը, բազմամշակութային և միջազգային ընկալումը, առողջ ապրելակերպը և հարգանքը կյանքի և շրջակա միջավայրի նկատմամբ:

ԵԱ սկզբունքները. Երիտասարդական աշխատողների և երիտասարդների հարաբերությունները պետք է հիմնված լինեն փոխգործակցության և երկխոսության վրա, այսպիսով հնարավորություն տալով երիտասարդներին մասնակցելու իրենց համար նախատեսված աշխատանքների պլանավորմանը կամ ստեղծելու նորերը ոչ թե որպես հաճախորդներ այլ որպես մասնակից կողմ/դերակատար:Երիտասարդների անկախ լինելու հանգամանքը ընդհանուր առմամբ կարևորվում է ֆիննական երիտասարդական աշխատանքում: Չնայած երիտասարդական աշխատանքը հիմնականում վերաբերում է աջակցելու երիտասարդների՝ իրենց կյանքի զարգացմանն ուղղված մտադրությունների իրականացմանը, այն նաև կրթության մի ձև է, որի նպատակները սահմանվում են արհեստավարժների կողմից: Գործնականում, երիտասարդական աշխատանքի կարևոր խնդիրներից մեկը եղել է և կա երիտասարդների՝ իրենց ազատ ժամանակը ծախսելու ձևերի ուղղորդումը և վերահսկողությունը: Հետևաբար երիտասարդական աշխատանքը իր բնույթով երկակի է, քանի որ այն ներառում է և վերահսկող և թե ազատականացնող տարրեր:

ԵԱ Սոցիալ-մանկավարժական հիմքեր

Ֆինլանդիայի երիտասարդական ակումբները դիտարկվում են որպես սոցիալական քաղաքականության մի գործիք և որպես ոչ ֆորմալ կրթության միջավայր: Երիտասարդական ակումբների աճն ու կարևորությունը համընկավ սկանդինավյան սոցիալական մոդելի երևան գալու հետ (ակումբները դիտարկվում են որպես սկանդինավյան սոցիալական մոդելի կառուցման մի մաս, որտեղ սոցիալական ինստիտուտները համարվում են հիմնական դերակատարները սոցիալական հավասարության հասնելու ճանապարհին):

ԵԱ մանկավարժական հիմքերի առումով, երկու երբեմն իրար հակադիր սոցիալական նպատակներ իրենց ազդեցությունն են թողել երիտասարդական ակումբների աշխատանքների վրա: Այս նպատակների սոցիալական հիմնավորումը բխում է այն փաստից, որ երիտասարդական ակումբները դիտարկվում են որպես գործիքներ մասնակցությունը խթանելու համար կամ այլ կերպ, որպես ուսուցողական միջավայր քաղաքացիությունը խթանելու համար: Քաղաքացիության տեսանկյունը շաշտադրում է երիտասարդներին փողոցից կտրելու և նրանց ուսուցման հնարավորություններ տալու գործոնը՝ այդպիսով նորմավորելով նրանք վարքագիծը, հատկապես քաղաքներում: Մանսակցության տեսնակյունը ընդգծում է երիտասարդների գաղափարներին և ցանկություններին աջակցելը և օգնելը նրանց սահմանելու և բարձրաձայնելու իրենց փորձառությունը: Երիտասարդական ակումբները պատմականորեն դիտարկվում են որպես գործիքներ վերարտադրելու և նորացնելու գոյություն ունեցող սոցիալական հարաբերությունները:

Երիտասարդական աշխատանքի թիրախներ

Համաձայն Ֆինլանդիայի Երիտասարդական քաղաքականության 2012-2015թթ. ծրագրի, երիտասարդական աշխատանքը ընդգրկում է երկրի մինչև 29 տարեկան ողջ բնակչությանը: Այդ իսկ պատճառով, այն կոչվում է Երեխաների և երիտասարդական քաղաքականության ծրագիր: Երիտասարդների տարբեր խմբերը ավանդաբար կազմում են երիտասարդական աշխատանքի հիմնական թիրախը, մինչդեռ համագործակցությունը նրանց ընտանիքների հետ սահմանափակ բնույթ է կրում: Երիտասարդական աշխատանքը մտնում է Կրթության և մշակույթի նախարարության պորտֆելի մեջ և դիտարկվում որպես կրթական համակարգի ոչ-ֆորմալ մաս: Երիտասարդական բոլոր ակումբները գործում են ՏԻՄ մակարդակում:

2011թ. դրությամբ 5.4 մլն բնակչություն ունեցող Ֆինլանդիայի թվով 320 համայնքներում կային մոտ 1000 երիտասարդական ակումբներ: Ընդհանուր առմամբ, երիտասարդական աշխատանքը ծածկում է երիտասարդ բնակչության 25%-ին և

համարվում է, որ երիտասարդների 5-10%-ը կանոնավոր հաճախում է երիտասարդական ակումբներ:

Երիտասարդականաշխատանքիիրականացմանառաջնայինձևաչափեր

Երիտասարդական աշխատանքի շահակիցները Ֆինլանդիայում.ԵԱ-ն հիմնականում իրականացվում է ՏԻՄ-երի, տարբեր կազմակերպությունների և եկեղեցու կողմից: Ի համեմատություն կենտրոնական Եվրոպայի, որտեղ կոնկրետ կազմակերպություններ են իրականացնում ԵԱ-ն, այստեղ ՏԻՄ-երը մեծ դեր են խաղում: ՏԻՄ-ի ներքո, իրար գումարած կան հազարից ավելի երիտասարդական կենտրոններ, անցկացվում են մոտ բազմաթիվմասնագիտական սեմինարներ, կան ՏԻՄ-երին կիցմոտ 170 երիտասարդական խորհուրդներ: ՏԻՄ-երի կողմից իրականացվող ԵԱ-ն ներառում է.

- մանկավարժական ուղղորդում և աջակցություն երիտասարդների աճին, նրանց սպասարկող ենթակառուցվածքներին,
- աշխատանք նրանց հոբբիների ուղղությամբ,
- տեղեկատվական և խորհրդատվական ծառայություններ
- աջակցություն երիտասարդական ասոցիացիաներին և խմբերին,
- աջակցություն սպորտային, մշակութային և միջմշակութային երիտասարդական միջոցառումների իրականացմանը և
- այլ, տեղի համատեքստին և կարիքներին համապատասխան միջոցառումներ/աշխատանքներ:
- (ավելի մանրամասն տես Youth Work and Youth Policy in Finland, URL: http://www.minedu.fi/export/sites/default/OPM/Nuoriso/Liitteet/YOUTH_WORK_AND_YOUTH_POLICY.pdf)

ՏԻՄ երիտասարդական աշխատանքը կարող է ներառել նաև երիտասարդների համար սեմինարների անցկացումը: ՏԻՄ-երի պարտականությունների մեջ մտնում են նաև երիտասարդական քաղաքականությանն առնչվող հարցերը: ՏԻՄ երիտասարդական աշխատանքի խնդիրների լուծմանն ուղղված ծառայությունները/աշխատանքները նկարագրված են Երիտասարդների մասին Ակտում, սակայն յուրաքանչյուր ՏԻՄ ինքն է որոշում այդ աշխատանքների ծավալը: Աշխատանքները տարվում են Երիտասարդների, Կրթության և Սոցիալական Զարգացման բաժինների հետ սերտ համագործակցությամբ, ինչպես նաև ներգրավելով երիտասարդներին, երիտասարդական ասոցիացիաներին և ԵԱ-ում ներգրավված այլ կողմերին: Ֆինլանդիայում ՏԻՄ-երի հիմնական գործընկերը երիտասարդական աշխատանքում Save the Children կազմակերպությունն է:

Կա նաև «հատուկ երիտասարդական աշխատանք» կամ (թիրախավորված երիտասարդական աշխատանք) տերմինը, որը վերաբերում է երիտասարդական աշխատանքի շրջանակներում երիտասարդների հատուկ խմբերի համար մատուցվող ծառայություններին, այն խմբերի, որոնք ունեն ավելի մեծ սոցիալական կարիքներ քան մյուս խմբերը: Դրանք կարող են ներառել ներգաղթյալների որոշ խմբերին, գործազուրկ կամ դպրոց չհաճախող և/կամ տարբեր պատճառներով սոցիալապես մեկուսացված երիտասարդներին: Հատուկ երիտասարդական աշխատանքի կազմակերպումը նույնպես մտնում է ՏԻՄ-երի գործառույթների մեջ (ընկնում է նրանց պատասխանատվության ներքո):Թիրախավորված երիտասարդական աշխատանքը կարող է կանոնավոր լինել կամ հիմնված լինել տվյալ համայնքի ԵԱ-ն իրականացնող կենտրոնի և/կամ կոնկրետ ծրագրի առաջնահերթությունների վրա:Թիրախ խմբին հասնելու համար ԵԱ մեթոդները կարող են ներառել շարժական/մոբիլ կամ դաշտային աշխատանքները, քննարկումները շահառուների հետ, համապատասխան ծառայությունների և հնարավորությունների մասին տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև պատրաստակամությունը՝ միջամտելուերիտասարդների կենսապայմանները բարելավելուն ուղղված աշխատանքներին/միջոցառումներին:

ԵԱ-ն երիտասարդական կազմակերպություններում և Եկեղեցում.ՏԻՄ-եին զուգահեռ, ԵԱ համար պատասխանատու են նաև տարբեր հանրույթներ և կազմակերպություններ: Երիտասարդները ներգրավված են երիտասարդական և մարզական կազմակերպություններում, եկեղեցում, դպրոցների և այլ կրթական հաստատությունների նախասիրությունների/հոբբիների (տարբեր) խմբակներում և ՏԻՄ երիտասարդական կենտրոնների ոչ-ֆորմալ խմբերում: Կառավարությունը պայմաններ է ստեղծում երիտասարդական կազմակերպությունների գործունեության համար, բայց չի միջամտում աշխատանքների բովանդակությանը: ՏԻՄ-երը հոգ են տանում տեղական մակարդակում երիտասարդական կազմակերպությունների գործունեության համար: ՏԻՄ-երը դրամաշնորհներ են տրամադրում տեղական երիտասարդական կազմակերպություններին՝ ենթակառուցվածքների/հարմարությունների և սարքավորումների վարձակալության և դասընթացների ֆինանսավորման համար:

Ի լրումն տեղական երիտասարդական կազմակերպությունների, Ֆինլանդիայում կան երիտասարդական կազմակերպություններ, որոնք գործում են ազգային մակարդակում: Ֆինլանդիայի Կրթության և Մշակույթի նախարարությունը աջակցում է այս կազմակերպությունների՝ ազգային մակարդակում իրականացվող ծրագրերին՝ ֆինանսավորելով դրանք բյուջեից ֆինանսավորվող հատուկ ստեղծված ֆոնդի միջոցներով, որոնք հատկացվում են այդ կազմակերպությունների առաջ քաշած գաղափարների և աշխատանքային պլանների հիման վրա: Ազգային մակարդակում

գործող երիտասարդական կազմակերպությունները և նրանց ֆինանսավորման հիմքերը սահմանված են Երիտասարդների մասին Ակտում և Երիտասարդների մասին Որոշման մեջ: Ազգային մակարդակում երիտասարդական կազմակերպություն համարվելու համար, կազմակերպությունը պետք է գրանցված լինի և երկրի ողջ տարածքում իրականացնի Երիտասարդների մասին Ակտի հիմնական նպատակներին և կետերին համահունչ աշխատանքներ: Կառավարության կողմից ֆինանսավորվող և ազգային մակարդակում գործող երիտասարդական կազմակերպությունները ներառում են երիտասարդական և ուսանողական քաղաքական կազմակերպությունները, երիտասարդների որոշակի շահերի շուրջ համախմբված խմբեր, երիտասարդների մշակութային և նախասիրությունների/հոբբիների կազմակերպությունները, կրոնական երիտասարդական կազմակերպությունները, երեխաների հարցերով զբաղվող կազմակերպությունները, երիտասարդական աշխատանքի բնագավառում տարբերծառայություններ մատուցող կազմակերպությունները և այլն:

Ֆինլանդիայում կազմակերպությունը ազգային մակարդակում կարող է հաստատվել /ճանաչվել երիտասարդական, եթե այն ունի առնվազն 1000 անդամն և այդ անդամներից առնվազն երկու երրորդի տարիքը չի անցնում 29 տարեկանը: Անդամները կարող են ուղղակիորեն լինել կազմակերպության անդամները կամ անդամակցել տվյալ կազմակերպության մարզային/տեղական մասնաճյուղերին: Անդամակցության մասին չափորոշիչից բացի, կազմակերպությունը որպես երիտասարդական գրանցելու ժամանակ, հաշվի են առնվում նաև վերջինիս կողմից տարվող ԵԱ-ի ձևաչափերը, աշխատանքների բնագավառները և որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցությունը:

Երիտասարդական աշխատանքի հիմնական շահառուներից է նաև Ֆինլանդիայի Ավետարանական Լյութերական եկեղեցին, որը բազմաթիվ աշխատանքներ է իրականացնում Ֆինլանդիայում: Ըստ եկեղեցու՝ ԵԱ-ն հանդիսանում է քրիստոնեական կրթության մի մաս: Քրիստոնեական կրթությունն էլ իր հերթին, համաձայն Եկեղեցական Ակտի և Եկեղեցական պատվիրանի, պետք է իրականացվի ծխական համայնքների կողմից: Եկեղեցու ներսում իրականացվող ԵԱ-ն շատ չի կենտրոնանում եկեղեցական առաքելության և քարոզչության վրա և հաճախ վերաբերում է եկեղեցական կուրսեր ավարտած 15-17 տարեկան երիտասարդների շրջանում տարվող աշխատանքներին: Համաձայն Եկեղեցու երիտասարդական աշխատանքի հրահանգիչների/ուսուցիչների, երեխաների և երիտասարդների աշխատանքը եկեղեցում ենթադրում է աշխատանքներ, որոնք հիմնված են վերջիններիս և նրանց ընտանիքների շրջանում քրիստոնեական հավատի վրա, և որտեղ եկեղեցին, հասարակությունը և կյանքը քննվում են երեխաների և երիտասարդների տեսանկյունից:

Ֆինլանդիայի Ավետարանական Լյութերական եկեղեցին իր հերթին, երիտասարդներին տալիս է թե անհատական(դեմ առ դեմ) և թե առցանց չաթի հնարավորություն:

Առցանց երիտասարդական աշխատանք

Հիմնավորում. Մերօրյա երիտասարդությունը մեծանում է մի հասարակությունում, որը շատ է տարբերվում 1990թթ. հասարակությունից: Փոփոխությունները տեսանելի են երիտասարդների կյանքի անբաժան մասը կազմող բոլոր բաղադրիչների առումով. տուն, դպրոց և ազատ ժամանակ:

ԵԱ գործառույթների իրականացման մեկնակետը դա ԵԱ թիրախի՝ երիտասարդների հետ կանոնավոր շփումների առկայությունն է: Առանց երիտասարդների հետ կապ ունենալու անհնար է ԵԱ իրականացումը այնպես, որ դրանք լինեն արդյունավետ և բխեն երիտասարդների կարիքներից: ԵԱ-ն պետք է ճանաչի թվային մշակույթը որպես երիտասարդի աճին նպաստող մշակութային և սոցիալական կապիտալի հիմնական աղբյուրներից մեկը: Միևնույն ժամանակ, ԵԱ մասնագետները պետք է որդեգրեն և սովորեն այն տեղեկատվությունն ու հմտությունները, որոնք պահանջվում են թվային մեդիայի միջոցով շահառուների հետ կապ հաստատելու և աշխատելու համար:

Թվային մեդիան երիտասարդների սոցիալական կապիտալի կառուցման առումով հսկայական հնարավորություններ է ընձեռում՝ հաշված վայրկյանների ընթացքում կապելով նրանց հսկայածավալ նյութերի և ցանցերի հետ: Ինտերնետի ընձեռած մեծ տեղեկատվությունն ու զանազան հմտությունները օգնում են նաև երիտասարդների ուսումնառությանն ու ազատ ժամանակի կազմակերպմանը, որն էլ երկարաժամկետ կտրվածքով, մեծացնում է վերջիններիս ավելի լավ կրթություն ստանալու և աշխատանք գտնելու հնարավորությունները:

Վերկե-ն Ֆինլանդիայի առցանց երիտասարդական աշխատանքի ազգային զարգացման կենտրոնն է (տես http://www.verke.org/en/current-issues/news):

Առցանց երիտասարդական աշխատանքին նվիրված կայքը կարող է ունենալ հետևյալ բաժինները.

- առցանց խաղերի մրցույթներ
- հարց ու պատասխանի ծառայություններ
- խմբային և անհատական չաթեր
- խմբային բլոգներ
- Մեմե լուսանկարչական մրցույթներ (meme photo competitions)
- Հեռարձակվող խաղեր

- Երիտասարդների կողմից իրենց իսկ հուզող հարցերի վերաբերյալ մեկ րոպեանոց տեսանյութերի պատրաստում և տեղադրում կայքում (տես www.theonemnites.org)
- Տեսանյութեր պարունակող սեմինարներ և երիտասարդների քաջալերումը՝ սոցիալական մեդիայի միջոցով իրենց մտահոգությունները բարձրաձայնելու համար:
- Ժամանցի կազմակերպման հնարավորությունների մասին տեղեկատվության որոնում (բանակումներ, ճամբարներ, երաժշտական, մշակութային և մարզական միջոցառումներ, երիտասարդական տարբեր մրցույթներ, համակարգչային խաղեր, երիտասարդական տարբեր ակումբների/ասոցիացիաների, հոբբիների վրա հիմնված խմբերի մասին տեղեկատվություն, տարբեր խմբակներ, սեղանի խաղեր)
- ինտերնետային անվտանգության հարցեր
- Երիտասարդական կենտրոնների ամսական/շաբաթական/օրական ծրագրերի մասին տեղեկատվություն, որը հասանելի կլինի նաև ֆեյսբուքով, թվիթերով, ինստագրամով և whatsApp-ով:

Առցանց երիտասարդական աշխատանքում առկա է սերտ համագործակցություն ոստիկանության և տարբեր հանրային և սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջև:

Երիտասարդականաշխատողիինստիտուտը (ֆունկցիաներ, ունակություններ, ինքնագնահատմանգործիքներ, իրավականստատուս)

Երիտասարդական աշխատանքի խորհրդատվական մարմիններ

1972թ. սկսած ԵԱ-ն Ֆինլանդիայում ունի օրենսդրական կարգավորում: “Երիտասարդական հանձնաժողովների և ՏԻՄ երիտասարդական աշխատանքի պետական սուբսիդիաների մասին” Ակտի համաձայն երկրում ստեղծվել են երիտասարդական հանձնաժողովները: ՏԻՄ երիտասարդական հանձնաժողովները գործում են տեղական մակարդակում, նահանգային երիտասարդական հանձնաժողովները, որպես փորձագիտական մարմիններ գործում են նահանգային մակարդակում, իսկ ազգային երիտասարդական աշխատանքի հանձնաժողովը, որը ավելի ուշ վերանվանվեց Երիտասարդական հարցերով Խորհուրդ, գործում է Կրթության նախարարության ենթակայության ներքո:

Իրավական կարգավիճակ.

Ինչպես վերը նշվեց, 1972թ. սկսած ԵԱ-ն Ֆինլանդիայում ունի օրենսդրական կարգավորում: ԵԱ-ն կանոնակարգող օրենսդրությունը Ֆինլանդիայում տաս տարին մեկ վերանայվում է (1986, 1995 and 2006): Ամենավերջին օրենքը՝ Երիտասարդական Ակտը ընդունվել է 2006թ. մարտին: Այն ներկայումս վերանայման փուլում է և նոր՝ վերանայված տարբերակը սպասվում է, որ կընդունվի 2016թ.-ին: Փաստաթուղթը մատնանշում է ԵԱ-ի խնդիրներն ու արժեքները, ինչպես նաև այդ ուղղությամբ տարվող քաղաքականության առաջնահերթությունները:

Երիտասարդական Ակտի 3-րդ մասը հստակ մատնանշում է, որ “Երիտասարդական աշխատանքը և երիտասարդական քաղաքականությունը կազմում են ՏԻՄ-երի պարտականությունների մի մասը”: ԵԱ աշխատանքները ՏԻՄ-երի կողմից կարող են տարվել նաև այլ մարմինների հետ համագործակցությամբ:

Երիտասարդականաշխատողիպատրաստմանհամակարգեր (պատրաստողկառույցներ, կրթականծրագրեր /ֆորմալևոչֆորմալ/)

Ֆինլանդիան բնութագրվում է երիտասարդական աշխատողների մեծ թվով:

Երիտասարդական աշխատանք վարելու համար անհրաժեշտ կրթությունը տրամադրվում է ավագ դպրոցի և համալսարանի/ԲՈՒՀ-ական մակարդակներում: Ֆորմալ կերպով ԵԱ-ն առանձին մասնագիտացված ոլորտ է՝ դպրոցից, սոցիալական աշխատանքից և երեխաների բարեկեցությանն ուղղված միջոցառումներից առանձին:

Երիտասարդական աշխատողի նախապատրաստման ծրագրեր կան թե ավագ դպրոցի և թե ԲՈՒՀ-ական կրթության շրջանակներում: Եկեղեցական ծխական համայնքները ուսուցանում են իրենց երիտասարդական աշխատողներին իրենց կրթական հաստատություններում:

Ավագ դպրոցի մակարդակում Երիտասարդական աշխատողի որակավորման դասընթացը կոչվում է “Երիտասարդների և ժամանցի կազմակերպման մասնագիտական որակավորում”: Այս դասընթացի շրջանավարտները ստանում են Երիտասարդների ժամանցի կազմակերպման մարզչի/հրահանգիչի կոչում: Դասընթացին կարելի է մասնակցել մի շարք կրթական հաստատություններում: Այն երիտասարդները, որոնք ավարտել են երեք տարի տևողությամբ ավագ դպրոցի մասնագիտական որակավորման այս դասընթացը,կարող են ավելի խորացված ուսուցման համար ընդունվել համալսարանների համապատասխան (մասնագիտական) ֆակուլտետներ/բաժիններ:
Երեխաների խնամքի, կրթության և նրանց ընտանիքների բարեկեցության մասնագիտական որակավորումը, որը ներառված է ժամանցի կազմակերպման և

ֆիզիկական կրթության ենթադաշտում/բնագավառում, նույնպես կարելի է անցնել ավագ դպրոցի մակարդակում: Այն հանարավորություն է տալիս շրջանավարտներին աշխատելու թե ՏԻՄ-երի և թե ծխական համայնքների համար՝ վաղ մանկական կրթության և խնամքի հետ կապված ծրագրերում: Այս ծրագիրը կարելի է հաջողությամբ ավարտել թե ավագ դպրոցի շրջանակներում և թե ստանալ որոկավորում, որը հիմնված է կարողությունների վրա. վերջինիս դեպքում մասնակիցները պետք է ցուցադրեն իրենց մասնագիտական հմտությունները կարողությունների ստուգման քննության միջոցով:

Այս որակավորման նպատակն է օգնելու շրջանավարտներին հանդես գալու որպես երիտասարդների ժամանցի կազմակերպման հրահանգիչներ/մարզիչներ, որոնք ի վիճակի են մշակել և պլանավորել աշխատանքային մեթոդներ և ստեղծել ու իրականացնել երեխաների և երիտասարդների կամավոր և ինքնամոտիվացված ժամանցի միջոցառումներ:

Պոլիտեխնիկական (կիրառական գիտությունների) համալսարանները հնարավորություն են ընձեռում ստանալու հումանիտար գիտությունների բակալավրի կոչում՝ ավարտելով “Երիտասարդական աշխատանք և քաղաքացիական գործունեություն” ծրագիրը: Այս կրթությունը թույլ է տալիսշրջանավարտներին աշխատելու տարբեր փորձագիտական, ուսումնական, զարգացման և կառավարչական պաշտոններում: Ընդունելության պահանջները ներառում են ընդհանուր միջնակարգ կրթության ավարտական քննության հանձնումը կամ ներոլորտային ավագ դպրոցի շրջանակներում ստացած մասնագիտական կրթությունը: Ծրագիրը տևում է 4 տարի:

Մագիստրոսական կոչում շնորհող և երկու տարի տևողությամբ “Երիտասարդական կրթություն” ծրագիրը մշակվել և առաջարկվում է Կուոպիոյի և Միքքելի կիրառական գիտությունների համալսարանների կողմից: 2007թ.-ից սկսած Տամփերեի համալսարանը սկսել է “Երիտասարդական աշխատանք և երիտասարդական հետազոտություն” մագիստրոսական ծրագիրը: Երիտասարդական աշխատողի որակավորում կարելի է ստանալ նաև apprenticeship training միջոցով[1]: apprenticeship training-ը կարող է տեղի ունենալ կամ ավագ դպրոցի շրջանակներում կամ որպես առանձին մասնագիտական ուսուցում: Յուրաքանչյուր աշակերտ/սկսնակ ստանում է անհատական ուսուցման պլան, որը հիմնված է կարողությունների վրա հիմնված որակավորման պահանջների վրա՝ հաշվի առնելով այն հմտությունները, որ

[1]**Definition**: **Apprenticeship** is a combination of on-the-job **training**and related instruction in which workers learn the practical and theoretical aspects of a highly skilled occupation. **Apprenticeship**programs can be sponsored by individual employers, joint employer and labor groups, and/or employer associations.

աշակերտը արդեն ստացել է: Պլանը մշակվում է աշակերտի, գործատուի և տեղի կրթական մարմնի հետ համագործակցաբար: Երիտասարդական ոլորտի մասնագիտական որակավորումները ներառում են Երիտասարդների ժամանցի կազմակերպման մասնագիտական որակավորումները և նաև երեխաների խնամքի, կրթության և ընտանիքի բարեկեցության որակավորումները:
Այս համատեքստում ՏԻՄ-երը լիազորված են որոշելու երիտասարդական աշխատանքի հիմնական ուղղվածությունը և նաև երիտասարդական աշխատողների թիվն ու նրանց առաջադրվող հմտությունների/որակավորումների պահանջները: Այն փաստը, որ ՏԻՄ-երն են որոշում երիտասարդական աշխատողների որակավորումների պահանջները ստեղծում է պահանջվող կրթության բազմազանություն: Ուստի, երբեմն կարելի է հանդիպել երիտասարդական աշխատողների, որոնք ունեն բակալավրի աստիճան մշակույթի և արվեստների, ինչպես նաև սոցիալական գիտությունների:

Ֆինլանդիայի Ավետարանական Լյութերական եկեղեցու երիտասարդական աշխատողները ունեն կամ սոցիալական ծառայությունների կամ հումանիտար գիտությունների բակալավրի աստիճան, ներառյալեկեղեցական ուսումնասիրությունների մոդուլը, որի առկայությունը պարտադիր է և հաստատվել է Ֆինլանդիայի Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովի որոշմամբ:

Ֆինլանդիայում կան մի շարք կրթական կոչում շնորհող ծրագրեր, որոնք որակավորում են ապահովում երիտասարդական աշխատանքի և երիտասարդների ժամանցի կազմակերպման բանագավառում: Դրանցից մեկը “Երիտասարդների և ժամանցի կազմակերպման մասնագիտական որակավորում” (120 շաբաթ տևողությամբ)դասընթացն է (avելի մանրամասն տես http://www.oph.fi/download/150244_VQ_YouthLeisureInstruction_2009.pdf)

- “Քաղաքացիական գործունեություն և Երիտասարդական աշխատանք” – կարելի է ուսանել կիրառական գիտությունների համալսարանում: Կրթական կոչումը՝ համայնքային մանկավարժ, հումանիտար գիտությունների բակալավր: Ծրագիրը կարելի է ուսուցանել HUMAK, Mikkeli, Central Ostrobothnia և Novia կիառական գիտությունների համալսարաններում:

Հիմնական մոդուլները (ներառյալ յուրաքանչյուր մոդուլին վերաբերող թեմաները) հետևյալն են (տես https://www.novia.fi/degree-students/bachelor-degree-programmes/curricula/2015/?id=11956).

Հիմնական/պարտադիր ուսուցման մոդուլներ

- Համայնքային մանկավարժի/ԵԱ-ի աշխատանքային միջավայրը

- ակադեմիական ուսուցման ներածություն,
- մասնագիտական թիմային աշխատանք,
- համայնքային մանկավարժի մասնագիտական կերպարը
- երիտասարդական աշխատանք
- փորձարարական կրթություն
- ծրագրերի կազմում

➢ Փորձարարական կրթություն և ստեղծագործ աշխատանք
- շրջակա միջավայրի մասին կրթություն
- փորձարարական կրթություն
- ստեղծագործ մեթոդներ
- Ֆիններեն
- ՏՀՏ
- Բիզնես տնտեսագիտություն և ձեռնարկատիրություն
- Հկ-ների և այլ տիպի կազմակերպությունների վերաբերյալ դասընթաց

Մասնագիտական մոդուլներ

➢ Կրթական աշխատանքը մարդկային կենսացիկլի ընթացքում
- մարդկային կենսացիկլի հոգեբանություն
- Դեռահասների կյանքի շրջադարձային պահեր
- Կանխարգելող երիտասարդական աշխատանք
- Կրթական ուղղորդում
- Կրթական աշխատանք
- Կրթական աշխատանք հատուկ խմբերում

➢ Բազմամշակութային աշխատանք և սոցիալական պատասխանատվություն
- անգլերեն լեզու
- կայուն զարգացում
- միջմշակութային առաջնորդություն
- մարդու իրավունքներ
- բազմամշակութային աշխատանք
- ժամանցի կազմակերպում
- մարկետինգ և հաղորդակցություն

➢ Հասարակական մասնակցություն
- հասարակական/սոցիալական կառուցվածք
- ներառում
- համայնքային ներազդում

- երիտասարդական աշխատանք և որոշումների կայացում տեղական մակարդակում
- մասնակցություն
- ժամանցի կազմակերպում
- երիտասարդական հետազոտություն
- զարգացման մեթոդներ

➢ Առաջնորդություն և նորարարություններ
- մասնագիտական առաջնորդություն
- հետազոտական և զարգացման մեթոդներ
- ապագայի տեսլականներ և նորարարություններ

➢ Աշխատանքի տեղավորում
- աշխատանքի տեղավորում ՏԻՄ-երում, ՀԿ-ներում, ասոցիացիներում կամ ընկերություններում
- աշխատանքի տեղավորումը որպես զարգացմանը նպաստող գործունեություն

➢ Ավարտական թեզի պաշտպանություն:

- Նրանք, ովքեր ունեն բակալավրի աստիճան և առնվազն երեք տարվա ոլորտային աշխատանքային փորձ կարող են դիմել “ՀԿ-ներ և Երիտասարդական աշխատանք” մագիստրոսական կոչում շնորհող ծրագրին: Ծրագիրը կարելի է ուսանել HUMAK և Mikkeli կիրառական գիտությունների համալսարաններում:
- Ի հավելումն, HUMAK կիրառական գիտությունների համալսարանը առաջարկում է անգլիալեզու մագիստրոսական կոչում շնորհող “Երիտասարդական աշխատանք և սոցիալական հավասարություն”ծրագիրը
- Տուրկուի համալսարանը նույնպես առաջարկում է մագիստրոսական կոչում շնորհող “Երիտասարդական աշխատանք և սոցիալական հավասարություն”ծրագիրը
- Բացի այդ, Տամպերեի համալսարանը առաջարկում է մագիստրոսական կոչում շնորհող ծրագիր “Երիտասարդական աշխատանք և երիտասարդական հետազոտություն”և ուսանողները, որոնք ուսանում են համալսարանում այլ կրթական ծրագրերով կարող են հաճախել “Երիտասարդական աշխատանք և երիտասարդական հետազոտություն” առանձին մոդուլի դասընթացներին:

Երիտասարդականաշխատանքիևերիտասարդականաշխատողիորակիապահովման մեխանիզմներ (աշխատողների, կառույցներիլիցենզավորում,լիցենզավորում)

Ինչպես սոցիալական աշխատանքի/աշխատողների դեպքում է, ենթադրվում է, որ երիտասարդական աշխատանքի/աշխատողի որակի ապահովումը կիրականացվի ստեղծվելիք «Երիտասարդական աշխատողների ասոցիացիա»-յի կողմից, որը կներառի ոլորտում գործող բոլոր շահակիցներին (պետական, ոչ պետական և միջազգային) և կարող է ունենալ ՀԿ-ի կարգավիճակ: Այն նաև կարող է հանդիսանալ երիտասարդական աշխատողների շահերի պաշտպանը: Հետագայում, ասոցիացիան կարող է ձեռնարկել նաև երիտասարդական աշխատողների արհմիության ստեղծման գործընթաց:

Ֆինլանդիայում, ԵԱ-ի որակի գնահատման չափանիշները, ըստ Կանունա կազմակերպության կողմից մշակված ինքնագնահատման և գործընկերների կողմից գնահատման մոդելի (peer assessment), 24-ն են և գնահատվում են մեկից չորսը սանդղակով, որտեղ մեկը անբավարարն է, չորսը՝ գերազանցը (տես http://www.nuorisokanuuna.fi/sites/default/files/filedepot/youth_work_quality_assessment_verkkoversio.pdf).

1. մարզային մակարդակում անցկացվող համապատասխան ծրագրերի մասին գիտելիքներ
2. համագործակցություն տեղի ԵԱ այլ շահակիցների հետ
3. ցանցային աշխատանք
4. համագործակցություն խնամակալության և հոգեբարձության մարմինների հետ
5. համագործակցություն տեղի դպրոցների հետ
6. հանդիպումներ երիտասարդների հետ՝ վերջիններիս միջավայրում
7. համայնքի մակարդակում խնդիրների լուծմանն ազդելու կարողություն
8. թվային ասպեկտները և սոցիալական մեդիան ԵԱ-ում (ինչ չափով են կիրառվում)
9. հաղորդակցություն
10. աշխատանքների համակարգում և դրանց իրականացման գնահատում
11. մոդելների և հրահանգների/ուղեցույցների հետևողական կիրառում և դրանց հարմարությունը ԵԱ-ում
12. աշխատանքի և հաղորդակցության բաժանում երիտասարդական աշխատողների միջև
13. կապը երիտասարդների հետ
14. երիտասարդների միմյանց հետ ընկերանալու/ինտեգրման խթանում
15. հավասարություն (ծագման, ազգային, լեզվական և կրոնական պատկանելիության, հավատքի, որը կախված չի երիտասարդների առողջության և հաշմանդամության հետ)
16. սեքսուալ ինքնության և սեքսուալ կողմնորոշման հավասարություն

17. ռասիզմից զերծ
18. երիտասարդների կողմից իրականացվող/կազմակերպվող միջոցառումների խթանում
19. երիտասարդների կողմից մյուս երիտասարդների կազմակերպած միջոցառումների վերահսկողություն
20. հոբբիների և կոնկրետ աշխատանքների վրա հիմնված խմբերի առկայություն
21. խաղերի կազմակերպում
22. առողջ ապրելակերպի խթանում
23. շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության զգացում
24. երիտասարդների զբաղվածության խթանում:

Երկիրը՝ ԴԱՆԻԱ

Երիտասարդական աշխատանքի սահմանումը(նպատակներ, արդյունք, հիմնարար արժեքային բազա և սկզբունքներ սոցիալ-փիլիսոփայական մեթոդաբանություն)

Սահմանում

Դանիայում չկա Երիտասարդական աշխատանքի (այսուհետ ԵԱ) ֆորմալ սահմանում և «երիտասարդական աշխատանք» տերմինը այդքան էլ լայնորեն չի օգտագործվում ինչպես մյուս երկրներում: ԵԱ-ն ընկալվում է որպես «աշխատանք երիտասարդների հետ պետական կամ հասարակական ոլորտում»:

ԵԱ-ն իրականացվում է տարբեր պետական կառույցների կողմից (ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում), ինչպես նաև ոչ կառավարական կազմակերպությունների՝ երիտասարդական ՀԿ-ների կողմից: Չկա ԵԱ-ի համար պատասխանատու նախարարություն կամ հստակ սահմանազատված օրենսդրություն, որը կարգավորում է այս հարցերը: Փոխարենը, ԵԱ-ն և երիտ. Քաղաքականության այլ բնագավառները ընդգրկում են տարբեր նախարարություններ, ծրագրեր և օրենքներ:

ԵԱ-ին առնչվող հիմնական օրենքները հետևյալն են.

- Զբաղվածության ակտիվ նախաձեռնությունների մասին ակտը
- Ուղղորդման մասին ակտը
- Ցերեկային խնամքի հարմարությունների մասին ակտը
- Մեծահասակների ընդհանուր կրթության մասին ակտը
- Սոցիալական ծառայությունների կոնսոլիդացման մասին ակտը:

ԵԱ-ում ներգրավված նախարարություններն են.

- Երեխաների և Կրթության նախարարությունը, որը համակարգում է ՏԻՄ մակարդակում գործող երիտասարդների ուղղորդման կենտրոններն ու երիտասարդական ակումբները
- Սոցիալական հարցերի և ինտեգրացիայի նախարարությունը, որը համակարգում է Սոցիալական ծառայությունների կոնսոլիդացման մասին ակտով սահմանված բոլոր աշխատանքները, այն է՝ ՏԻՄ մակարդակում գործող սոցիալական կենտրոնների աշխատանքը:
- Զբաղվածության նախարարությունը, որը պատասխանատու է երիտասարդների դրամական նպաստների սահմանման և վճարման, ինչպես նաև վերջիններիս շրջանում աշխատաշուկայի ակտիվ ծրագրերի կազմակերպման համար. նախարարությունը համակարգում է ՏԻՄ մակարդակում գործող աշխատանքի կենտրոնները:
- Գիտության, նորարարության և բարձրագույն կրթության նախարարությունը, որը համակարգում է Ուղղորդման մասին ակտի այն աշխատանքները, որոնք վերաբերում են երիտասարդների՝ միջնակարգ կամ մասնագիտական կրթությունից դեպի բարձրագույն կրթության անցմանը: Սա վերաբերում է Երիտասարդների Ուղղորդման յոթ մարզային կենտրոններին, ինչպես նաև ազգային մակարդակում գործող կրթական առցանց ուղղորդման պորտալին:

ԵԱ նպատակները Դանիայում հետևյալն են.

- Մեծացնել երիտասարդների մասնակցությունը ժողովրդավար հասարակությունում: Այսպիսով, «ակտիվ քաղաքացիություն» տերմինը ԵԱ-ի Դանիական սահմանման մեխն է:
- ԵԱ-ն պետք է լինի ներառական և փորձի աջակցել ու բարելավել բոլոր երիտասարդների կյանքը, ոչ միայն երիտասարդների հատուկ խմբերինը, չնայած վերջին տարիներին միտում է նկատվում ջանքերը ուղղելու ավելի խոցելի և ռիսկային երիտասարդական խմբերի հետ աշխատանքներին, ինչպիսիք են ներգաղթյալ կամ կրթություն չունեցող երիտասարդները:
- Կամավորները և ՀԿ-ները շատ կարևոր դերակատարում ունեն ԵԱ-ի իրականացման համար:

ԵԱ արդյունքները և ազդեցությունը

Պետական մարմինների կողմից տարվող ԵԱ-ն առանձնահատուկ միտված է ստեղծելու անհրաժեշտ պայմանները, որ բոլոր երիտասարդները կարողանան կրթություն ստանալ, ինչպես նաև կրթական խորհրդատվության միջոցով օգնել նրանց, որ կարողանան ընտրել իրենց համապատասխան հետագա կրթությունը/մասնագիտացումը: Կամավորական աշխատանքը հանդիսանում է

երիտասարդների մասնակցության խթանման և սոցիալական որակների ձեռք բերման լավագույն գործիքներից մեկը: Այն նույնպես շատ կարևոր է երիտասարդներին կրթական համակարգում պահելու համար: ԵԱ-ի արդյունքներից է նաև ներգրավված երիտասարդներին կես դրույք աշխատանք գտնելու հետ կապված աջակցությունը: Բացի գումար աշխատելու հանգամանքից, երիտասարդները և երիտասարդական աշխատողները գիտակցում են, որ աշխատանքը կարևոր է նոր փորձառություն ձեռք բերելու և ինչու չէ, այն նաև ոչ-ֆորմալ կրթություն ստանալու հնարավորություններից մեկն է:

Չնայած Դանիան ֆորմալ առումով չունի երիտասարդական քաղաքականություն, այնուամենայնիվ, քաղաքական բարձր մակարդակով կա մեջ աջակցություն և հանձառություն հաջողակ ԵԱ-ի իրականացման համար:

Երիտասարդական աշխատանքը/ծրագրերը իրականացվում են տարբեր մասնագիտություններ ունեցող մասնագետների կողմից, հիմնականում մանկավարժների, սոցիալական աշխատողների, երիտասարդական ուղղորդման խորհրդատուների կողմից:

ԵԱ ֆինանսավորումը

Բացի տարբեր նախարարությունների համապատասխան բյուջետային ֆինանսավորումներից, Ֆինլանդիան ունի դրամաշնորհների հատուկ խումբ, որը ուղղված է սոցիալական, առողջապահական և զբաղվածության խնդիրների լուծմանը՝ ներառյալ երիտասարդների խնդիրները: Դամաշնորհներին կարող են դիմել դպրոցները, ՀԿ-ները, կամավորական կազմակերպությունները, որոնց գործունեությունը ուղղված է այս խնդիրների լուծմանը:

ՀԿ-ների և կամավորական կազմակերպությունների կողմից իրականացվող ԵԱ-ն հիմնականում ֆինանսավորվում է ֆուտբոլի և վիճակախաղի տոմսերի վաճառքի արդյունքում ստացված գումարներով. Ֆինլանդիայում համապատասխան օրենսդրությունը սահմանում է, որ օրինակ վիճակախաղի տոմսերի վաճառքից ստացված գումարի 8.2% տնօրնում են ՏԻՄ-երը, որոնք էլ այդ գումարներն ուղղում են երեխաների և երիտասարդների համար իրականացվող ծրագրերի ֆինանսավորմանը:

Երիտասարդական աշխատանքի թիրախներ

ԵԱ թիրախ խմբերը/ծածկույթը

Ավանդաբար Դանիական ԵԱ-ն իր բնույթով եղել է համընդհանուր. այն միշտ ուղղված է եղել բոլորի, ոչ թե միայն երիտասարդների հատուկ խմբերի խնդիրների

լուծմանը: վերջին տարիներին միտում է նկատվում ավելի շատ աշխատանքներ տանելու երիտասարդների մեկուսացված/մարգինալ խմբերին վերինտեգրելու ուղղությամբ: Ներգաղթյալ երիտասարդների տարբեր խմբերը նույնպես վերջին տարիներին արժանանում են ավելի շատ ուշադրության:
ՏԻՄ-երի լիազորության տակ գործող երիտասարդական ակումբները բաց են 13-18 տարեկան երիտասարդների համար:

Ծածկույթը
Չկա հետազոտություն/վիճակագրություն, թե ԵԱ-ն որքան երիտասարդներ է ծածկում: Առկա է միայն 13-24 երիտասարդների մասով վիճակագրությունը, ըստ որի 2012թ.-ին կային 852.500, որից 600.000-ը այս կամ այն չափով ներգրավված էին ԵԱ ծրագրերում/միջոցառումներում: Սակայն տարիքային այս շրջանակը ամբողջությամբ չի արտացոլում երիտասարդների շրջանում տարվող աշխատանքների ողջ ծավալը, քանի որ տարբեր նախարարություններ, իրենց համապատասխան ծրագրերում կարող են բոլոր մինչև 18 տարեկաններին սահմանել երիտասարդ, մյուսները մինչև 30 տարեկաններին:

Երիտասարդականաշխատանքիիրականացմանառաջնայինձևաչափեր (օր. ակումբներ, երիասարդականկենտրոններ, փողոցումիրաանացվողաշխատան, նայլն)

Ֆինլանդիայում կան տարբեր տիպի երտասարդական ակումբներ, գործում են հիմնականում ետ-դպրոցական կամ երեկոյանժամերին և բաց են 10-18 տարեկանների համար, որոնք կարող են հավաքվել և մասնակցել մի շարք սոցիալական միջոցառումների/աշխատանքների, որոնք անցկացվում են մասնագետների՝ հիմնականում երեխաների և երիտասարդների հարցերով զբաղվող/մասնագիտացած մանկավարժների կողմից:

Կան նաև երկու տիպի երիտասարդների ուղղորդման կենտրոններ: 46 երիտասարդների ուղղորդման կենտրոնները տրամադրում են տեղեկատվություն և խորհրդատվություն պարտադիր կրթությունից ավելի բարձր կրթական ծրագրերի անցման հետ կապված (ավագ դպրոց, միջին մասնագիտական կրթություն և այլն), իսկ 7 մարզային մակարդակում գործող ուղղորդման կենտրոնները տրամադրում են տեղեկատվություն և խորհրդատվություն ավագ դպրոցից կամ միջին մասնագիտական կրթությունից դեպի բարձրագույն կրթություն անցման հետ կապված: Ուղղորդման աշխատանքները տեղի են ունենում երիտասարդաշատ վայրերում, ինչպիսիք են դպրոցները, հանրային գրադարանները և իրականացվում են անհատական և խմբային քննարկումների, սեմինարների, խորհրդակցությունների, “սրճարան” տիպի հանդիպումների և առցանց խորհրդատվության միջոցով:

Բացի այդ, ազգային մակարդակում գործում է Ուղղորդման պորտալը www.ug.dk, որը համապարփակ տեղեկատվություն է տրամադրում կրթական և ուսուցման բոլոր տիպի ծրագրերի մասին, մասնագիտությունների/արհեստների, աշխատաշուկային առնչվող հարցերի և այլն: Այն ունի նաև էլ-նամակ ուղարկելու հնարավորություն: Պորտալի միջոցով հնարավոր է մշակել ինտերակտիվ կրթական անհատական պլան, ստանալ առցանց խորհրդատվություն հետագա կրթության, մասնագիտության/մասնագիտացման և կարիերայի զարգացման վերաբերյալ:

Դանիայում կա նաև հատուկ ծրագիր, որը կոչվում է "Երիտասարդական փաթեթ": Այն փաթեթային/համապարփակ լուծումներ է փորձում առաջարկել երիտասարդներին. Գտնելու զբաղվածություն նրանց համար, ովքեր ունեն կրթություն և կրթություն նրանց համար, ովքեր չունեն դա: Քանի որ ԵԱ-ն իրականացվում է մի շարք պետական մարմինների կողմից, ապա պետական ԵԱ-ն ենթադրում է մի իրավիճակ, երբ տարբեր երիտասարդական աշխատողներ կարող են զբաղվել միևնույն երիտասարդով՝ կազմելով միասնական աշխատանքային ծրագիր միմյանց և տվյալ երիտասարդ մարդու հետ: Երիտասարդական փաթեթը տարածվում է 16-30 տարեկան երիտասարդների վրա:

Երիտասարդականաշխատողիինստիտուտը

Երիտասարդական աշխատողի կարգավիճակը.
Ինչպես վերը նշվեց, սրանք հիմնականում մանկավարժներ և սոցիալական աշխատողներ են, որոնք աշխատում են երիտասարդների հետ: ՏԻՄ-երի ներքո գործող սոցիալական և աշխատանքիկենտրոններում, «երիտասարդական փաթեթների» ներմուծումից հետո այնպես են կազմակերպում աշխատանքները, որ աշխատակիցների մի մասը զբաղվի միայն 18-30 տարեկան երիտասարդներով, չնայած ոչ բոլոր կենտրոններում է այդպես: Այս համատեքստում, նշված աշխատակիցները չեն համարվում երիտասարդական աշխատողներ, այլ սոցիալական աշխատողներ կամ դեպք վարողներ: Սոցիալական աշխատողները և մանկավարժները ունեն իրենց արհմիությունը:

Երիտասարդականաշխատողիպատրաստմանհամակարգեր (պատրաստողկառույցներ, կրթականծրագրեր /ֆորմալևոչֆորմալ/)

- Երիտասարդական աշխատողի որակավորման նվազագույն ստանդարտներ – չկան (միակ պահանջը, որ վերագրվում է թե պետական հատվածի աշխատողներին և թե կամավորներին, որ նրանք, ովքեր աշխատում են մինչև

տասնհինգ տարեկան երիտասարդների հետ, սեքսուալ բնույթի հանցանք կատարած չլինեն): Յուրաքանչյուր ՏԻՄ ինքն է որոշում իր կենտրոններում աշխատող մասնագետներին վերագրվող պահանջները: Այնուամենայնիվ, երիտասարդների ուղղորդման կենտրոնների աշխատակիցները, Ուղղորդման մասին ակտի ընդունումից հետո (2004թ.), պետք է անցնեն հատուկ դասընթաց (ուղղորդման հատուկ կրթություն) և մինչ այդ ունենան դասավանդման, սոցիալական աշխատանքի կամ խնամքի վարման բակալավրի աստիճան

- ԵԱ-ն որպես մասնագիտություն ճանաչված չէ
- ԵԱ-ն իրականացնելու համար պահանջվում է հետևյալ կրթական բազան.
  - երիտասարդական ակումբներում՝ մանկավարժներ
  - Երիտասարդների Ուղղորդման կենտրոններում՝ ուսուցիչներ, որոնք ունեն ուղղորդման ֆորմալ կրթություն
  - ՏԻՄ-երի մակարդակում գործող սոցիալական և աշխատանքային կենտրոններում՝ սոցիալական աշխատողներ:
  - ԵԱ իրականացնում են նաև մոտ հարյուր հազար կամավորներ:

Կամավորական ԵԱ-ի համար նույնպես չկան ֆորմալ ուսուցման/որակավորման ստանդարտներ: Դանիայի Եկեղեցին իր հերթին տարեկան պատրաստում է մոտ է հարյուր երիտասարդական աշխատողներ, որոնք հիմնականում աշխատում են խոցելի երիտասարդների հետ: Երիտասարդական ակումբներում կարելի է հանիպել նաև հոգեբանների:

ԵՐԿԻՐԸ: ԿԱՆԱԴԱ

Երիտասարդական աշխատանքի սահմանումը (նպատակներ, արդյունք, հիմնարար արժեքային բազա և սկզբունքներ սոցիալ-փիլիսոփայական մեթոդաբանություն)

Կանադայում երիտասարդների հետ տարվող աշխատանքների վերաբերյալ տարբեր աղբյուրներում հիշատակվում է հատուկ ուսուցանողների գործունեության մասին: Կանադայի Կառավարության պաշտոնական կայքում երիտասարդական աշխատանք և երիտասարդական աշխատող եզրույթները չեն կիրառվում: Դրա փոխարեն ներկայացված է հատուկ ուսուցանողի (éducateur spécialisé) մասնագիտությունը:

Հատուկ ուսուցանողի գործունեության նպատակն է վերականգնել և պահպանել թիրախ խմբի ինքնուրունությունը սոցիալ-կրթական միջոցառումների միջոցով: Ուսուցանողների միջամտությունը տեղի է ունենում կանխարգելման, կրթական տեխնիկաների կիրառմամբ, որոնք լավագույնս կնպաստեն այն մարդկանց

սոցիալական ինտեգրացիային ու համակողմանի զարգացմանը, ում հետ աշխատում են: Մասնագիտացված ուսուցանողը կիրառում է տարատեսակ մոտեցումներ և տեխնիկաներ, ինչպիսիք են արվեստը (երաժշտություն, պար, թատրոն, ընթերցանություն), սպորտ (թեթև մարմնամարզություն, լող և այլն), խաղերը (նկարներով, ձեռքի աշխատանքի հետ կապված և դերային խաղեր), թվային տեխնոլոգիաներ (համակարգիչ, տեսանյութեր և այլն): Կիրառվող տեխնիկաներն այսքանով չեն սահմանափակվում, քանի որ ուսուցանողը կարող է կիրառել և փորձարկել այնպիսի տեխնիկաներ, որոնք լավագույնս կարող են մարդու մոտ հետաքրքրություն արթնացնել և այդ կերպ նպաստել նրա ինտեգրմանն ու զարգացմանը:

Երիտասարդական աշխատանքի թիրախներ (օր. `տարիքային սահմաններ, երիտասարդներ հատուկ կարիքներով, բարդ սոցիալական իրավիճակում հայտնված, ծնողազուրկ, մեյնսթրիմ)

Կանադայում հատուկ ուսուցանողների աշխատանքի թիրախի տարիքային սահման գոյություն չունի, նրանք աշխատում են ինչպես երեխաների, դեռահասների և երիտասարդների, այնպես էլ տարեցների հետ: Նրանք աշխատում են ֆիզիկական, աֆեկտիվ, մտավոր և սոցիալական խնդիրներ և դժվարություններ ունեցող անձանց հետ:

Երիտասարդական աշխատանքի իրականացման առաջնային/հիմնական ձևաչափեր (օր. ակումբներ, երիասարդական կենտրոններ, փողոցում իրաանացվող աշխատանք, և այլն)

Հիմնական աշխատավայրեր՝
Երիտասարդական կենտրոններ (Երիտասարդական կենտրոնները պետական կառույցներ են, որոնք օգնում են ծնողազուրկ և դժվար իրավիճակում գտնվող երիտասարդներին: Երիտասարդները կարող են հաճախել և հյուրընկալվել այդ կենտրոններում ծննդյան օրվանից մինչև հասունության տարիքը: Կենտրոններն ունեն պաշտպանելու ինչպես նաև վերաադապտացման առաքելություն)
Մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների վերաադապտացման կենտրոններ
Տարատեսակ կախվածություններ ունեցող անձանց վերաադապտացման կենտրոններ
Հոգեբանական և սոցիալական վերաադապտացման կենտրոններ
Զգայական հաշմանդամություն ունեցող անձանց վերաադապտացման կենտրոններ
Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող կենտրոններ
Առողջապահական և սոցիալական ծառայությունների կենտրոններ
Դպրոցներ՝տարրական, միջնակարգ
Հատուկ դպրոցներ

Ավելի հազվադեպ հանդիպող աշխատավայրեր՝
Մանկապարտեզներ
Հիվանդանոցներ
Կալանավայրեր
Ժամանցի կենտրոններ

Երիտասարդական աշխատողի ինստիտուտը (ֆունկցիաներ, իրավական ստատուս, կարգավորող իրավական հիմքեր)

Երիտասարդների հետ աշխատանքում հատուկ ուսուցանողի հիմնական ֆունկցիաները կարելի է բաժանել 4 խմբի՝
Միջոցառումների մշակում և իրականացում - Հատուկ ուսուցանողը մշակում և իրականացնում է միջոցառումներ (անհատական և խմբակային) երիտասարդների, նրանց ընտանիքների կամ ընկերների համար: Միջոցառումները կրում են կրթական, վերաադապտացման և վերաինտեգրման բնույթ և իրականացվում են հաշվի առնելով երիտասարդի խառնվածքն ու կարիքները: Միջոցառումների նպատակն է զարգացնել երիտասարդի սոցիալական հմտությունները:

Աջակցություն և օգնություն երիտասարդին – ՈՒսուցանողի կողմից մշակված միջամտության ծրագրի իրականացման համար նա առաջին հերթին պետք է հաստատի փոխվստահություն առաջանող հարաբերություններ երիտասարդի, նրա ծնողների և ընտանիքի հետ, որպեսզի նրանց նույնպես ներգրավի այդ գործընթացում: Ուսուցանողը մասնակցում է երիտասարդի և նրա միջավայրի առօրյային, օրինակ՝ նրանց հետ կարող է ճաշել: Ուսուցանողը ամենօրյա հանդիպումներ է ունենում երիտասարդի հետ, օգնում է նրան բացահայտել իր ուժեղ և թույլ կողմերը, նրա հետ միասին մշակում է թույլ կողմերի վրա աշխատելու պլանը, լսում նրա անհանգստությունները և միշտ հասանելի է, եթե երիտասարդը ցանկանում է խոսել և կիսվել նրա հետ: Մեծ է ուսուցանողի մասնակցությունը երիտասարդի առօրյա կյանքին, ինչը հնարավորություն է տալիս վերահսկել, մասնակցել, աջակցել, խորհուրդ տալ, ուղղորդել և քաջալերել նրա նախաձեռնություններն ու ինքնուրույն գործելու ցանկությունը:

Աջակցություն ծնողներին – Երիտասարդական կենտրոններում ուսուցանողը սերտորեն աշխատում է երիտասարդների ծնողների և ընտանիքի հետ՝ պարբերաբար տեղեկացնելով իր կողմից մշակված միջամտության պլանի վերաբերյալ: Ուսուցանողը փորձում է փոխվստահության հարաբերություններ հաստատել ծնողների և ընտանիքի հետ, որպեսզի կարողանա հնարավորինս արդյունավետ կերպով կազմակերպել նրանց ներգրավվածությունը երիտասարդի հետ աշխատելու տարբեր փուլերում:

Ուսուցանողը շատ հաճախ աշխատում է ընտանեկան միջավայրում, սակայն այն պարագայում, երբ երիտասարդը գտնվում է Երիտասարդական կենտրոնում և չի բնակվում ծնողների հետ, ուսուցանողը պարբերաբար կապի մեջ է լինեում ծնողների հետ՝ նրանց տեղեկացնելով առաջընթացի մասին և կապող օղակ է հանդիսանում երիտասարդի և նրա ծնողների միջև:

Սոցիալական ինտեգրացիայի ընթացքում երիտասարդի ուղեկցում – Ուսուցանողն ուղեկցում է երիտասարդին նրա ադապտացման տարբեր միջավայրերում՝ կապող օղակ հանդիսանալով երիտասարդի և նոր միջավայրի միջև՝ դպրոցական միջավայրում ադապտացիայից մինչև աշխատանքային ինտեգրացիա, առօրյա գնումներից մինչև բժշկական հաստատություններ այցելություններ և այլն:

Երիտասարդական աշխատողի պատրաստման համակարգեր (ունակությունների շրջանակներ, պատրաստող կառույցներ, կրթական մոտեցումներ և ծրագրեր /ֆորմալ և ոչ ֆորմալ/)

Հատուկ ուսուցանողները քոլեջի եռամյա կրթությունից հետո կարող են արդեն աշխատել ոլորոտում կամ շարունակել ուսումը համալսարանում: Քոլեջ կարող են ընդունվել նրանք, ովքեր ավարտել են միջնակարգ կրթությունը (16-17 տարեկանում):

Հատուկ ուսուցանողների պատրաստման ծրագիրը, ինչպես քոլեջի մյուս կրթական ծրագրերը, բաղկացած է 2 մասից՝

Ընդհանուր կրթություն, որը ներառում է ֆրանսերեն և անգլերեն լեզուների, փիլիսոփայության ուսումնասիրում, ֆիզիկական կրթություն և այլն: Ընդհանուր կրթության նպատակն է զինել ուսանողներին այնպիսի հմտություններով, որոնք նրանց կօգնեն ապրել հասարակության մեջ և պատասխանատվություն կրել վերջինիս համար:

Հատուկ մասնագիտական կրթություն, որի նպատակն է ուսանողների մոտ կրթության 3 տարիների ընթացքում զարգացնել այն մասնագիտական հմտությունները, որոնք թույլ կտան ուսանողներին ավարտելուն պես աշխատել իրենց մասնագիտությամբ:

Կրթության բաղկացուցիչ մասերից են պրակտիկ աշխատանքները՝

1-ին պրակտիկ աշխատանքն իրականացվում է 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում շաբաթը 1 օր տասը շաբաթվա ընթացքում: Առաջին պրակտիկ աշխատանքը կրում է դիտարկման և ուսումնասիրման բնույթ:

2-րդ պրակտիկ աշխատանքն իրականացվում է 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակում շաբաթը 3 օր 15 շաբաթվա ընթացքում: 2-րդ պրակտիկ աշխատանքը կրում է արդեն փորձարկման բնույթ:

3-րդ վերջին պրակտիկ աշխատանքն իրականացվում է 3-րդ կուրսի 1-ին կիսամյակում շաբաթը 5 օր 15 շաբաթվա ընթացքում: Ուսանողներն իրենք են ընտրում

այն հաստատությունները, որտեղ անցնելու են պրակտիկան և աշխատելու են ուղղակիորեն թիրախային խմբերի հետ:

Քոլեջի կրթությունը հնարավորություն է տալիս շրջանավարտների համապատասխանել այն ստանդարտներին, որոնք սահմանած են աշխատաշուկայում: Հատուկ ուսուցանողերի կրթական ծրագիրը սահմանում է հետևյալ հմտությունները, որոնք ուսանողներ պետք է զարգացնեն:

Մասնագիտական հմտությունները բաժանվում են 2 խմբի՝

Ընդհանուր հմտություններ, որոնք կիրառելի են ցանկացած միջավայրում, իրավիճակում և ցանկացած աշխատանք իրականացնելիս

Հատուկ հմտություններ, որոնք անհրաժեշտ են հատուկ թիրախ խմբերի և հատուկ միջավայրերում աշխատելիս:

Ընդհանուր հմտություններ՝

Համայնքում ռեսուրսների և ծառայությունների որոնում

Հաղորդակցման հմտություններ թիրախ խմբի հետ և աշխատանքային թիմի ներսում

Ադապտացման բիոլոգիական, հոգեբանական և սոցիալական խնդիրների ուսումնասիրում

Անձի վարքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում

Զարգացման միջոցառումների և կլինիկական գործիքների մշակում

Անձի միջավայրի աջակցության հնարավորությունների բացահայտում

Օգնություն խնամքի կարիք ունեցող անձանց

Մոտեցումների ու միջամտության տեխնիկաների համապատասխանեցում առկա խնդիրներին

Մասնագիտական էթիկային համապատասխանող մասնագիտական վարքագծի ցուցաբերում

Փոխվստահության փոխհարաբերությունների հաստատում, որոնք հնարավորություն կտան օգնել դիմացինին

Թիրախ խմբի և աշխատանքային թիմի ոգեշնչում

Մասնագիտական անկողմնակալության պահպանում

Սոցիալական երևույթների և ադապտացման խնդիրների միջև առկա կապի վերլուծում

Միջամտության պլանի մշակում

Տարատեսակ մշակութային և էթնիկ համայնքների պատկանող անձանց հետ աշխատանք

Հատուկ հմտություններ

Ադապտացման և վերաադապտացման միջամտություն իրականացնել մտավոր զարգացման խնդիրներ ունեցող անձանց հետ

Միջամտություն իրականացնել այն երիտասարդների հետ, ովքեր լեզվական խնդիրներ ունեն և դժվարություններ են ունենում դպրոցում սովորելիս

Ադապտացման և վերաադապտացման միջամտություն իրականացնել ֆիզիկական և նևրոլոգիական հաշմանդամություն ունեցող անձանց հետ

Միջամտություն իրականացնել ինքնուրույն գործելու կարողությունը կորցրած տարեցների հետ

Ադապտացման և վերաադապտացման միջամտություն իրականացնել ադապտացման խնդիրներ ունեցող երիտասարդների հետ

Ադապտացման և վերաադապտացման միջամտություն իրականացնել հոգեկան խանգարումներ և թմրանյութերից կախվածություն ունեցող երիասարդների հետ

Ադապտացման և վերաադապտացման միջամտություն իրականացնել սոցիալական մեկուսացման և բռնության ենթարկված անձանց հետ

Միջամտություն իրականացնել սոցիալական կամ մասնագիտական վերաինտգրման գործընթացում գտնվող անձանց հետ

Միջամտություն իրականացնել ճգնաժամային իրավիճակում գտնվող մարդկանց հետ

Մշակել և իրականացնել ամբողջական միջամտության ծրագիր

Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի որակի ապահովման մեխանիզմներ (աշխատողների, կառույցների լիցենզավորում, ատեստավորում, ինքնագնահատման գործիքներ և այլն)

Քոլեջի եռամյա կրթություն ստանալուց հետո ուսանողները ստանում են դիպլոմ՝ պաշտոնական փաստաթուղթ տրված Քվեբեկի Կրթության, ազատ ժամանցի և սպորտի նախարարության կողմից:

Առաջին կլոր սեղանի հաշվետվություն

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղվերան, Հայաստան
16-18 սեպտեմբերի, 2015թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս ծրագրի հիմնական թեման Հայաստանում երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալիզացիան և կայացումն է: Այս ոլորտը Հայաստանում շատ խոցելի է, քանի որ պետական մակարդակում դեռ չկա հայեցակարգային զարգացման տեսլական, որը թույլ կտա ապահովել ոլորտի շարունակական զարգացումը և ուժեղացումը, հաջորդ սերունդների համար երիտասարդական աշխատողների կրթությունը և վերապատրաստումը: Հայաստանի անկախացումից հետո հասարակական երիտասարդական մի շարք կազմակերպություններ սկսել են իրականացնել երիտասարդական աշխատանք: Վերջին 3 տասնամյակների ընթացքում աշխարհի տարբեր երկրներում հասարակական և համայնքային բարելավման հարցերում շատ մեծ խթան է հանդիսանում երիտասարդական աշխատանքը:

Սակայն երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ կայացմանը խոչընդոտում են մի շարք խնդիրներ, ինչպիսիք են.

- Հասարակության շրջանում երիտասարդական աշխատանքի վերաբերյալ իրազեկության պակասը, ինչի արդյունքում թերագնահատվում է երիտասարդական աշխատանքի ողջ պոտենցիալը,
- Երիտասարդական աշխատանքի վերաբերյալ մեթոդաբանական և կրթական նյութերի ու ծրագրերի բացակայությունը և որպես հետևանք՝ երիտասարդական աշխատանքի ճանաչելիության բացակայությունը,
- Երիտասարդական աշխատանքի խթանման պետական հայեցակարգի կամ ոլորտի ուղղորդված զարգացման որևէ ծրագրի բացակայությունը,
- Տեղեկատվություն պակաս – շատ երիտասարդներ այսօր ունեն մի շարք կարիքներ (որակյալ ժամանց, ուսուցողական հնարավորություններ, սոցիալական նշանակության խնդիրներ), որոնց շուրջ տարբեր տեսակի միջոցառումներ արդեն գոյություն ունեն, սակայն երիտասարդները հաճախ պարզապես պատկերացում չունեն դրանց մասնակցելու հնարավորությունների մասին, •

- Երիտասադական աշխատանքի հասանելիություն – երիատասարդական ոլորտում աշխատող կառույցների մեծ մասը չի աշխատում երիտասարդների խոցելի խմբերի հետ (գյուղական համայնքի երիտասարդություն, օրենքի հետ խնդիրներ ունեցող երիտասարդներ, հաշմանդամներ, փախստականներ):

Երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալիզացիան Հայաստանում ենթադրում է ոլորտի երկարաժամկետ և համակարգված զարգացումը, նոր սերնդի մասնագետներ պատրաստելու համար կրթական ծրագրերի և երիտասարդական աշխատանքի որակի ապահովման մեխանիզմների ստեղծումը: Արդյունքում՝ գրագետ երիտասարդական աշխատանքը կխթանի երիտասարդների անհատական և մասնագիտական զարգացումը, նրանց ակտիվ ներգրավվածությունը հասարակական հարցերում: Երիտասարդական աշխատանքի զարգացման վերաբերյալ պետական ծրագրի առկայությունը կմիավորի երիտասարդներին աջակցելու առանձին կազմակերպությունների ջանքերը, կխթանի երիտասարդների ակտիվ մասնակցությունը համայնքային հարցերում, նրանց անհատական զարգացումը, կնպաստի երիտասարդական աշխատանքի ճանաչելիությանը:

Համագործակցություն ծրագրի շրջանակներում

Ծրագրում անմիջականորեն ներգրավված են Երևանում և մարզերում գործող տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, ովքեր զբաղվում են երիտասարդական աշխատանքով և ծանոթ են ոլորտում գոյություն ունեցող խնդիրներին, դրանց պատճառներին և հետևանքներին:

Ծրագրի նպատակը և խնդիրները

Երիտասարդական աշխատանքի ինստիտուտի կայացման և զարգացման նպատակով Թրեյներների ազգային թիմ ՀԿ-ը (ԹԱԹ), ԿԱԶԱ Շվեյցարական մարդասիրական հիմնադրամը, Միջմշակութային ուսումնասիրությունների, ուսուցման և երկխոսության միջազգային կենտրոնը, Գյումրու Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնը ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ իրականացվում է <<Երիտասարդական աշխատանքը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ>> ծրագիրը:

Ծրագրի հիմնական նպատակն է խթանել Հայաստանում երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ զարգացումը, այս ոլորտում առկա գիտելիքների և

կուտակված հմտությունների հիման վրա, հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են հետևյալ գործողությունները.
Մեթոդական կլոր սեղան, որի ընթացքում կներկայացվեն ոլորտի ձեռքբերումները, խոչընդոտներն ու մարտահրավերները, ինչպես նաև կմշակվի միջազգային փորձի ուսումնասիրության օրակարգը և ծրագիրը:
Միջազգային փորձի ուսումնասիրություն (Desk Research). Այս փուլում տեղի փորձագետները կուսումնասիրեն երիտասարդական աշխատանքի ավանդույթները և զարգացման ծրագրերը տարբեր երկրներում: Ուսումնասիրություններին կմասնակցեն միջազգային փորձագետներ 3 երկրներից:
Զեկույցի պատրաստում. Ուսումնասիրությունների արդյունքների ամփոփման հիման վրա կստեղծի զեկույց, որում ներկայացված կլինեն Հայաստանում երիտասարդական աշխատանքի մարտահրավերները և ինստիտուցիոնալ զրագացման հեռանկարները:
Ամփոփիչ մեթոդական կլոր սեղանի ընթացքում ծրագրում ներգրավված մասնակիցներին կներկայացվեն իրականացված ուսումնասիրությունների արդյունքները զեկույցի տեսքով և երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ զարգացման հնարավոր հեռանկարները:

Ծրագրի մեթոդաբանություն

Ծրագրի սկզում և վերջում նախատեսված մեթոդական հանդիպումների ընթացքում կկիրառվեն ոչ-ֆորմալ կրթության մեթոդներ՝ տեսական նյութի՝ քննարկումների, թիմային և անհատական աշխատանքների հետ համադրությամբ: Մեթոդների նման համադրումը թույլ կտա հարցին մոտենալ մի քանի կողմերից և, համապատասխանաբար, տեղեկություններ ստանալ բազմաթիվ աղբյուրներից: Միայն նման բազմակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն կտա ավարտական զեկույցում արտացոլել և՛ երիտասարդական աշխատանքի ոլորտում գործող մասնագետների կարծիքները, և՛ աշխարհի տարբեր երկրներում եղած հայեցակարգային փաստաթղթերը, օրենքները և օրենսդրական ակտերը, տարբեր երկրների լավագույն փորձը, և՛ միջազգային ու տեղական փորձագետների աշխատանքի արդյունքը: Ծրագրի տևողության ողջ ընթացքում, մասնավորապես մեթոդական հանդիպումների ժամանակ ենթադրվում է ներգրավված երիտասարդ աշխատողների ակտիվ մասնակցությունը, նրանց կողմից խնդիրների ձևակերպումը, հնարավոր լուծումների, երիտասարդ աշխատողների կրթական ծրագրերի և որակի ապահովման մեխանիզմների մշակումը:

Կլոր սեղանի մասնակիցները

Արեգ Թադևոսյան - Միջմշակութային ուսումնասիրությունների, ուսուցման և երկխոսության միջազգային կենտրոն
Անահիտ Մինասյան - ԿԱԶԱ Շվեյցարական մարդասիրական հիմնադրամ
Զարուհի Լավչյան - Թրեյներների ազգային թիմ ՀԿ
Արթուր Նաջարյան - Գյումրու Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն
Աննա Եղոյան - Միջմշակութային ուսումնասիրությունների, ուսուցման և երկխոսության միջազգային կենտրոն
Արման Ուդումյան – Սոցիալական զարգացման և հանրային քաղաքականության կենտրոն ՀԿ
Տաթևիկ Մարգարյան – Համաշխարհային անկախ երիտասարդության միություն
Կարեն Տերտերյան - ՀԱՍԿ
Մանե Մադոյան – Ինֆորմացիաքյի ազատության կենտրոն
Հայկարամ Դրմեյան – Շիրակի Թեմի սոցիալ կրթական կենտրոն
Նունե Ավետիսյան – Թթենի ՀԿ, Գորիս
Մենուա Բրուտյան – Լոռեցիների միավորում
Կարինե Ստեփանյան - ԿԱԶԱ Շվեյցարական մարդասիրական հիմնադրամ
Ռուդոլֆ Զաբրոդին – Հույսի Կամուրջ ՀԿ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ
Ակնկալիքներ կլոր սեղանից և հետազոտության գործընթացից

Հայաստանի համատեքստում երիտասարդական աշխատանքի կոնցեպտուալ շրջանակի սահմանում, համակարգի փիլիսոփայական, մանկավարժական, սոցիալական մեթոդաբանական ուղղությունների սահմանում /օրինակ՝ տնտեսական-քաղաքացիական ակտիվության խթանում և դաստիարակություն, երիտասարդների ձեռներեցություն, զբաղվածության խթանում, սոցիալական ներառում, և այլն/

մի քանի տիպային սցենարներ՝ ոլորտի զարգացման համար /պատմություն, հիմնական ուղղություններ, զարգացման ռազմավարություններ, գիտական հիմնավորումներ, ռեսուրսներ/

ԵԱ մասնագետների պրոֆիլի մշակում, ԵԱ մասնագետնրի պատրաստման ինստիտուտի զարգացման պլանի առաջարկ, ԵԱ ունակությունների համակարգի մշակում և ունակությունների զարգացման ինստիտուսիոնալ և մեթոդական/կրթական աջարակների սահմանում /ֆորմալ և ոչ ֆորմալ համակարգերի շրջանակների բազմազան մեխանիզմներ/, քննարկել ՀՀ-ում ԵԱ մասնագետների որակավորման չափորոշիչների և որակի ապահովման համակարգի մեխանիզմի սահմանում
սահմանել որտեղ է ՀՀ-ում գտնվում , որ կետի վրա է ոլորտը, ուր է ուզում հասնել, և ինչ հնարավորություններ կան այդ կետին հասնելու համար

ԵԱ ոլորտի և կոնցեպցիայի սահմանում, ոլորտի ճանաչելիության բարձրացում, ոլորտի մասին տեղեկատվության համապարփակ ու համակարգված ներկայացում
պլանավորել գործընթաց, ուր 80% կուսումնասիրվի ԵԱ զարգացման միջազգային փորձը, 20% կքննարկվի երիտասարդական աշխատանքի մասնագետների պատրաստման դաշտի կայացման մնացած գործընթացների վերաբերյալ
քայլերի հստակ սահմանում
ունենալ գործընթաց, որից աշխատանքի յուրաքանչյուր փուլում դուրս չի մնա որևէ շահագրգիռ կողմ
ունենալ գործընթաց, որի ներդրմամբ ու արդյունքում հնարավոր կլինի ունենալ ԵԱ համակարգի վերաբերյալ օգտագործելի հիմնարար փաստաթուղթ, աշխատաքնի ճանապարհային քարտեզ, միջազգային փորձի օգտագործմամբ, տեղական առանձնահատկությունների հիման վրա մշակված համակարգի սահմանում

Երիտասարդական աշխատանքի ոլորտը Հայաստանում

Առանձնահատկություններ	Մարտահրավերներ
Քաղաքացիական ինստիտուտի դերը, ֆունկցիան Ընդհանուր սոցիալ-քաղաքական իրավիճակը երկրում, դրա ազդեցությունը կյանքի բոլոր ոլորտներում Ճկունության անհրաժեշտություն Մշուշոտ ապագա Միջսերնդային կապ, ընտանիքի դերը Սևեռում պրոբլեմի, այլ ոչ տաղանդի վրա Դեպի հասուն, անկախ կյանք տեղափոխման ժամանակաշրջանի ձգվածություն Դաշտը մշակված չէ Կամավորական հիմունքներով աշխատանք Բարոյական արժեքների կարևորում Մեկ ուղղության բացակայություն Սեփական յուրահատկության զգացում ԵԱ ավանդույթների բացակայություն	Տերմինների ունիֆիկացիայի պակաս Հասանելիություն /ով ում մոտ է գնում/ Աշխատանք միայն <<հեշտ>> թիրախային խմբերի հետ Արժեքներ <<ֆեոդալական համակարգի մոտեցում>> /էս սարն իմնա, էս ծառն իմնա/ Ֆորմալիզացման հակում Նորարարություն և ստողծարարության պակաս Երիտասարդների թիվը Բոլոր շահագրգիռ կողմերի փոխադարձ ստիգմատիզացիա Միջսեկտորային համագործակցության պակաս/բացակայություն Կախվածություն դոնորական ռեսուրսներից Չհիմնավորված մրցակցություն Ինֆորմացիոն հիգիենայի բացակայություն ՏՏ աշխատանքի մեջ ինտեգրման պակաս Թույլ կազմակերպվածություն, համակարգում, ճկունություն Գիտափիլիսոփայական հենքի բացակայություն

Երիտասարդական քաղաքականության փաստացի միայն ազգային մակարդակ Մայրաքաղաք-մարզ անհամաչափություն ամեն ինչում Ազգային, կրոնական, լեզվական միատարրություն Մասնակցության մոտիվացիայի բարձր աստիճան Թասիբ Ինքնաբուխ համակարգ Առկա են գործիքներ առկա տեղեկատվական բացը լրացնելու համար Սոցիալական համակարգերը փոխաջակից ու փոխծվերահսկող բնույթ ունեն Ֆոկուսային ոլորտների հիերարխիա /ԵԱ ցածր աստիճանի կարևորության է/ Կատարելության ձգտում Միգրացիոն միտումներ ԵԱ ստատուսի անկախություն /չկուսակցականացվածություն/ Սփյուռք Հասարակական կարծիքի/ճանաչման կարևոր դեր Մշակութային կարծրատիպեր Երկու տարբեր աշխարհաքաղաքական համակարգերի սերունդների գոյություն	Չգործող կառույցներ Միջմշակութային, միջկրոնական համագործակցության պակաս Գլոբալ իրավիճակների թյուր և թույլ իմացություն Կախվածության և աջակցության խախտված բալանս Սփյուռքի հետ աշխատանք Վստահության պակաս Երիտասարդների իներտություն, սպառողական մոտեցումներ Հանրային իրազեկման գործիքների բացակայություն Դրված խնդիրների և սպասվելիք արդյունքների անհամապատասխանություն Աղքատություն Օպտիմիզմի պակաս Վերաբերմունք երիտասարդական դաշտին պետական և այլ կառույցների կողմից Երիտ դաշտի ունակությունների ցածր աստիճան Մայրաքաղաքում և մարզում հավասար մասնակցային հնարավորություններ Մարզ և կենտրոն մասնագետների ունակությունների տարբեր մակարդակ Քաղաքականացվածություն Մենեջմենտի բացակայություն Մարդիկ չունեն երազանքներ ԵԱ մասին թյուր կարծիքներ Վախի և անարխիզմի բալանս Կոնֆրոնտացիա թե երկխոսություն բևեռում Սերունդների երկխոսություն և վստահություն Արդյունքների չափելիություն Մոնիտորինգի և գնահատման մեխանիզմների բացակայություն ԵԱ զուգահեռ իրականություններ նույն երկրում

	Բազմակարծության բացակայություն
Հնարավորություններ	
Համակառավարման հարթակների առկայություն Արտաքին քաղաքականությսան ուղղվածություն Մշակութային ժառանգություն Համագործակցության խթանում սոցիալական գործընկերության ոգով Լուսավոր ապագան ցույց տալու առաքելության գիտակցում Դեպի կրթություն հակվածություն Երևանի և մարզերի ԵԱ մասնագետբերի ունակությունների սինխրոնիզացիա ՀՀ-ում գործող հաջողված օրինակների հավաքագրում ու հանրայնացում Աշխատանք բանակի երիտասարդների հետ Աշխատանք երիտասարդ տղաների հետ Միջսեկտորային ինտեգրացիա Տարբեր նախաձեռնոց խմբերի համակարգում Դասեր դրսի փորձից Ոլորտում առկա բարձ որակավորմամբ մասնագետներ Մեծ ռեսուրսների առկայություն /ՀԵՀ, միջազգային տրանշներ, Սփյուռք/ Erasmus + օգտագործոմը՝ որպես ԵԱ մասնագետների պատրաստման հարթակ Շահագրգիռ հկ դաշտի առկայություն	

ՀՀ-ում ԵԱ ոլորտի ուսումնասիրության ցանկալի շեշտադրումներ
ՀՀ-ում իրականացվող ԵԱ այսօր /ինչպես է իրականացվում, ում հետ, որտեղ, ով է իրականացնում, ինչպես, ինչ ձևեր և տեսակներ կանն/
ԵԱ նպատակները, ակնկալվող արդյունքները
ԵԱ մասին ընկալումները հանրության մեջ, երիտասարդական ոլորտից դուրս, երիտասարդների կողմից
ԵԱ ոլորտից դուրս այլ գերատեսչությունների շրջանակներում գործող հնարավորություններ ու համակարգերը երիտասարդների հետ աշխատանք տանելու համար
Ոլորտի համակարգման կարիքի հիմնավորումը, դրա ուժեղ և թույլ կողմերը

Երիտասարդական աշխատանքի հիմնարար սկզբունքները
Ներառական/հասանելի/բաց/մատչելի բոլոր երիտասարդների համար
Ունենա ռեգուլյար-շարունակական բնույթ
Համայնքակենտրոն
Ապաքաղաքական
Հետաքրքիր/զվարճալի
Հայրենասիրական դաստիարակություն խթանող
Հանդուրժողականությունը խթանող

Մասնակցային
Ազատ մտածողություն ձևավորող
Համագործակցային
Նախաձեռնողականություն խթանող
Քրիստոնեական արժեհամակարգ տարածող
Հասանելիություն, մատչելիություն
Մասնակցային որոշումների ընդունում
Հստակ չափանիշների մեխանիզմներ
Երիտասարդների սոցիալական եւ անձնական զարգացման գերակայություն
Համաղեկավարում
Արժեքային համակարգի վրա հիմնված
Անձնային ինքնազարգացում
Անկախություն
Երիտասարդների և աշխատողների անվտանգություն
Վճարվող և վճարովի
սոցիալական արդարություն
հավասարություն, հացասար ստարտային վիճակի բերող համակարգ

Երիտասարդական աշխատանքի զարգացման գործընթացի բաղադրիչները

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ : Մտքի քարտեզ
Երիտասարդական աշխատանքի զարգացումը
Որակի չափանիշների մշակում
ԵԱ վայր
ԵԱ իրականող մասնագետներ
ԵԱ իրականացնող կառույցներ
ԵԱ ստացված արդյունքներ
Նորարրություն, կարիքակենտրոն փոփոխություններ
Հասանելիության ապահովման մեխանիզմներ
Մշտադիտում, արդյունքների չափում
ով
ինչ
ինչպես
ինչի և ում համար
Երիտասարդական աշխատող
ունակությունների փաթեթ /մասնագիտական, անձնային/
մասնագետների պատրաստման համակարգ
պատրաստող կառույցներ
մասնագետներ

կրթական ծրագրեր
ֆորմալ
ոչ ֆորմալ
պատրաստում, վերապատրաստում, մուլտիպլիկացիա
իրավական ստատուս
էթիկական նորմեր, կոդեքսներ
որակ, լիցենզավորում
դերը
գործառույթները
հիերարխիա /մենեջեր, դաշտային աշխատող, այլ/
Իրավական, իրավակազմակերպական ֆորմատ և հիմք
Ոլորտի զարգացման սցենարներ
ռեգիոնալ
սոցիալ-փիլիսոփայական մեթոդաբանությքն
կենտրոնացված- դեցենտրալիզացված
Իրականացման վայրեր
ՀԿ
դպրոց/ԲՈՒՀ
եկեղեցի
բանակ
սոցիալական ծառայություններ
ակումբներ, երիտասարդական կենտրոններ
սկանդինավյան վիրտուալ
բաց երիտասարդական աշխատանք
փողոցում իրականացվող
Ֆինանսավորում
ԵԱ դերն ու դիրքը հանրային կայնքում
Արժեքային բազա, հիմնարար սկզբունքներ
Համագործակցություն այլ գերատեսչությունների հետ՝ բանաձևեր, շփման մեխանիզմներ
միջսեկտորային
ոստիկանություն
սոցիալակ ծառայություններ
ֆորմալ համակարգ
եկեղեցի
կրթություն
բիզնես
դատական համակարգ
ներսեկտորային

Տեսանելիություն, ճանաչելիություն, իրազեկման բարձրացում, հանրայնացում
գործիքներ
կառույցներ
ձևեր
Նպատակ, արդյունք, <<արտադրանք>>
արդյունքի չափում
անձնային, համայնքային, պետական մակարդակ
Թիրախներ
տարիք
հատուկ կարիք
մեյնսթրիմ
ենթամշակույթ
գյուղական համայնք
աղքատության մեջ ապրող
<<պրոգրեսիվ, էլիտար>>
միջին մասնագիտական կրթության համակարգի երիտասարդներ
outsiders
ԵԱ տարբեր մակարդակներում
տեղական
ազգային
միջազգային

Երիտասարդական աշխատանքի հաջողված փորձ ունեցող երկրները
Լեհաստան, Գերմանիա, Ֆինլանդիա, Էստոնիա, Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Լիտվա , Նորվեգիա, Դանիա, Լյուքսեմբուրգ, Եգիպտոս, Կանադա

ՀԱՎԵԼՎԱԾ

Հանդիպման օրակարգ

Օր I
Բացման խոսք, հանդիպման նպատակի ու խնդիրների ներկայացում

Ծրագրի ներկայացում, երիտասարդական աշխատանքի կայացման գործում միջազգային հետազոտության իրականացման դերի , ակնկալիքների, գործընթացի

Հայաստանում երիտասարդական աշխատանքի զարգացման համատեքստի ներկայացում

Մասնակիցների ներկայացում,
- ակնկալիքների ներկայացում
- մասնակից փորձագետների փորձագիտական ոլորտների ներկայացում
- փորձագետների կարծիքով, ԵԱ օրինակելի և մեզ համար օգտագործելի համակարգեր ունեցող երկրերը

Հանդիպում ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության պետ Թամար Թորոսյանի հետ

ԵԱ մեր տեսլականը
- ինչ բաղկացուցիչներ պետք է ունենա ԵԱ զարգացման գործընթացը
- ինչ արդյունքների պետք է այն բերի
- ԵԱ սկզբունքները, որոնց վրա պետք է հիմնված լինի համակարգը

Օր II
ԵԱ Հայաստանում
- առանձնահատկություններ
- մարտահրավերներ
- հնարավորություններ

Միջազգային փորձի վերաբերյալ գիտելիքների ներկայացում
Միջզագային փորձի ուսումնասիրության բաղադրիչների սահմանում

Օր III
Հանդիպում Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի հետ

Երիտասարդական աշխատողի ունակությունների սահմանման մեխանիզմներ
Հետագա քայլերի մշակում և պլանավորում, դերերի բաշխում

ՀԱՎԵԼՎԱԾ : <u>Միջազգային հետազոտության խնդիրների սահմանում</u>
Երիտ. աշխատանքի հասանելիության մեխանիզմներ
Ո՞վ դեպի ո՞ւմ է գնում
Երիտասարդ $\rightleftarrows$ երիտասարդական աշխատող
Ինչպե՞ս ապահովել երիտասարդական աշխատողների հասանելիությունը երիտասարդներին:
Ինչպիսի՞ մեխանիզմների օգնությամբ են երիտ. աշխատողները հասնում դժվար հասանելի երիտասարդներին:

Նոր կարիքներով պայմանավորված նորարարության խթանում
Ինչպիսի՞ մեխանիզմներ գոյություն ունեն:
Ո՞վ է զբաղվում դրանով (երիտ. աշխատող, մենեջեր գիտահետազոտական ինստիտուտներ և այլն):

Միջոլորտային, ներոլորտային փոխհարաբերություններ
Որո՞նք են համարվում երիտասարդական աշխատանքի ոլորտին առնչվող կառույցները
Միջ/ներոլորտային փոխհարաբերությունների կարգավորումը ինչպե՞ս է տեղի ունենում:
Կառույցներից ո՞րն է կրում տեսանելիության ապահովման պարտավորությունը:

Դերերի բաշխվածությունը
Ո՞վ է երիտասարդական աշխատողը, ո՞վ է մենեջերը:
Արդյո՞ք սոց. աշխատողի գործունեությունը մտնում է երիտ. աշխատանքի ոլորտի մեջ:
Ինչպե՞ս է համակարգվում մենեջերի և երիտ. աշխատողի փոխհարաբերությունները:

Մոնիտորինգի մեխանիզմներ և արդյունքների չափելիություն
Ո՞վ է իրականացնում մոնիտորինգ և արդյունքների չափում:
Ինչպիսի՞ գործիքներ գոյություն ունեն:
Ի՞նչ հաճախականությամբ է իրականացվում:
Ո՞վ է օգտագործում այդ արդյունքները:
Գնահատման գործընթացին մասնակցում են միայն ուղղակի շահառուները, անուղղակի շահառուները, թե երկուսն էլ միասին:

1	Երիտասարդական աշխատանքի ոլորտի զարգացման 2-3 հիմնական տիպային սցենարներ
Պատմական ընթացք Անհատակենտրոն, ընտանիքակենտրոն, աշխատաշուկայի վրա կենտրոնացված երիտասարդական աշխատանքի մոդելներ (Արման) Ռեգիոնալ ընտրույթ (Կովկաս, Բալթիկ երկրներ, Լատին. Ամերիկա, Ասիա եւ այլն) Կենտրոնացված եւ դեցենտրալիզացված համակարգեր Ռեսուրսների տրամադրման եւ բաշխման քանակներ եւ ձեւեր	
1’	Երիտասարդականա աշխատանքի նպատակներ, արդյունքներ, “արտադրանք”
Նպատակներ, դրանց սահմանման մեխանիզմներ, սահմանողներ… Հետազոտությունների կիրառում, փաստարկվածության աստիճանը Արդյունքների չափելություն եւ չափելության մեխանիզմներ	

Էստոնիա	
2	Երիտասարդական աշխատանքի մասնգետների պատրաստման մեթոդաբանություն, գործիքներ եւ մեխանիզմներ
Կառույցներ Պետական քաղաքականություն եւ մեխանիզմներ Ոչ պետական մեխանիզմներ Չհաջողված եւ հաջողված փորձեր	
3	Երիտասարդական աշխատանքի տեսակներ եւ մոդելներ
Եկեղեցական երիտասարդական աշխատանք Սկանդինավյան վիտուալ երիտասարդական աշխատանք Open youth work Ինովացիոն նոր տեսակներ	
3’	Թիրախներ
Արդյոք թիրախը միայն երիտասարդներն են Հնարավոր այլ թիրախներ՝ երեխաներ, կառույցներ եւ այլն	
4	Երիտասարդական աշխատանքի ճանաչելության մեխանիզմներ
Գործիքներ տեղեկացման համար Կառույցներ որոնք դա անում են եւ/կամ պատասխանատու են դրա համար Հանրային իրազեկման ձեւեր	
5	Որակի վերահսկման ապահովման մեխանիզմներ
Լիզենզավորում Թեստավորում Վերապատրաստում, պատրաստում Շարունակականություն UK, Belgium	
6	Համագործակցության տարբեր սխեմաներ
Միջսեկտորալ Պետական-տեղական Բիզնես-կրթություն-պետություն Ֆինանսավարման չափաբաժիններ	
7	Արժեքներ եւ սկզբունքներ, որոնք դրված են երիտասարդական շախատանքի տակ
Հիմնական եւ ճկուն արժեքներ Տեսականում դավանվող արժեքներ եւ դրանք ինչքանով են կիրառվում պրակտիկայում	
8	Երիտասարդական աշխատանքը տարբեր մակարդակներում
Միջազգային Ազգային	

Մարզային Համայնքային

Երկրորդ կլոր սեղանի հաշվետվություն

21-23 նոյեմբերի
Աղվերան Փարք Ռեզորթ

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի անկախացումից հետո հասարակական երիտասարդական մի շարք կազմակերպություններ սկսել են իրականացնել երիտասարդական աշխատանք: Սակայն երկրում երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ կայացմանը խոչընդոտում են երիտասարդական աշխատանքի վերաբերյալ իրազեկության պակասը, երիտասարդական աշխատանքի վերաբերյալ մեթոդաբանական և կրթական նյութերի ու ծրագրերի, ինչպես նաև պետական հայեցակարգի կամ ոլորտի ուղորդված զարգացման որևէ ծրագրի բացակայությունը:

Այդ նպատակով Թրեյներների ազգային թիմ ՀԿ-ը (ԹԱԹ) ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ և ԿԱԶԱ Շվեյցարական մարդասիրական հիմնադրամի, Միջմշակութային ուսումնասիրությունների, ուսուցման և երկխոսության միջազգային կենտրոնի, Գյումրու Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնի հետ գործընկերությամբ նախաձեռնել է ***<<Երիտասարդական աշխատանքը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ>>*** ծրագիրը:

Ծրագրի հիմնական նպատակն է խթանել Հայաստանում երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ զարգացումը, այս ոլորտում առկա գիտելիքների և կուտակված հմտությունների հիման վրա, հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը:
Ծրագրի շրջանակներում նախատեսվում են հետևյալ գործողությունները.
Մեթոդական կլոր սեղան, որի ընթացքում կներկայացվեն ոլորտի ձեռքբերումները, խոչընդոտները ու մարտահրավերները, ինչպես նաև կմշակվի միջազգային փորձի ուսումնասիրության օրակարգը և ծրագիրը:

Միջազգային փորձի ուսումնասիրություն (Desk Research). Այս փուլում տեղի փորձագետները կուսումնասիրեն երիտասարդական աշխատանքի ավանդույթները և

զարգացման ծրագրերը տարբեր երկրներում: Ուսումնասիրություններին կմասնակցեն միջազգային փորձագետներ 3 երկրներից:

Զեկույցի պատրաստում. Ուսումնասիրությունների արդյունքների ամփոփման հիման վրա կստեղծի զեկույց, որում ներկայացված կլինեն Հայաստանում երիտասարդական աշխատանքի մարտահրավերները և ինստիտուցիոնալ զրագացման հեռանկարները:

Ամփոփիչ մեթոդական կլոր սեղանի ընթացքում ծրագրում ներգրավված մասնակիցներին կներկայացվեն իրականացված ուսումնասիրությունների արդյունքները զեկույցի տեսքով և երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ զարգացման հնարավոր հեռանկարները:

ԵՐԿՐՈՐԴ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի նոյեմբերի 21-23, Աղվերանում կայացավ <<Երիտասարդական աշխատանքը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ>> ծրագրի շրջանակներում կազմակերպվող փորձագիտական երկրորդ կլոր սեղանը:

Երկրորդ կլոր սեղանի հիմնական նպատակն էր համատեղ ուժերով քննարկել և մշակել երիտասարդական աշխատանքի զարգացմանն ուղղված առաջարկներ, զարգացման հնարավոր սցենարներ:

Մասնավորապես, հանդիպումը խնդիր ուներ՝

- ներկայացնել ծրագրի շրջանակներում իրականացված միջազգային փորձի ուսումնասիրության նախնական արդյունքները
- քննարկել Հայասատանում երիտասարդական աշխատանքի կայացման համար համապատասխա և պատշաճ ռազմավարական մոտեցումները, գործողությունները, կարիքները
- մշակել ՀՀ-ում երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալիզացիայի հնարավոր սխեմաներ

ՕՐԱԿԱՐԳ

21 նոյեմբերի, շաբաթ

11:00 Մեկնում Աղվերան

13:30 Ճաշ

14:30 Հանդիպման բացում, ներածություն, մասնակիցների ներկայացում
15:00 Առաջին կլոր սեղանի արդյունքների ներկայացում, քննարկում
16:00 Ընդմիջում
16:30 Զեկույցի նախնական տարբերակի ներկայացում, հարց ու պատասխան
17:30 Զեկույցի մեջ արտացոլված թեմատիկ ոլորտների քննարկում
19:00 Ընթրիք

22 նոյեմբերի, կիրակի
10:00 Երիտասարդկաան աշխատանքի զարգացման առաջարկների մշակում
11:00 Ընդմիջում
11:30 Երիտասարդկաան աշխատանքի զարգացման առաջարկների մշակում (թեմա է 1, 2, 3)
13:00 Ներկայացում
13:30 Ճաշ
14:30 Երիտասարդկաան աշխատանքի զարգացման առաջարկների մշակում (թեմա 4, 5, 6)
16:00 Ընդմիջում
16:30 Մշակված առաջարկությունների ներկայացում, քննարկում, առաջարկների ամփոփում (թեմա 7)
19:00 Ընթրիք

23 նոյեմբերի, երկուշաբթի
10:00 Երիտասարդական աշխատանքի զարգացման հնարավոր սցենարներ
11:20 Ընդմիջում
11:45 ՀՀ սպորտի և երիտասարդության հարցրեի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության կողմից մշակված երիտասարդական աշխատողի ինստիտուտի կանոնակարգի և ուսուցման ծրագրի նախագծերի քննարկում
12:45 Ծրագրի գնահատում, փակում
13:00 Մեկնում

Երիտասարդական աշխատանքի սահմանումն ըստ կլոր սեղանի մասնակիցների

Երիտասարդների կարիքների վրա հիմնված, երիտասարդների հետ միասին և/կամ երիտասարդների համար ֆորմալ կրթության սահմաններից դուրս իրականացվող համակարգված գործընթաց, որն ուղղված է հասարակության մեջ անհատի սոցիալական ինտեգրմանը և նրա՝ որպես գիտակից ու ակտիվ քաղաքացի կայացմանը:

Երիտասարդական աշխատանքը տարբեր մակարդակներում երիտասարդների հետ աշխատելու միջոց է:
Երիտասարդների համար եւ նրանց հետ իրականացվող հասարակական աշխատանքներն են, որոնք օգնում են նրանց ավելի լավ հասկանալու իրենց եւ իրենց շրջապատող աշխարհը, գտնելու իրենց իրական նապատակներն ու հասնելու դրանց իրագործմանը, ներդաշնակ կերոպով զարգացնելու իրենց ֆիզիկական, մտավոր, զգայական եւ հեգեւոր ներուժը եւ գտնելու դեպի ներդաշնակությունն ու երջանկությունը տանող իրենց ուղին:
Երիտասարդական աշխատանքը դա երիտասարդների սոցիալիզացմանը և ինքնության ձևավորմանն ուղղված աշխատանքների ամբողջությունն է՝ ի թիվս այլոց ներառելով ժամանցի կազմակերպումը, ուղղորդումը, խորհրդատվությունը, աջակցությունը հոբիների և նախասիրությունների հարցում և ոչ-ֆորմալ ուսուցման միջոցով՝ ֆորմալ կրթության և հանրային այլ ինստիտուտների բացերի ծածկումը, որն անհրաժեշտ է վերը նշված խնդիրներին հասնելու համար:
Երիտասարդների, երիտասարդական խմբերի հետ տարվող աշխատանք կամ աշխատանք, որն ուղղված է երիտասարդության հիմնախնդիրների լուծմանը
Երիտասարդական աշխատանքը երիտասարդների անձնային զարգացման, սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացիության ձևավորման գործիք է: Սա իր մեջ ներառում է երիտասարդների հետ, երիտասարդների համար և երիտասարդների կողմից իրականացվող սոցիալական, մշակութային, կրթական, քաղաքացիական, և քաղաքական տիպի միջոցառումներ: Սրանք հիմնականում դպրոցից դուրս իրականացվող միջոցառումներ են, որոնք կրում են հաճախ (բայց ոչ միշտ) ոչ-ֆորմալ բնույթ: Երիտասարդական աշխատանքի հիմնական խնդիրն է երիտասարդների համար իրենց ապագան կերտելու հնարավորությունների ստեղծումը:
Կազմակերպված և համակարգված աշխատանք, ինչը (հավասար և հասանելի) պայմաններ և հնարավորություններ է ստեղծում երիտասարդների համար՝ իրենց ազատ ցանկությամբ, զբաղվել զարգացնող գործունեությամբ՝ ընտանիքից, աստիճանական կրթական համակարգից և աշխատանքից դուրս կամ դրանց զուգահեռ:
Երիտասարդական աշխատանքը կազմակերպված և պարբերականորեն իրականացվող երիտասարդներին ուղղված և/կամ երիտասարդների մասնակցությամբ գործողությունների և միջոցառումների համադրություն է, որն առաջնային կամ միջնորդավորված նպատակը երիտասարդների տարբեր մակարդակներում աճի և զարգացման համար համապատասխան միջավայրի ստեղծումն է, նրանց զարգացման տարբեր փուլերում խթանումն ու առկա արդյունքների ամրապնդումն է:
Երիտասարդական աշխատանքը դա բազմակողմանի, արդյունավետ աշխատանքն է առանձին երիտասարդների և երիտասարդական խմբերի հետ, երբ պրակտիկ

աշխատանքնում մասնագետը կարողանում է միավորել իր գիտելիքներն ու հմտությունները և ստեղծում է անձի զարգացումը խթանող հետաքրիր միջավայր:
Երիտասարդական աշխատանքը երիտասարդների կյանքի որակի, նրանց ֆորմալ և ոչ-ֆորմալ կրթությանը նպաստող գործունեություն է, որը նպատակ ունի նպաստել երիտասրդների բարեկեցիկ կյանքին, ինքնահաստատմանը և ինքնուսուցմանը:

Հայաստանում երիտասարադական աշխատանքի կայացման և զարգացման հիմնական խնդիրները ըստ կլոր սեղանի մասնակիցների

- «Երիտասարդական աշխատանք» հասկացության և ինստիտուտի ճանաչում և ընկալում բոլոր դերակատարների և հանրության կողմից;
- Երիտասարդական աշխատանքի հիմնական թիրախների, տեսակների և չափորոշիչների սահմանում, և որակի ապահովմանը միտված համակարգային մոտեցում («որակ» սահմանումից մինչև վերահսկում);
- Երիտասարդական աշխատողի կոմպետենցիաների (կարողունակությունների) սահմանում և դրանց ստացման հնարավորությունների ստեղծում;
- Պետական և ոչ-պետական կառույցների կողմից իրականացվող երիտասարդական աշխատանքի տարբեր տեսակների զարգացում՝ հիմնվելով հայաստանցի երիտասարդների կարիքների և նախասիրությունների վերաբերյալ փաստարկների վրա:
- Երիտասարդական աշխատանքի վերաբերյալ պետական հայեցակարգի բացակայությունը
- Երիտասարդական աշխատանքի ինստիտուտի բացակայությունը
- Համապատասխան ուսուցողական նյութերի բացակայությունը
- Ուլորտում այլ երկրների լավագույն փորձերին պարբերաբար ծանոթանալու անհրաժեշտությունը
- Երիտասարդակնա աշխատանքի դաշտի չհամակարգված վիճակը
- Երիտասարդական աշխատանքի դաշտի հիմնական ռազամավարական նպատակների անորոշությունը
- Երիտասարդական աշխատանքի ճանաչման ցածր աստիճանը
- Երիտասարդական աշխատանքի արդի ցածր որակը եւ դրա ապահովման մեխանիզմների բացակայությունը
- ԵԱ սահմանման (conceptual framework) և հարակից մասնագիտություններից տարաջատելու (ինչպես օրինակ սոցիալական աշխատանքից) և հստակ կարգավիճակ տալու խնդիր
- Համապատասխան օրենսդրական դաշտի բացակայություն/անկատարություն
- ԵԱ ենթակառուցվածքի/հարմարությունների բացակայություն/խիստ անբավարարվածություն (երիտասարդական կենտրոններ/ակումբներ և այլն)

- Դոնորների համակարգման և շահակիցների միջև արդյունավետ համագործակցության պակաս
- Երիտասարդական աշխատանքի սահմանումը և սահմանների ճշգրտումը
- Երիտասարդական աշխատանքի մասին տեղեկացվածության բարձրացումը
- Պետական մարմինների կողմից ճանաչումը, ոլորտի մասին թույլ և թյուր պատկերացում
- Սահմանափակ թիրախների հետ աշխատանք
- Սահմանված ու կանոնակարգված չէ (անգամ միասնական պատկերացում ձևակերպված չէ փորձագիտական շրջանակներում),ինչը ոլորտում հաճախ ոչ ցանկալի և քաոտիկ ինքնագործունեության տեղիք է տալիս, և/կամ ավելորդ ջանքերի ու ռեսուրսների անարդյունավետ ծախսման պատճառ դառնում:
- Թերագնահատված է ՏԻՄ-երի կողմից, ինչը հանգեցնում է իր ուժերի նկատմամբ ոչ վստահ ու համայնքի կյանքին անտարբեր կամ թույլ մասնակցայնություն հանդես բերող երիտասարդության առաջացման:
- Կարիք ունի որոշակի թվով կոմպետենտ, որակյալերիտ. աշխատողների, ովքեր թե բացակայում են ՏԻՄ-երի աշխատակազմերում, թե բավարար չեն հասարակական սեկտորում:
- առկա ֆինանսական և մարդկային ռեսուրսների հավաքագրում և արդյունավետ կիրառում,
- երիտասարդական աշխատանքի ոլորտում ներգարավածների համար մասնագիտական ընդհանուր տեղեկատվական դաշտի և տերմինաբանության մշակում,
- ՀԿ սեկտորի ոչ բավարար գիտելիքներ ու կարողություններ
- Մարզային փոքր համայնքներում “ենթակառուցվածքների” (երիտասարդական ակումբների,…) բացակայություն
- Կա Երիտասարդական պետական քաղաքականության կայացման և ամրապնդման կարիք

Կլոր սեղանի արդյունքները

Կլոր սեղանի ընթացքում ներկայացվեցին նախորդող փուլերի արդյունքները, որոնց մեջ էին՝
առաջին կլոր սեղանի հաշվետվությունը
միջազգային փորձագետների հետ հանդիպումների ներկայացումը
արված միջազգային հետազոտության երկրների ներկայացումը

Կլոր սեղանի ընթացքում մշակվեցին նաև ԵԱ զարգացման առաջարկություններ, որոնք զետեղված են հաշվետվությանը կից զեկույցի մեջ: Կցված են նաև վերոհիշյալ բոլոր փուլերի հաշվետվությունները:

Կլոր սեղանը հնարավորություն տվեց նաև ուսումնասիրել կառավարությանը առաջարկված կանոնակարգի և ուսուցման ծրագրի նախագշերը, երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կատարած հետազոտության նախնական տարբերակը և դրանց վերաբերյալ տրվեց առաջարկություն և նկատառումներ:

Միջազգային փորձագետների այցելություններ

Փորձագիտական հանդիպում Աննա Ֆելդմանը Ռուսաստանի Դաշնություն

Օրակարգ

29 հոկտեմբերի, հինգշաբթի

11:00 Հանդիպում Սպորտի և երիտասարդության նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության պետ Թամարա Թորոսյանի հետ

12:30 Ճաշ

15:00 Հանդիպում Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի հետ: Հասցեն՝ Ծարավ Աղբյուրի փ. . 55/5)

16:30 *Հանդիպման անցկացման վայրը ԿԱԶԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամի <<Էսպաս>> կենտրոնում: Հասցեն Նալբանդյան փ. 29*

Ծրագրի նպատակների և բաղադրիչների ներկայացում առաջին արդյունքների ներկայացում և քննարկում

Հանդիպումը կայանում է Միջմշակութային ուսումնասիրությունների, ուսուցման և երկխոսության միջազգային կենտրոնի գրասենյակում: Հասցեն՝ Հ. Քոչարի փ. 6/58:

17:30 Ռուսաստանի Դաշնությունում առկա իրավիճակը և հնարավորությունները

18:15 ԵԱ հնարավոր զարգացման սցենարների քննարկում

Ընթրիք

31 հոկտեմբերի, ուրբաթ

Հանդիպումը կայանում է Միջմշակութային ուսումնասիրությունների, ուսուցման և երկխոսության միջազգային կենտրոնի գրասենյակում: Հասցեն՝ Հ. Քոչարի փ. 6/58:

10:00 Քննարկում ԵԱ նպատակների, թիրախների, արդյունքների, ձևաչափերի մասին

10:30 ԵԱ կրթության սցենարներ, գործիքարան, համակարգեր

11:30 ՌԴ ԵԱ գործող կրթական համակարգեր

12:15 Ընդմիջում

12:30 ԵԱ ունակությունների փաթեթ

13:30 Ճաշ

15:00 ԵԱ զարգացման առաջարկների քննարկում

17:00 Հանդիպման ամփոփում

Հանդիպման հաշվետվություն

Երիտասարդական աշխատանքի համակարգը ՌԴ-ում

Ռուսաստանում չկա երիտասարդական աշատանքի որոված եւ հաստատված սխեմա:Երիտասարդական աշխատողների պատրաստման պետական համակարգերը նույնպես բացակայում են, չնայած դրանց կարիքը զգացվում է: Երիտասարդական աշխատանքի մասնագետների պատրասաման համար մի քանի բուհեր ունեն կրթական ծրագրեր, որոնք սակայն չունեն լայն ճանաչում:

Երիտասարդական աշխատանքը եւ պետական 2030 ռազմավարությունը

Կազմակերպությունները, որոնք զբաղվում են երիտասարդական աշխատանքով իրենց ռազմավարական պլանները մշակելու ժամանակ դրանք համադրում են պետեության 2030 Ռազմավարության նպատակների հետ եւ համաձայնեցնում են դրնաց հետ: Իրենց իրականացրած ծրագրերը պետք է իրենց նեդրումն ունենան պետական քաղաքականության իրականացման ռազմավարական առաջնայնությունների հետ: Այսպիսով երիտասարդական աշխատանքը դիտարկվում է պետական ընդհանուր քաղաքականության եւ ռազմավարությունների իրականացման միջոցներից մեկը:

Ինդիվիդուալ եւ ոչ-ֆորմալ խմբերի ծրագրեր եւ լայնամասշտաբ ֆորումներ

Պետությունը խթանում է անհատական երիտասարդական աշխատանքը եւ ոչ-ֆորմալ խմբերի կեղմից իրականացված աշխատանքները: Բազմաթիվ համառուսաստանյան ֆորումներ են կազմակերպվում, որտեղ երիտասարդներին տեղեկացնում են պետական ծրագրերի մասին, տարամադրում են առաջնակարգ փորձագիտական աջակցություն եւ օգնումեն մշակել ծրագրային գաղափարներ: ֆորումները նաեւ այն հաչթակներն են, որտեղ երտասարդությունը ուղղակի կապի հնարավորություն է ստանում Կառավարության եւ պետության բարձրաստիճան ղեկավարների հետ (այսպես Թաթարստանում կազմակերպվող ֆումում ուղղակիորեն մասնակցում են երկրի վարչապետը, նախագահը եւ երկրի ոլորտային նախարարները): Տվյալ տիպի ինդիվիդուալ ծրագրերի ֆինանսավորման համար պետությունը հատկացնում է տարեկան 1.5 մլրդ ռուբլի:

ՀԿ սեկտորի հետ համագործակցության սխեմաներ

Թաթարստանի հանրապետության կառավարությոնը իրաշխատանքը երիտասադության հետ իրականացնում է թեմատիկ ցանացային եւ հովանոց կազմակերպությունների միջոցով: Այսպես՝ կա Գյուղական երիտասարդության հետ աշխատանքի լիգա, Տաղանդավոր երիտասարդության հետ աշխատանքի լիգա,

Ուսանողության լիգեեւ յալն: Այս կազմակերպությունների հետ կառավարությունը աշատում է համագործակցության համաձայնագրերի հիման վրա:

Ռեկոմենդացիաներ

Երիտասարդական Աշխատանքի մասնագետները չպետք է պատաստվեն առանց հստակ պատվերի այս կամ այն սեկտորի կողմից: Պետք է նախապես իդենտիֆիկացնել երիտասարդական աշախատքնաի մասնագետների պատրաստման արդյունքում որոկավորված մարդկանց աշխատանքի դաշտերը:

Փորձագիտական այցելություն
Գիորգի Կակուլիա
Վրաստան

Քննարկված հիմնական հարցերը

- Վրաստանում ԵԱ զարգացման միտված գործողությունների նկարագրություն
- Վրաստանում Երիտասարդական քաղաքականության նկարագրություն
- ԵԱ զարգացման պետական մոտեցումեր և գործընթացներ
- ԵԱ զարգացման աշխատանքային խմբի աշխատքնի ու քայլերի նկարագրություն
- ԵԱ թիրախների ընտրության ու ձևակերպան գործընթաց
- ԵԱ ձևաչափերի նկարագրություն
- եա գործառույթներն ու դերերը
- եա կրթական մոտեցումներ ու ծրագրեր՝ Վրաստանի փորձառություն
- ԵԱ ոլորտի զարգացման մեջ տարածաշրջանային համագործակցություն
- ԵԱ վերաբերյալ տարածաշրջանային դոնորական համայնքի համակարգում

Փորձագիտական այցելություն
Սաբինե Կլոքեր
Ավստրիա

Հանդիպման հաշվետվություն

Երիատասարդական աշխատանքի կազմակերպումը եւ ֆինանսավորումը Ավստրիայում

Ավստրիան չունի երիտասարդական աշատանքի որոված եւ հաստատված սխեմա:Երիտասարդական աշխատողների պատրաստման պետական

համակարգերը նույնպես բացակայում են, չնայած դրանց կարիքը զգացվում է: Երիտասարդական աշխատանքով հիմնակնում զբաղվում են սոցիալական աշխատանքի կամ մանկավարժական կրթություն ունեցաղ անձիք:
Նախարարությունը,որը զբաղվում է երիտասարդական դաշտով, Ընտանիքի եւ երիտասարդության հացերով նախարարությունն է: Այն ֆինանսավորում է երիտասարդական դաշտը հետեւյալ հիմնական սխեմաներով.

Ա. Երիտասարդական տեղեկատվության եւ խորհրդատվության կենտորններ հիմնական մեծ քաղաքներում:

Բ. Ֆինանսավորում երիտասարդական կազմակերպություններին եւ Երիտասարդության Ազգային Խորհրդին, որը նախարարության հիմնական Հկ գործընկերն է (53 երիտասարդական կառույց , որոնցից 37-ը դասական երիտասարդական ակզմկերպություններն են, իսկ մնացածը ազգային փոքրամասնությունների համայնքային կազմակերպություններ եւ ուսանողական կառույցներ): Այս տողով ֆինանսավորվում ենրիետասարդական կազմակերպությունների որոշ ադմինիստրատիվ ծախսեր, որոնք հնարավորություն են տալիս գոնե մեկ կամ երկու աշխատակից պահել:

Գ.Ֆինանսավորում երիտասրդական ծրագրերի համար ըստ հաստատված առաջնայնությունների: ծրագրերի ընդունեւմ կոնկեւրսային հիմունքներով:

Դ. Բաց երիտասարդական աշխատանքի կենտրոնների ֆինանսավորում: Այս կենտրոնները աշխատում են անհատ երիտասարդների հետ, որոնք նեգրավված չեն կառույցներում:
Բացի պրոֆիլային նախարարությունից երիտասարդական կազմակերպություններ եւ նրանց ծրագրերը ֆինանսավորում են նաեւ տեղական ինքնակառավարման մարմինները: Համապատասխան ուղղվածության երիտասարդական ակզմակերպություններ եւ ծրագերր կարող են ֆինանսավորվել նաեւ այլ պետական կառույցների կողմից, օրինակ Գյուղատնտեսության նախարարության, Առողջապահության եւ այլն

Տեղական երիատասրդական աշխատանքը Ավստրիայում
Ավստրիայում շատ զարգացած է տեղական երիտասարդական աշխատանքը: Տեղական մակարդակով երիտասարդական աշխատանքը հիմնականում ֆինանսավորվում է տեղական ֆոնդահայթայթման ծրագրերի միջոցով: Տեղական խմբերը, ակումբերը կմ խմբերը կազմակերպում են տեղակն պարահանդեսներ, սեփական արտադրության ապրանքների տոնավաճառներ, տարբեր տոնախմբություններ, որոնց հասույթը գնաում է երիտասրդական ծրագրերի

կազմակերպմանը: տեղական բիզնեսները եւ անհատները կառող են նեյնպես փոքր նվիրատվություններ անել, կամ ֆինանսների կամ իրենց իսկ արտադրության ապրանքների տեսքով: Շատ լավ աշխատում են հատկապես տեղական տոնախմբությունները, որտեղավելի էժան գներով սուպերմարկետներից գնված սննդամթերքը սպասարկվում է տոնախմբության ժամանակ: Որոշ մաս են կազմում նաեւ կազմակրպությունների անդամների տված անդամավճարները: Միայն երբ միջոցառումներ հասնում են միջազգային կամ ազգային մակարդակների կարիք է առաջանում այլ ֆինանսավորման աղբյուրների:

Տեղական մակարդակում այս աշխատանքային ոճի գերկայությունը պայմանավորված է Ավստրիայում տեղական երիտասարդական աշխատանքի երկար ավանդույթով: Երիտասարդների ծնողները, այդ վայր ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները,տեղական գործարարները, իրենք են մասնկցել իրենց երիտասարդ տարիներին նման աշխատանքների, այնպես, որ նարնք գիտեն դա ինչ է եւ պատրաստ են աջակցել: երիտաասրդների չպեստք է իրենց ծնողներին բացատրեն, թե ինչ է իրենից ներկայացնում այդ աշխատանքը, եւ ավելին ծնողները իրենք կարող են կիսել իրենց փորձը եւ ուղղորդել երիտասարդներին հիմնվելով իրենց անձանական փորձի վրա: Այսպիսով համակրգը ինքն է ապահովում իր կայունությունը եւ շարունակեիությունը (տեսանելիություն, ընդհանուր գիտակցություն, տեղական ԶԼՄ-ների կողմից լուսաբանում, տեղական բիզնեսների աջակցություն եւ այլն):



Երիտասարդականաշխատողի հետագիծը զարգանումէ ըստ բնականոն ընթացքոի եւ ուռսուցանման,խորհդատվության եւ աջակցության խնդիրները լուծվում են փուլ առ փուլ, ըստ համապատասխան կարինքների ձեւավորման:

AufZaq ազգային կվալիֆիկացիոն համակարգ

AufZaq ազգային կվալիֆիկացիոն համակարգ երիտասադական դաշտում տրամադրվող ուսուցողական ծրագրերի համար /http://www.aufzaq.at/: Բոոր կզմակերպությունները որոնք տրամադրում են ուսուցողական դասընթացներ, որոնք համապատասխանում են կենտրոնի դրած չափանիշներին կարող են դիմել եւ ստանալ որոկավորման աստիճան: Որակավորումը թույլ է տալիս ավելի բարձր ճանաչում

ստանալ, ավելի մեծ աջակցություն ստանալ տեղական մարմինների կողմից,ինչպես անեւ դասընթացի մասնակցությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում տալիս է կրեդիտների ստանալու հանարավորություն:

Ազգային մակարդակով երիտասարդական աշխատանքի ճանաչման եւ գանահատման մեխանիզմներ

Տարեկան մրցույթներ տարվա լավագույն ծրագրերի եւ կազմակերպությունների համար: Մրցանակաբաշխություններ որոնք կազմակերպում են հասարակական եւ պետական սեկտորների համագործակցությամբ:

Գեր-փոքր տեղական ծրագրերի մրցույթ, որոնց համար չի տրվում ֆինանսավորում: տեղերում գործող խմբերը իրենք ենհայթայթում ֆինանսավորումը, բայց ընդհանուր առմամաբ ծրագրերը կազմակերպվում են մի թեմայով եւ վեևջում բոլորը դրվում են մրցանակաբաշխության եւ լավագույները ստանում են մեծ մրցանակներ: Այս սխման հնարավորություն է տալիս միաժամանակ տարբեր տեղերում կազմակերպել բազմաթիվ միջոցառուրմներ եւ լուսաբանել բոլորը իրար հետ, որպես մի մեծ ազագյին ծրագիր:



Աշխատանք գյուղական երիատասրդության հետ

Գյուղական երիտասարդության հետ աշխատանքում հաշվի են առնվում սեզոնային յուրահատկությունները: Բերքահավաքի եւ այլ կարեւոր աշխատանքային փուլերում ծրագրեր չեն կազմակերպվում : Ընդհակառակը՝ ձմեռային շրջանում բբ աշխատանքներ չկան կամզակերպվում են ակտիվ ուսուցանման գործընթացներ եւ այլ ծրագրեր:

Գյուղական երիտասարդական աշխատանքի կազմակերպման մեջ ներգրավվում են բազմաթիվ տեղական կառույցներ: Օրինակ՝ տեղերում գործող տուրիստական կառույցները կարող են տրամադրել տարածքային միւոցներ, տեղական արտադրողները աջակցում են իրենց արտադրանքով:

Ավստրիայում գյուղական երիտասարդությունը համարվում է առավել լավ պայմաններում եւ հաճախ ավելի բարձր կենսամակարդակ ունեցող թիրախ քան քաղաքաբնակները: Գյուղական ծրջանները ունեն ավելի լավ պայմաններ,քանի որ այտեղ վելի քիչ մարդ է ապրում, կան ավելի շատ տարածքներ եւ ավելի հանգիստ պայմաններ, ինչես անեւ ավելի քիչ եւ էմիգրանտները եւ կրթական պայամնները ավլեի լավ են քանի որ աշակերտներին հնարավոր է ավելի շատ ինդիվիդուալ ուշարություն հատկացնել:

4H միջազգային ցանցը միավորում է ֆերմերակն կազմակերպություններին: Ավստրիական կազմակերպությունները օգնում են այլ երկրենորում այդ ցանցի տարածմանը եւ աջակցության ծրագրերը կազմակեպում են այս կառույցների միջոցով:

Ռեկոմենդացիաներ

Երիտասարդական Աշխատանքի ֆինանսավորման հնարավոր մեխանիզմ - Մշակել crager.am ֆորմատով երիտասարդական աշխատանքի ֆինանսավորման համակարգ Սփյուռքի աղբյուրներից ֆինանսավորման համար:

Որակավորման անհրաժեշտություն պետական ֆինանսավորմամբ իրականցվող երկարաժամկետ կրկնվող ուսուցողական ծրագրերի համար Աուֆզաք համակարգի օրինակով:

Նպաստել 4H ֆերմերական կամակերպությունների ցանցին Հայկական համայնքային կառույցների ներգրավմանը եւ գտնել Արեւմտյան եվրոպական երկրնրի համապատասխան կառույցներ, որոնք կնպաստեն դրանց զարգացմանը: